ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



ՎԱՆԱՁՈՐ - 2023

Բովանդակություն

Նախաբան	2
Ֆինանսական միջոցներ	4
Արդյունաբերություն	16
Առևտուր և սպասարկում	18
Սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրեր	20
Սուբվենցիոն ծրագրեր	20
Զբոսաշրջություն	22
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	22
Քաղաքաշինություն	24
Տրանսպորտ, Ճանապարհաշինություն	27
Ջրամատակարարում	32
Գազամատակարարում	33
Էներգետիկա	34
Գյուղատնտեսություն	35
Բնապահպանություն	38
Հողաշինություն և հողօգտագործում	43
Տարածքային կառավարում	45
Տեղական ինքնակառավարում	46
Համայնքային ծառայություն	47
Կրթություն	48
Մշակույթ, սպորտ և երիտասարդության հարցեր	52
Առողջապահություն	58
Սոցիալական ապահովություն	69
Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանություն	73
Արտաքին կապեր, միջազգային կազմակերպություններ	77
Տեղեկատվության և հասարակայնության հետ կապեր	83
Քաղպաշտպանություն և արտակարգ իրավիճակներ	84
Զորակոչ և զորհավաքային նախապատրաստություն	86
Աշխատանք կադրերի հետ և աշխատանքային կարգապահություն	87
Մարզպետի կողմից ընդունված որոշումները և կարգադրությունները	88
Մարզպետարան մուտք գործած գրությունների ընթացքը	89

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Ընդհանուր տեղեկություններ

Աշխարհագրական դիրքը՝	Հայաստանի Հանրապետության հյուսիս
Բնակավայրերը՝	ծովի մակերևույթից 520-ից 1800մ բարձրության վրա
Պետական սահմանը՝	Վրաստանի Հանրապետության հետ՝ 110 կմ
Տարածությունը՝	3799 քառ. կմ

Բնակչության թիվը՝ 211.6 հազար մարդ, այդ թվում՝

- քաղաքային 124.1 հազար մարդ,
- գյուղական 87.5 հազար մարդ,

Մարզի համայնքների թիվը՝ 11
Բնակավայրերի թիվը՝ 128

Մարզկենտրոնը	ք. Վանաձոր
➢ Կառավարման ձևը	տարածքային կառավարում

Ազգային կազմը

- հայեր 97.0 %,
- ռուսներ 1.5 %,
- հույներ 1.0 %,
- այլ ազգություններ 0.5 %:

Սահմանամերձ բնակավայրերը՝ 5 (Ջիլիզա, Պաղաղբյուր, Ապավեն, Արծնի, Ձորամուտ)

2022 թվականի ընթացքում տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման բնագավառում աշխատանքային գործունեության հիմնական ուղղություններն են հանդիսացել.

❖ Տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բնագավառում օրենսդրությամբ մարզպետին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման ապահովումը.

❖ Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի համագործակցության արդյունավետության բարձրացումը.

❖ Իրավական հսկողությունը մարզի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ և ՏԻՄ-երին մեթոդական, խորհրդատվական, գործնական օգնության կազմակերպումը.

❖ Համայնքներում առկա խնդիրների լուծմանը քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցության առավել ակտիվ ներգրավումը:

Հաշվետու ժամանակաշրջանում Լոռու մարզպետարանի աշխատակազմի 2022թ. աշխատանքային ծրագրի համաձայն մարզի տարածքային կառավարման իրականացման հիմնական նպատակային դրույթներ են եղել՝

❖ Պետական և տեղական բյուջեների միջոցների հավաքագրմանն ուղղված միջոցառումների արդյունավետության բարձրացումը:

❖ Կրթական համակարգի բարեփոխումների ծրագրի իրականացումը:

❖ Արտադրական հզորությունների վերագործարկումը և նորերի շահագործումը՝ առաջնահերթությունը տալով թեթև արդյունաբերությանը, լեռնամետալուրգիային, հանքարդյունաբերությանը և սննդի արդյունաբերություններին:

❖ Փոքր և միջին ձեռներեցության զարգացման խթանում և աջակցումը:

❖ Տրանսպորտային փոխադրումների կանոնակարգումը և ընդլայնումը:

❖ Կապի նոր ծառայությունների բացմանը աջակցումը և սպասարկման որակի բարելավման խթանումը:

❖ Մասնավոր գյուղացիական տնտեսություններին վարկերի հատկացման աջակցումը, պետական աջակցության ծրագրերի իրազեկումը:

❖ Բնական աղետների հետևանքների մեղմացմանն ուղղված միջոցառումների կազմակերպումը:

❖ Առողջապահության բնագավառի աշխատանքների բարելավումը:

❖ ՀՀ կառավարության աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի իրագործմանն ուղղված աշխատանքների կազմակերպումը:

❖ Նոր աշխատատեղերի ստեղծման միջոցով աղքատության մակարդակի իջեցումը:

❖ Քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենքով նախատեսված միջոցառումների իրականացումը:

❖ 2022 թվականին մարզի 2 համայնքներում անցկացվել են՝ Ալավերդի, Տաշիր միավորված համայնքների համամասնական ընտրակարգով համայնքների ավագանիների ընտրություններ, ինչպես նաև Լոռի Բերդ և Գյուլագարակ համայնքների համամասնական ընտրակարգով ավագանու հերթական ընտրություններ:

❖ Համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար հայտարարվել են 250 մրցույթներ, որոնցից կայացել են 186-ը: Մրցույթներին մասնակցելու համար դիմել են 299 քաղաքացիներ: Մրցույթների արդյունքում հաղթող ճանաչվել և թափուր պաշտոններում նշանակել են 177-ը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ
2022Թ. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԸՍՏ ՀԱՐԿԱՏԵՍԱԿՆԵՐԻ

Մարզի համայնքների բյուջեներով 2022թ կտրվածքով նախատեսված եկամուտները ապահովվել են 118.5%-ով կամ նախատեսված 10494.0 մլն. դրամ մուտքերի դիմաց հավաքագրվել է 12435.6 մլն. դրամ, որից վարչական բյուջեի եկամուտները և պաշտոնական տրանսֆերտները փաստացի կազմել են 9525.4 մլն. դրամ, այդ թվում սեփական եկամուտները՝ 3135.3 մլն. դրամ (ներկայացվող տեղեկատվության մեջ Վանաձոր համայնքի պլանային ցուցանիշը ներառված չէ, քանի որ 2022թ. համայնքի ավագանին բյուջե չէր հաստատել):

(հազար դրամ)

		2021թ. Բյուջե			2022թ. Բյուջե			2022թ-ի աճը 2021թ-ի նկատ.	2022թ-2021թ-ի փաստ. նկատ. (%)
հ/հ	Եկամուտների անվանումը	պլան	փաստ.	կատ %	պլան	փաստ.	կատ %		
1	Հողի հարկ	157739.9	141870.3	89.9	148947.7	108695.5	73.0	-33174.8	76.6
2	Գույքահարկ շինությունների գծով	30845.9	59021.1	191.3	10996.5	35997.5	327.4	-23023.6	61.0
3	Գույքահարկ փոխադրամիջոցների գծով	1020273.0	1113268.1	109.1	733177.6	1386332.9	189.1	273064.8	124.5
4	Անշարժ գույքի հարկ	378156.9	244940.5	64.8	324085.0	344795.0	106.4	99854.4	140.8
5	Պետական տուրք	56037.0	73146.5	130.5	23800.0	81860.6	344.0	8714.1	111.9
6	Տեղական տուրք	119025.9	107745.5	90.5	51413.5	107293.1	208.7	-452.4	99.6
7	Գույքի վարձ. վճար	281134.6	300430.6	106.9	243667.7	323238.9	132.7	22808.3	107.6
8	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) այլ վճարներ	9080.0	6789.8	74.8	6150.0	10226.8	166.3	3437.0	150.6
9	Տեղական վճարներ	658358.9	577548.7	87.7	307414.2	578848.8	188.3	1300.1	100.2
	որից աղբահանության վճար	327425.5	276556.0	84.5	126935.8	268176.9	211.3	-8379.1	97.0
10	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ	10821.5	33025.8	305.2	15350.0	48586.1	316.5	15560.3	147.1
11	Մուտքեր տույժերից, տուգանքներից	4500.0	8155.9	181.2	6550.0	16650.0	254.2	8494.1	204.1
12	Ընթացիկ ոչ պաշտոնական	2619.0	3119.0	119.1	20749.0	20816.2	100.3	17697.2	667.4

	դրամաշնորհներ								
13	Այլ եկամուտներ	109979.4	133436.4	121.3	114190.4	92798.3	81.3	-40638.1	69.5
14	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	6590948.9	6587291.6	99.9	4313456.7	6338589.8	146.9	-248701.8	96.2
15	Պետ.բյուջ. պատվիր.լիազ.կատ. միջոց	45006.8	43340.4	96.3	8887.0	12321.5	138.6	-31018.9	28.4
16	Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	78170.7	53848.6	68.9	12556.8	18295.9	145.7	-35552.7	34.0
ԴԱՀԿ-ով տարված գումարներ բյուջեի վարչական մասից			967.9			776.4		-191.6	80.2
Ընդամենը վարչ. բյուջեի եկամուտներ		9552698.3	9486978.8	99.3	6341392.1	9525346.9	150.2	38368.0	100.4
17	Տարեսկզբի ազատ մնացորդ	70,462.4	70,462.4	100.0	467,850.4	467,850.4	100.0	397388.0	664.0
Ընդամենը վարչ. բյուջեի մուտքեր		9623160.7	9557441.3	99.3	6809242.5	9993197.3	146.8	435756.0	104.6
1	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	14444.5	10881.9	75.3	54320.1	9292.5	17.1	-1589.5	85.4
2	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից (սուբվենցիաներ)	2959272.9	1415045.7	47.8	3377337.3	2461527.8	72.9	1046482.1	174.0
3	Հատկացումներ պահուստ. ֆոնդից	1044059.3	686035.1	65.7	911844.6	635327.5	69.7	-50707.6	92.6
4	Այլ մուտքեր	503230.0	430321.2	85.5	720981.1	439409.9	60.9	9088.7	102.1
	Ֆոնդային բյուջեի եկամուտներ	4521006.7	2542284.0	56.2	5064483.1	3545557.7	70.0	1003273.7	139.5
5	Տարեսկզբի ազատ մնացորդ	2284897.7	2284897.7	100.0	1870166.6	1870166.6	100.0	-414731.1	81.8
Ֆոնդային բյուջեի մուտքեր		6805904.4	4827181.6	70.9	6934649.7	5415724.2	78.1	588542.6	112.2
Ընդամենը վարչական բյուջեի սեփական եկամուտներ		2835952.9	2799379.2	98.7	1985742.6	3135323.5	157.9	335944.2	112.0
Ընդամենը բյուջեի եկամուտներ		13029645.7	11343227.7	87.1	10494030.6	12435577.1	118.5	1092349.4	109.6
Ընդամենը բյուջեի մուտքեր		15385005.8	13698587.8	89.0	12832047.6	14773594.0	115.1	1075006.2	107.8

Վարչական բյուջեի եկամուտների պլանը մարզում կատարվել է 150.2%-ով՝ նախորդ տարվա 99.3%-ի դիմաց (Վանաձոր համայնքի պլանային ցուցանիշները ներառված չեն): Իսկ Ֆոնդային բյուջեի եկամուտների պլանը մարզում կատարվել է 70,0%-ով՝ նախորդ տարվա 56.2%-ի դիմաց:

Համայնքների սեփական եկամուտները 2022թ. կտրվածքով կազմել է 3135.3 մլն դրամ, 2021թ. կտրվածքով կազմել է 2799,4 մլն դրամի դիմաց, կամ եկամուտների ինդեքսի աճը 2021թ-ի նկատմամբ կազմել է 112.0%, բացարձակ աճը 2021թ.-ի նկատմամբ՝ 335.9 մլն. դրամ:

Պետք է նշել, որ նախորդ տարվա համեմատությամբ սեփական եկամուտների աճ են գրանցել բոլոր համայնքներում, որից՝ առավել բարձր հավաքագրում է ապահովել Թումանյան համայնքը՝

157.3%, Լերմոնտովո համայնքը՝ 151.2%, Ստեփանավան և Գյուլագարակ համայնքները 126.7%, Ֆիոլետովո համայնքը՝ 121.8% և այլն:

	Համայնքի անվանումը	սեփական եկամուտներ		2022թ-ի աճը 2021թ-ի նկատմ.%	2022թ-ի աճը 2021թ-ի նկատմ.
		2021թ. փաստացի	2022թ. փաստացի		
1	Վանաձոր	1,195,044.5	1,313,012.0	109.9	117967.5
2	Լերմոնտովո	11,040.2	16,695.9	151.2	5655.7
3	Ֆիոլետովո	10,096.4	12,294.2	121.8	2197.8
4	Փամբակ	100,176.8	111,384.3	111.2	11207.5
5	Սպիտակ	320,690.6	365,460.4	114.0	44769.8
6	Տաշիր	308,196.8	333,829.1	108.3	25632.3
7	Ալավերդի	450,670.3	467,365.5	103.7	16695.2
8	Թումանյան	47,555.7	74,815.8	157.3	27260.1
9	Ստեփանավան	178,765.0	226,444.7	126.7	47679.7
10	Գյուլագարակ	71,609.6	90,708.1	126.7	19098.6
11	Լոռի Բերդ	105,533.3	123,313.4	116.8	17780.1
	Ընդամենը	2,799,379.2	3,135,323.5	112.0	335944.2

Եթե դիտարկենք մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման մեջ ըստ համայնքների տեսակարար կշիռների՝ ապա կտեսնենք, որ եկամուտների գերակշիռ մասը ապահովում է Վանաձորը 41.9%, ապա Ալավերդին՝ 14.9%, Սպիտակը՝ 11.7%, Տաշիրը՝ 10,6%, Ստեփանավանը՝ 7.2% և այլն:



Սեփական եկամուտների գծով 2022թ. համար նախատեսվել են 1985.7 մլն դրամ (առանց Վանաձոր համայնքի), փաստացի կատարումը կազմել է 3135.3 մլն. դրամ, կամ կատարողականը կազմել է 157.9%:

Մարզի 1 բնակչի հաշվով սեփական եկամուտների գծով ցուցանիշը 2021թ. համար կազմել է 12960 դրամ (216.0 հազ. մարդ), 2022թ. համար կազմել է 14810 դրամ (211.7 հազ. մարդ) :



2022 թվականին մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների ընդհանուր ծավալում հողի հարկի փաստացի տեսակարար կշիռը կազմել է 3.5%, գույքահարկինը՝ 45.4%, գույքի վարձակալության վճարները (այդ թվում պահուստային հողերի վարձավճարներ) 10.3%, տեղական տուրքը՝ 3.4%, պետական տուրքը՝ 2.6%, անշարժ գույքի հարկը՝ 11.0%, այլ եկամուտները՝ 34.8% նախորդ տարվա համապատասխանաբար՝ 5.1%, 41.9%, 10.7%, 3.4%, 2.6% , 8.7% և 27.6%-ի դիմաց, ինչը խոսում է այն մասին, որ 2022թ. սեփական եկամուտների տեսակարար կշռում ավելացել է գույքային հարկերի բաժինը, որը պայմանավորված է հիմնականում փոխադրամիջոցների քանակի ավելացմամբ, անշարժ գույքի հարկի ներդրմամբ և հետևաբար հարկի գումարի ավելացմամբ:

2022թ. հողի հարկի 148.9 մլն. դրամ պլանի դիմաց հավաքագրվել է ընդամենը 108.7 մլն դրամ, կամ 73.0%, (2021թ.ի համեմատությամբ հավաքագրումը կազմել է 76.6%) որը նախորդ տարվա փաստացի մուտքերից պակաս է 33.2 1մլն. դրամով: Մարզի 1 բնակչի հաշվով հողի հարկի հավաքագրման ցուցանիշը 2021թ. համար կազմել է 656 դրամ, 2022թ.-ին՝ նախատեսվել է 513 դրամ:

Հողի հարկի հավաքագրման մակարդակն ունի այսպիսի տեսք.



Փոխադրամիջոցների գույքահարկի գծով 2022թ. համար նախատեսվել է 733.2 մլն դրամ (առանց Վանաձոր համայնքի), փաստացի կատարումը կազմել է 1386.3 մլն. դրամ, կամ կատարողականը կազմել է 189.1%, (2021թ.ի համեմատությամբ հավաքագրումը կազմել է 124.5%) նախորդ տարվանից ավելի է հավաքագրված 273.1 մլն. դրամ: Մարզի 1 բնակչի հաշվով փոխադրամիջոցների գույքահարկի հավաքագրման ցուցանիշը 2021թ. համար կազմել է 5154 դրամ, 2022թ. –ին՝ 6549 դրամ:

Փոխադրամիջոցների գույքահարկի հավաքագման գործընթացը լավ է ընթացել մարզի կտրվածքով կազմելով՝ 189.1%, ըստ համայնքների առավել բարձր ցուցանիշներ են ապահովել՝ Տաշիր՝ 133.1%, Սպիտակ՝ 128.5%, Գյուլագարակ՝ 106.4%, Ֆիոլետովո՝ 103.6% և այլն:

	Համայնքի անվանումը	Գույքահարկ փոխադրամիջոցների համար		
		ծրագիր տարեկան	փաստացի	կատ. %-ը
1	Վանաձոր	0.0	658,955.9	
2	Լերմոնտովո	3,640.6	3,530.0	97.0
3	Ֆիոլետովո	5,074.9	5,257.9	103.6
4	Փամբակ	93,930.2	50,732.6	54.0
5	Սպիտակ	145,682.0	187,205.5	128.5
6	Տաշիր	95,508.7	127,148.5	133.1
7	Ալավերդի	205,301.2	184,610.8	89.9
8	Թումանյան	31,757.7	27,861.7	87.7
9	Ստեփանավան	96,208.0	86,736.0	90.2
10	Գյուլագարակ	31,804.3	33,830.2	106.4
11	Լոռի Բերդ	24,270.0	20,463.9	84.3
	Ընդամենը	733,177.6	1,386,332.9	189.1

Նախորդ տարվա համեմատությամբ փոխադրամիջոցների գույքահարկի ծավալները աճել են բոլոր համայնքներում:

	Համայնքի անվանումը	Գույքահարկ փոխադրամիջոցների համար		2022թ-ի աճը 2021թ-ի նկատմ.%	2022թ-ի աճը 2021թ-ի նկատմ.
		2022թ.	2021թ.		
1	Վանաձոր	658,955.9	532,919.4	123.7	126036.5
2	Լերմոնտովո	3,530.0	2,386.6	147.9	1143.4
3	Ֆիոլետովո	5,257.9	4,339.7	121.2	918.2
4	Փամբակ	50,732.6	38,914.2	130.4	11818.4
5	Սպիտակ	187,205.5	157,660.8	118.7	29544.7
6	Տաշիր	127,148.5	107,073.8	118.7	20074.7
7	Ալավերդի	184,610.8	136,955.4	134.8	47655.3
8	Թումանյան	27,861.7	21,455.9	129.9	6405.7
9	Ստեփանավան	86,736.0	69,515.0	124.8	17220.9
10	Գյուլագարակ	33,830.2	24,110.8	140.3	9719.3
11	Լոռի Բերդ	20,463.9	17,936.2	114.1	2527.7
	Ընդամենը	1,386,332.9	1,113,268.1	124.5	273064.8

Վերջին 6 տարիների ընթացքում գույքահարկի (շինությունների և փոխադրամիջոցների գծով գույքահարկ) հավաքագրման մակարդակն ունի այսպիսի տեսք.



2021թվականի հունվարի 1-ից ներդրվել է անշարժ գույքի հարկը: Համայնքների 2021թ. բյուջեներով նախատեսված 378.4 մլն. դրամ պլանի դիմաց հավաքագրվել է ընդամենը 249.9 մլն. դրամ, կամ կատարվել է 64.7%-ով, 2022թ. նախատեսվել է 324.1 մլն. դրամ պլան (առանց Վանաձոր

համայնքի), փաստացի կատարումը կազմել է 344.8 մլն դրամ կամ 106.4%, նախորդ տարվա նկատմամբ կատարողականը կազմել է 140.8% կամ ավել է հավաքագրվել 99.9 մլն. դրամ:

Անշարժ գույքի հարկի հավաքագրման մակարդակն ըստ համայնքների ունի այսպիսի տեսք.



❖ 2022թ. ընթացքում համայնքների հողի և գույքի վարձակալության վճարների 243.7 մլն. դրամ պլանի դիմաց (առանց Վանաձոր համայնքի) հավաքագրվել 323.2 մլն. դրամ, կամ կատարողականը կազմել է 132.7%, (2021թ.ի համեմատությամբ հավաքագրումը կազմել է 107.3%, որը նախորդ տարվանից ավել է հավաքագրված 22.8 մլն. դրամ:



❖ Տեղական տուրքերի փաստացի հավաքագրումը 2022թ. կազմել է 107.3 մլն. դրամ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 107.8 մլն. դրամի դիմաց, փաստացի հավաքագրումը նվազել է 0.5 մլն. դրամով:

❖ 2022թ. պետական տուրքի գանձումը կազմել է 81.9 մլն. դրամ, փաստացի հավաքագրումը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 8.7 մլն. դրամով:

❖ 2022թ. պետական բյուջեից մարզի համայքներին նախատեսվել է 6338,6 մլն. դրամ ֆինանսական համահարթեցման դոտացիա, որը հաշվետու ժամանակաշրջանի կտրվածքով ֆինանսավորվել է 100%-ով, 2023թ. համար նախատեսվել է 6843.7 մլն. դրամ դոտացիա, 2022թ. նկատմամբ 505.1 մլն. դրամ ավելի:

❖ Սուբվենցիաների հատկացման համամասնականության մեխանիզմի կիրառումը համայնքների զարգացմանն ուղղված գործընթացներին նոր տեմպ է հաղորդել, որի արդյունքում համայնքների բյուջեների տնտեսված միջոցները սկսել են ավելի արդյունավետ օգտագործվել, քանի որ համայնքը իր սուղ միջոցները ներդնելով համայնքային ծրագրերի իրականացմանը պետությունից ստանում է աջակցություն և սեփական քիչ միջոցների արդյունավետ կառավարում է իրականացնում ի շահ համայնքի:

❖ 2021 թվականին ՀՀ պետական բյուջեից սուբվենցիա ստանալու համար հայտ են ներկայացրել 39 համայնք, 111 ծրագրերով ամբողջական փաթեթ՝ 5 մլրդ 181 մլն դրամի չափով:

❖ 2022 թվականին ՀՀ պետական բյուջեից սուբվենցիա ստանալու համար հայտ են ներկայացրել 14 համայնք, 88 ծրագրերով ամբողջական փաթեթ՝ 8 մլրդ 913 մլն դրամի չափով նախնական արժեքով:

❖ 2022թ. ընթացքում ՀՀ կառավարության որոշումներով մարզի համայնքներին հատկացվել է 2 456,5 մլն դրամ կապիտալ սուբվենցիա, որը ամբողջությամբ ֆինանսավորվել է:

❖ *2022թ. ընթացքում ՀՀ կառավարության որոշումներով մարզի համայնքներին հատկացվել է.*

- ✓ 16123,4 հազ. դրամ ընթացիկ սուբվենցիա երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվագարանների սովորողների ուսման վարձավճարի փոխհատուցման նպատակով , որն ամբողջությամբ ֆինանսավորվել է:
- ✓ 2. 6 768,9 հազ. դրամ ընթացիկ սուբվենցիա դաստիարակների վերապատրաստման նպատակով, որից փաստացի ֆինանսավորվել է 2172,5 հազ. դրամ, 101 դաստիարակների վերապատրաստման համար:

- ✓ 15634.6 հազ. դրամ ընթացիկ դրամաշնորհներ համայնքների նախադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող, զարգացման առանձնահատուկ կարիք ունեցող 1.5-5 տարեկան երեխաների նախադպրոցական կրթությունն ապահովելու նպատակով , որից փաստացի ֆինանսավորվել է 4121,8 հազ. դրամ, 29 երեխաների համար:

- ✓ Մարզի համայնքների վարչական բյուջեների ծախսերը 2022թ-ի համար նախատեսվել են 6369.1 մլն. դրամ (առանց Վանաձոր համայնքի), 31.12.2022թ. դրությամբ փաստացի վճարվել է 8150.3 մլն. դրամ, կամ 128.0%, ֆոնդային բյուջեի ծախսերը նախատեսվել 6507.4 մլն. դրամ, որից վճարվել է 4489.1 մլն. դրամ, կամ ծախսերը ֆինանսավորվել է 69.0%-ով:

հազար դրամ

Հ/Հ	Ծախսերի անվանումը	Բյուջեով նախատեսված	փաստացի վճարում	կատարման %	Տեսակարար կշիռը %
1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	2226537.2	2600066.5	116.8	31.9
2	ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	1400.0	400.0	28.6	0.0
3	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	206287.2	288059.3	139.6	3.5
4	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	470074.4	743608.9	158.2	9.1
	այդ թվում աղբահանություն	415068.9	674460.1	162.5	8.3
5	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	448714.6	495407.3	110.4	6.1
6	ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ՝	3710.0	3210.0	86.5	0.0
7	ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ և ԿՐՈՆ	435949.6	717419.1	164.6	8.8
8	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	1477024.1	2601365.9	176.1	31.9
9	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	84820.0	65418.5	77.1	0.8
10	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ	1014621.2	635327.5	62.6	7.8
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում*	**911844.6**	635327.5	69.7	7.8
Ընդամենը վարչական բյուջեի ծախսեր		6369138.4	8150283.0	128.0	67.9
1	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	452127.4	316581.2	70.0	7.1
2	ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	1500.0	924.0	61.6	0.0
3	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, այդ թվում	2740003.3	1947293.7	71.1	43.4
	Գյուղատնտեսություն	447784.4	215204.2	48.1	4.8
	Վառելիք և էներգետիկա	170425.0	131205.9	77.0	2.9
	Տրանսպորտ, ճանապարհաշինություն	2649035.8	2157696.9	81.5	48.1
	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	-533874.3	-561213.4	105.1	-12.5

4	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	82654.2	70425.4	85.2	1.6
	այդ թվում աղբահանություն	15280.0	18247.1	119.4	
5	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	2026344.3	1410380.3	69.6	31.4
6	ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	2200.0	2138.7	97.2	0.0
7	ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ և ԿՐՈՆ	778385.5	511609.0	65.7	11.4
8	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, այդ թվում	424139.8	229763.8	54.2	5.1
	Նախադպրոցական կրթություն	358600.9	193661.5	54.0	4.3
Ընդամենը ֆոնդային բյուջե		6507354.5	4489116.1	69.0	37.4
ԸՆԴԱՄԵՆԸ ԲՅՈՒՋԵ		11964648.3	12004071.7	100.3	

❖ ՀՀ Լոռու մարզի համայնքների բյուջեների ծախսերը 2022թ. համար նախատեսվել են 11964.6 մլն դրամ, փաստացի կատարումը կազմել է 12004.1 մլն. դրամ, կամ կատարողականը կազմել է 100.3%:

❖ Մարզի 11 համայնքների 2022թ.բյուջեների վարչական ծախսերի մեջ աշխատավարձերի գծով ծախսերը կազմել է 1887.3 մլն դրամ, որը կազմում է վարչական բյուջեի ծախսերի մոտ 23.2%-ը, կամ ապարատի պահպանման ծախսերի 87.5%-ը: Համայնքներում վարչական ծախսերի ընդհանուր ծավալում բարձր է մնում աշխատանքի վարձատրության հոդվածով կատարվող ծախսերի տեսակարար կշիռը:

❖ Մարզի համայնքների բյուջեների աշխատավարձի գծով պարտքերը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 2044.8 հազար դրամ:

❖ Ըստ ոլորտների բյուջեի վարչական մասի ծախսերի մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն կրթության բնագավառին ուղղված ծախսերը՝ 31.9.%, այդ թվում նախադպրոցական կրթությանն ուղղված ծախսերը՝ 19.4%-ը:

❖ Աղբահանության գծով համայնքային բյուջեներով որպես ընթացիկ ծախս 2021թ. նախատեսվել 650.2 մլն. դրամ, փաստացի կատարվել է 612.6 մլն. դրամ, 2022թ. բյուջեներով նախատեսվել է 415.1 մլն. դրամ, փաստացի կատարվել է 674.5 մլն. դրամ, կամ ծախսի համեմատականը կազմել է 110.1%:

❖ Աղբահանության գծով մարզում 2022թ. ծախսվել է 692.7 մլն. դրամ, որից վարչական բյուջեով՝ 674.5 մլն. դրամ, ֆոնդային բյուջեով՝ 18.2 մլն. դրամ: Աղբահանության գծով ընթացիկ ծախսը կազմել է վարչական բյուջեի ծախսերի ընդհանուր գումարի 8.3.%-ը, կամ մարզում 1 բնակչի հաշվով ծախսվող միջին գումարը կազմում է 3186 դրամ:

❖ Սոցիալական պաշտպանության բնագավառում մարզի համայնքներում ծախսը 2022թ. կազմել է 65.4 մլն. դրամ կամ վարչական ծախսերի 0.8%-ը:

2022 թվականին պետական բյուջեից ֆինանսավորված գումարների վերաբերյալ

2022 թվականին ՀՀ Լոռու մարզպետարանին պետական բյուջեից տարբեր ծրագրերով հատկացնել է 11957511.6 հազ. դրամ, փաստացի ծախսվել է 11794123.3 հազ. դրամ, կամ տարբերությունը կազմել է 163388.3 հազ. դրամ:

Անվանում	2022թ. նախատեսված	2022թ. կատարված	Տարբերություն
ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի պահպանում	584521.1	577171.6	7349.5
Կրթություն	8267153.2	8152499.3	114653.9
Մշակույթ	41146.4	41146.4	0
Այլ ծրագրեր	3064690.9	3023306.0	41384.9
Ընդամենը	11957511.6	11794123.3	163388.3

Մարզպետարանի պահպանման ծախսեր նախատեսված է 584521,1 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 577171,6 հազ. դրամ, կամ տնտեսումը կազմում է 7349,5 հազ. դրամ, որից «էներգետիկ ծառայություններ» հոդվածով 1987,8 հազ. դրամ, «Կապի ծառայություններ» հոդվածով՝ 3071,4 հազ. դրամ, «Ներքին գործուղումներ» հոդվածով՝ 1400,1 հազ. դրամ, այլ հոդվածներով՝ 890.2 հազ. դրամ:

Կրթության ոլորտի ֆինասավորում նախատեսված 8,267,153.2 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 8,152,499.3 հազ. դրամ, կամ տարբերությունը կազմել է 114,653.9 հազ. դրամ:

Անվանում	2022թ. նախատեսված	2022թ. կատարված	Տարբերություն
Հանրակրթական ուսուցում	7988620.0	7918062.0	70558.0
Նախադպրոցական կրթություն	62154.0	62154.0	0
Մանկավարժների և դպրոցական երեխաների տրանսպորտային ծախսերի փոխհատուցում	69,077.0	54077.1	14999.9
Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների հերթական ատեստավորման ենթակա ուսուցչի վերապատրաստում	31248.0	21255.3	9992.7
Ատեստավորման նոր համակարգի ներդրում՝ ուղղված ուսուցիչների որակի բարձրացմանը/ կամավոր ատեստավորում/	57854.2	54521.0	3333.2
Ատեստավորման արդյունքում որակավորման տարակարգ ստացած մանկավարժներին հավելավճարի տրամադրում	58200.0	42429.9	15770.1
Ընդամենը	8267153.2	8152499.3	114653.9

Մշակույթի ոլորտում նախատեսված է 41146.4 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 41146.4 հազ. դրամ:

Անվանում	2022թ. նախատեսված	2022թ. կատարված	Տարբերություն
Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային նվագարանների գծով ուսուցման վարձավճարի փոխհատուցում	16123.4	16123.4	0
Թանգարանային ծառայություններ	22486.0	22486.0	0
Մշակութային միջոցառումներ	2537.0	2537.0	0
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝	41146.4	41146.4	0

Այլ ծրագրերով նախատեսված 3064690.9 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 3023306.0 հազ. դրամ, կամ տարբերությունը կազմել է 41384.9 հազ. դրամ:

Անվանում	2022թ. նախատեսված	2022թ. կատարված	Տարբերություն
Այլընտրանքային աշխատանքային ծառայողներին դրամական բավարարում	870.0	870.0	0
Մարզային նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ձմեռային պահպանում և շահագործում	131800.0	131180.0	620.0
Կրթական օբյեկտների հիմնանորոգում	99806.4	97772.8	2033.6
Պետական հիմնարկների աշխատողներին սոցիալական փաթեթից օգտվողներին հատուցում	298800.0	293174.0	5626.0
Մարզերում առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծում/քարաթափում/	48801.4	31850.9	16950.5
Դպրոցական ամառային հանգստի կազմակերպում	1800	1800	0
Կապիտալ սուբվենցիա համայնքներին	2456459.5	2456447.9	11.6
Սոցիալական որոշ խմբերի 1.5-5 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության ապահովում	15634.6	4121.7	11512.9
Արտասահմանյան գործուղումներ	2450.1	2450.1	0
Վարչական սարքավորումներ	1500	1466.1	33.9
Նախադպրոցական ուսումնական հաստատությունների դաստիարակների վերապատրաստում	6768.9	2172.5	4596.4
Ընդամենը	3064690.9	3023306.0	41384.9

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Լոռու մարզի տնտեսության առաջատար ճյուղն է արդյունաբերությունը, որի հիմնական ուղղությունները մշակող և հանքագործական արդյունաբերություններն են (մասնավորապես՝ մետաղագործական, սննդի և թեթև, այդ թվում՝ Վանաձորում թեթև արդյունաբերությունը և մեքենաշինությունը, Ստեփանավանում, Տաշիրում և Սպիտակում՝ սննդի արդյունաբերությունը):

❖ 2022թ. մարզի արդյունաբերական ձեռնարկությունների կողմից թողարկված արտադրանքի ծավալը ընթացիկ գներով կազմել է 92414,9 մլն դրամ, նախորդ տարվա 2021թ. նույն ժամանակահատվածի 151 744,5 մլն դրամի դիմաց: Համադրելի գներով թողարկվել է 82820,2 մլն դրամի արտադրանք, արդյունաբերական արտադրանքի ծավալը աճը կազմել է նախորդ տարվա նկատմամբ 60,9% (Աճի նվազման ցուցանիշը պայմանավորված է հանքարդյունաբերության ոլորտում «Թեղուտ ՓԲԸ»-ի աշխատանքների կրճատմամբ:) Լոռու մարզի արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը ՀՀ-ի արդյունաբերության ընդհանուր ծավալում կազմել է 3,4% (7-րդ ցուցանիշը):

❖ Պատրաստի արտադրանքի իրացման ծավալը կազմել է 89978,5 մլն դրամ (աճի տեմպը 59,0%), որից ԱՊՀ երկրներ՝ 1240,9մլն դրամ (աճը՝ 75,7%, տեսակարար կշիռը իրացման ծավալում 1,4%), ԵԱՏՄ՝ 1 042,8 մլն դրամ (աճը 78,7%, տեսակարար կշիռը 1,6%), այլ երկրներ 23338,9 մլն դրամ (աճը՝ 23,5%, տեսակարար կշիռը իրացման ծավալում 25,9%): Ընդհանուր առմամբ մարզի արդյունաբերության պատրաստի արտադրանքի իրացման մեջ արտահաման տեսկարար կշիռը կազմել է 97,3%:

Մարզի արդյունաբերական հիմնական տեսակների ծավալները, աճերը և դրանց տեսակարար կշիռները 2022թ. հունվար- դեկտեմբերի արդյունքներով ունեն հետևյալ տեսքը.

- ✓ Հանքարդյունաբերություն և բացահանքերի շահագործում՝ 27264.3 մլն դրամ, ծավալի աճի ինդեքսը 29.5% և տեսակարար կշիռը 29.5%
- ✓ Մշակող արդյունաբերություն՝ 53832.5 մլն դրամ, ծավալի աճի ինդեքսը 112.3% և տեսակարար կշիռը 58.3%
- ✓ Էեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում՝ 9523.9 մլն դրամ, ծավալի աճի ինդեքսը 95.9% և տեսակարար կշիռը 10.4%
- ✓ Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում՝ 1694.2 մլն դրամ, ծավալի աճի ինդեքսը 118.0%, տեսակարար կշիռը 1.8%:

Մարզի արդյունաբերության 2022թ.-ի հիմնական տեսակների ծավալների (ընթացիկ գներով, մլն,դրամ) և տեսակարար կշիռների ընդհանուր պատկերն է.



Փաստորեն 2021թ.-ի հունվար-դեկտեմբերի համեմատությամբ հանքարդյունաբերության և էլեկտրաէներգիայի արտադրությունն ունեցել են ծավալների նվազում, մշակող արդյունաբերությունը և ջրամատակարարումը՝ ծավալների աճ:

2022թ. արդյունքներով մարզի արդյունաբերության տեսակարար կշիռը հանրապետության արդյունաբերության մեջ ըստ ճյուղերի ունի հետևյալ տեսքը.

- ✓ Հանքարդյունաբերություն և բացահանքերի շահագործում -17.9 %
- ✓ Մշակող արդյունաբերություն- 3.0 %
- ✓ Էեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում - 2.9 %
- ✓ Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում - 6.2 %

2022թ. մարզի մշակող արդյունաբերության մեջ ընթացիկ գներով ըստ ճյուղերի պատկերը հետևյալն է.

մլն.դրամ

հհ	***Ճյուղի անվանումը***	***2022թ,***	***2021թ,***	***Աճը %***	***Բացարձակ աճը***	***Տեսակարար կշիռը %***	
						2022թ,	***2021թ,***
1.	Սննդի արդյունաբերություն	39196,4	36055,2	108,7	+3141,2	72,8%	75,2%
2.	Խմիչքների արտադրություն	141,5	116,7	121,3	+24,8	0,3%	0,2%
3.	Հագուստի արտադրություն	8264,4	8545,3	96,7	-280,9	15,4%	17,8%
4.	Քիմիական արտադրություն	411,9	479,5	85,9	-67,6	0,8%	1,0%
5.	Մետաղե արտադրատեսակների արտադրություն	469,2	240,6	195,0	+228,6	0,9%	0,5%
6.	Էլեկտրական սարքավորումների արտադրություն	3394,5	1237,0	274,4	+2157,5	6,2%	2,6%

7.	մեքենաների և սարքավորումների արտադրություն	244,3	367,5	66,5	-123,2	0,5%	0,8%
8.	այլ	1710,3	879,6	194,4	+830,7	3,1%	1,9%
	Ընդամենը	**53832,5**	**47921,6**	**112,3**	**5910,9**	**100,0**	**100,0**

2022թ.-ին բացառությամբ հագուստի, քիմիական և մեքենաշինության ճյուղերի, մշակող արդյունաբերության մնացած ճյուղերն ապահովել են արտադրության ծավալի աճ: Մշակող արդյունաբերության առաջատար ճյուղը 2022թ.-ին սննդի արտադրությունն է, որը հանրապետության սննդի արտադրության մեջ կազմում է 5.8%:

ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

2022թ. արդյունքներով մարզի մանրածախ առևտրի օբյեկտներն ապահովել են 34042.5մլն. դրամի ապրանքաշրջանառություն, 2021թ. 32467.5մլն. դրամի ապրանքաշրջանառության դիմաց կամ առևտրի ծավալը աճել է և կազմել նախորդ տարվա 104,9%-ը (ՀՀ-ում տեսակարար կշիռը՝ 2,1%): Մարզում մանրածախ ապրանքաշրջանառության հիմնական աղբյուրներն են խանութները՝ 19665,4մլն. դրամի շրջանառությամբ, սպառողական ապրանքների և գյուղատնտեսական ապրանքների շուկաները՝ 2892,7մլն. դրամի շրջանառությամբ, կրպակները՝ 924,8մլն. դրամի շրջանառությամբ և առևտրի այլ օբյեկտները՝ 10559,6 մլն. դրամի շրջանառությամբ:



Մարզի մեկ շնչին ընկնող մանրածախ առևտրի ծավալը 2022թ. կազմել է 160881,4 դրամ միջին հանրապետական 552161,0 դրամի դիմաց կամ ցածր է ավելի քան 3,4 անգամ և 2021թ. 153076,4 դրամի դիմաց ավելացել է 7805,0 դրամով:

	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ,	2022թ,
Մանրածախ առևտուր (մլն. դրամ)	37635.6	43290.4	35635.9	33019.7	32467.5	34042.5

Ծառայությունների ծավալը մարզում 2022թ. կազմել է 29596,6մլն. դրամ, 2021թ. 22917,1մլն. դրամի դիմաց կամ ծառայությունների ծավալն աճել է 129%-ով, իսկ տեսակարար կշիռը կազմել է հանրապետական ծառայությունների 1.2%-ը:

Մեկ շնչին ընկնող ծառայությունների ծավալը 2022թ, մարզում կազմել է 139870,5 դրամ 2021թ. 108048,6. դրամի դիմաց և միջին հանրապետական 867532,5. դրամի դիմաց (կամ հանրապետականի 16.1%-ը):

	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ,	2022թ,
Մատուցվող ծառայությունների ծավալը (մլն.դրամ)	18214.7	20783.8	23740.4	20982.8	22917.1	29596.6

Լոռու մարզի մանրածախ ապրանքաշրջանառությունը և ծառայությունների ծավալը (2017-2022թթ.)



ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Զարգացման ծրագրեր

Մշակվել և ՀՀ ՏԿԵՆ է ներկայացվել 2017-2025թթ. Լոռու մարզի զարգացման ռազմավարության 2022թ. տարեկան գործունեության ծրագիրը, ըստ որի ընդհանուր ֆինանսավորումը կազմել է 66,697,513.4 հազար դրամ, որից փաստացի իրականացվել է 41,923,208.5 հազար դրամը:

Ընդհանուր առմամբ Լոռու մարզում 2022թ. ներդրումների ծավալը կազմել է ***51,309,940.188*** հազար դրամ:

		2022թ. Նախատեսված	2022թ. փաստացի իրականացված
ԸՆԴԱՄԵՆԸ՝ 2022Թ.		**66,697,513.4**	**41,923,208.5**
	որից՝		
	ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝	53,623,305.0	29,872,860.5
	սեփական միջոցներ	20,927,680.3	23,232,015.6
	վարկային միջոցներ	32,695,624.7	6,640,844.9
	Միջազգային կազմակերպություններ և դոնորներ	2,197,662.2	2,742,831.0
	Համայնքային բյուջե	4,615,176.2	4,495,154.0
	Մասնավոր ներդրողներ	6,261,370.0	4,812,360.0
	Այլ աղբյուրներ	0.0	0.0

Մարզում Ֆինանսական տարբեր աղբյուրներով չպլանավորված, բայց իրականացված աշխատանքների ծավալը կազմել է *9,3 մլրդ* դրամ:

Աջակցություն է տրամադրվել մարզի խոշորացված համայնքներին Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի շրջանակներում համայնքային զարգացման ծրագրերի մշակման գործընթացներին:

Սփյուռքի մասնագետներին մարզի համայնքներում կամավորական սկզբունքով աշխատանքներին ներգրավելու, ինչպես նաև համայնքներում վերականգնման (կամ նոր կառուցման) ենթակա ենթակառուցվածքների, գործարարությամբ զբաղվելու հնարավորությունների և ներդրումներ ներգրավելու համար Լոռու մարզի 25 համայնքներից 86 ծրագրային առաջարկներ են հավաքագրվել, մշակվել և ներկայացրվել սփյուռքի գլխավոր հանձնակատարին:

Սուբվենցիոն ծրագրեր

❖ 2022 թվականին հաստատվել է Լոռու մարզի 15 համայնքներից ներկայացված թվով 88 ծրագիր՝ ընդհանուր 8378.7 մլն. դրամ արժեքով, որից պետական բյուջեի մասնաբաժինը՝ նախնական մոտ 4.7 մլրդ դրամ: Վերոնշյալ ծրագրերը ընդգրկում են հետևյալ ոլորտները՝ ասֆալտապատում և տուֆ քարով սալարկում, խմելու ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցում, ոռոգման համակարգերի կառուցում, լուսավորության համակարգերի կառուցում և ֆոտովոլտային կայանների տեղադրում, գազաֆիկացում, մանկապարտեզների կառուցման և հիմնանորոգում, համայնքային սեփականություն հանդիսացող հասարակական շենքերի՝ համայնքային կենտրոնների, մշակույթի տների, հանդիսությունների սրահների և մարզաառողջարանային կենտրոնի, կառուցման և հիմնանորոգում, բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային գույքի նորոգում էներգախնայող միջոցառումների կիրառմամբ, այգիների, պուրակների, հրապարակների կառուցում և բարեկարգում, գյուղտեխնիկայի և գույքի ձեռքբերում: Այս պահի դրությամբ 40 ծրագիր արդեն իսկ ավարտվել է, 34 ծրագրի համար ընթացքի մեջ են շինարարական աշխատանքները, 4 ծրագրի համար ընթացքի մեջ է մրցութային գործընթացը, 10 ծրագրի համար դեռևս չի հայտարարվել մրցույթ:



2022 թվականի սուբվենցիոն ծրագրեր է իրականացվել հետևյալ ոլորտներում՝

- ❖ ***Ասֆալտապատման և տուֆ*** քարով սալարկման 34 ծրագիր մարզի 14 համայնքներում ընդհանուր մոտ 3698.532 մլն դրամ արժեքով,
- ❖ ***Խմելու ջրամատակարարման և ջրահեռացման*** համակարգերի կառուցման 6 ծրագիր մարզի 6 համայնքներում ընդհանուր մոտ 491.244 մլն դրամ արժեքով,
- ❖ ***Ոռոգման համակարգերի*** կառուցման 1 ծրագիր մարզի 1համայնքում ընդհանուր մոտ 397.590 մլն դրամ արժեքով,
- ❖ ***Լուսավորության համակարգերի կառուցման և ֆոտովոլտային*** կայանների տեղադրման 10 ծրագիր մարզի 9 համայնքներում ընդհանուր մոտ 506.753 մլն դրամ արժեքով,
- ❖ ***Գազաֆիկացման*** 2 ծրագիր մարզի 2 համայնքներում ընդհանուր մոտ 159.678 մլն դրամ արժեքով,
- ❖ ***Մանկապարտեզների հիմնանորոգման*** և անհրաժեշտ գույքի ձեռքբերման 9 ծրագիր մարզի 6 համայնքներում ընդհանուր մոտ 929.086 մլն դրամ արժեքով,

- ***Հասարակական շենքերի*** համայնքային կենտրոնների, մշակույթի տների, հանդիսությունների սրահների և մարզաառողջարանային կենտրոնի, կառուցման և հիմնանորոգման 10 ծրագիր մարզի 8 համայնքներում ընդհանուր մոտ 630.508 մլն դրամ արժեքով,
- ***Բազմաբնակարան շենքերի*** ընդհանուր բաժնային գույքի նորոգման՝ էներգախնայող միջոցառումների կիրառմամբ, 3 ծրագիր մարզի 3 համայնքներում ընդհանուր մոտ 730.639 մլն դրամ արժեքով,
- ***Այգիների, պուրակների, հրապարակների*** կառուցման և բարեկարգման 10 ծրագիր մարզի 8 համայնքներում ընդհանուր մոտ 592.001 մլն դրամ արժեքով,
- ***Գյուղտեխնիկայի, հակակարկտային*** կայանների և գույքի ձեռքբերման 4 ծրագիր մարզի 4 համայնքներում ընդհանուր մոտ 242.625 մլն դրամ արժեքով:

Զբոսաշրջություն

Զբոսաշրջությունը, որպես վերջին տարիներին Լոռու մարզի զարգացման ոլորտ եղել է մարզպետի և մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների ուշադրության կենտրոնում: Մարզի զբոսաշրջության մրցունակության և գրավչության բարձրացման, ներդրումների ներգրավման համար մարզպետի և մարզպետարանի ղեկավար անձնակազմի արտասահմանյան այցերի, միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա դեսպանների հետ հանդիպումների ընթացքում զբոսաշրջությունը ներկայացվել է որպես մարզի առաջնային արագ զարգացման ուղղություններից մեկը:

- 2022թ.-ին մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի նախաձեռնությամբ մեկնարկվել է «Լոռու մարզի զբոսաշրջության զարգացման 2023-2027 թթ. ռազմավարության» նախագծի մշակման աշխատանքները: Մարզի ռազմավարական փաստաթղթի մշակման աշխատանքների կազմակերպման համար Լոռու մարզպետի 2022թ.-ի հունիսի 16-ի թիվ 363-Ա որոշմամբ ստեղծվել է հանձնաժողով մարզպետի տեղակալ Հ.Ավետիսյանի գլխավորությամբ, որի կազմում ներգրավվել են պետական-հանրային, մասնավոր, հասարակական սեկտորի շահագրգիռ կառույցների պատասխանատուներ: Ռազմավարության մշակման աշխատանքներին աջակցություն կցուցաբերի Գերմանական GIZ կազմակերպությունը՝ միջազգային և տեղական փորձագետների ներգրավմամբ: Մշակված փաստատուղթը կհամապատասխանեցվի ՀՀ Էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության կոմիտեի կողմից մշակվող Հայաստանի զբոսաշրջության զարգացման 5-ամյա ռազմավարությանը և «Զբոսաշրջության ոլորտի կլաստերային զարգացման հայեցակարգին»: Հանրության դատին մշակված փաստաթուղթը կներկայացվի 2023թ.-ին:
- Պետական աջակցության սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում իրականացվել են համայնքային ենթակառուցվածքների, այդ թվում՝ Ստեփանավանի կենտրոնական հրապարակի,

Մեծավանի զբոսայգու, Օձունի մարզաառողջարանի, Ուրասարում մշակույթի կենտրոնի և ժամանցի կենտրոնի կառուցման և բարեկարգման ծրագրեր :

❖ Մարզպետարանի և Բրիտանական խորհրդի հայաստանյան գրասենյակի համագործակցությամբ Գերմանիայի (GIZ) հայաստանյան գրասենյակի կողմից իրականացվող ԵՄ-ն բիզնեսի համար նախաձեռնության «Նորարարական տուրիզմի և տեխնոլոգիաների զարգացում Հայաստանի համար» ծրագրի շրջանակներում 2022թ.-ին իրականացվել է «Անգլերեն լեզվի դասընթացներ զբոսաշրջության ոլորտի համար Հայաստանի երեք հյուսիսային մարզերում» ծրագիրը:

❖ Ծրագրի շրջանակներում Լոռու, Տավուշի և Շիրակի մարզերի զբոսաշրջության ոլորտում գործող պետական և մասնավոր հատվածի կազմակերպությունների ու կառույցների 140 ներկայացուցիչներն անվճար մասնակցել են անգլերեն լեզվի դասնթացների՝ բարձրացնելով ոլորտում իրենց մրցունակության մակարդակը և մատուցվող ծառայությունների որակը:

❖ 2022թ.-ին մարզում զբոսաշրջային մեծ ակտիվություն է գրանցվել նաև մասնավոր և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ իրականացված ներդրումների շրջանակներում, որի ծավալը կազմել է ավելի քան 1,7 մլրդ դրամ:

❖ Մարզում նոր հյուրանոցներից են՝ Ֆորեսթ 1961-ը, Գայլասար Ռեզորթը, Աուրում հյուրանոցը, Վան ռեստորանային համալիրը, Կոսմո գլեմփինգը, ընթացքի մեջ են Ռեզորտ Հաուս հյուրանոցի, «Վահետ» ՍՊԸ-ի հյուրատնային համալիրի կառուցման աշխատանքները: Մարզի համայնքներում գործունեություն են սկսել ծավալել շուրջ 15 հյուրատներ և 7 նոր սննդի կետեր՝ սրճարաններ, տարածաշրջանի ոլորի զարգացման համար հետաքրքիր և նոր մշակույթ ձևավորող «ԲՈ» հեծանվային պարկը:

❖ 2022թ.-ին Դեբեդ բնակավայրում դռները բացեց Հայաստանի Մանուկների Հիմնադրամի նախաձեռնությամբ կառուցված Սմարթ այցելուների կենտրոնը:

❖ USArmenia TV-ի հեռարձակմամբ Ֆեյս Քընթրոլ հաղորդման շրջանակներում Լոռու մարզը ներառվել է նկարահանումներում: Մարզի մասին տարվա ընթացքում հրապարակվել են մի շարք հոդվածներ տարբեր զբոսաշրջային պարրբերականների կողմից:

Տեղեկատվական տեխնոլոգիաներ

Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի 2022 թվականի ընթացքում իրականացված աշխատանքներ:

Մասնագիտական կարողությունների զարգացում

Վանաձորում և տարածաշրջանում տեխնոլոգիական ենթակառուցվածքի պատշաճ զարգացման համար շուկան որակյալ կադրերով համալրելու անհրաժեշտությունից ելնելով, Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնն իրականացնում է բազմաշերտ կրթական ծրագրեր և դասընթացներ՝ դպրոցականների, ուսանողների, շրջանավարտների և տարբեր ոլորտների մասնագետների վերաորակավորման համար:

Հաշվետու ժամանակահատվածում ՎՏԿ-ում իրականացվել են ընթացիկ մասնագիտական 99 կարճաժամկետ և երկարաժամկետ դասընթացներ, ընդհանուր՝ մոտ 700 մասնակիցներով, որոնցից 50-ից ավելին անցել է աշխատանքի տարբեր ընկերություններում:

Բիզնես զարգացում

Շարունակելով աջակցել տարածաշրջանի կայուն զարգացմանը, օգնելով սկսնակ և գոյություն ունեցող ընկերություններին, տեխնոլոգիական թիմերին իրենց գաղափարները վերածել հաջողակ բիզնեսի, ինչպես նաև աջակցել առաջատար հայաստանյան և միջազգային ՏՏ և Բարձր տեխնոլոգիաբերի ոլորտի ընկերություններին իրենց գործունեությունը ծավալել Վանաձորում՝ հաշվետու ժամանակաընթացքում ՎՏԿ-ի կողմից ներգրավված ընկերությունների թիվն ավելացել է 8 տեղական և միջազգային ընկերություններով՝ ստեղծելով 50-ից ավել նոր աշխատատեղ:

Ստեղծվել են 5 նոր Start up թիմեր, որոնք ՎՏԿ աջակցությամբ մասնակցել են տարբեր դրամաշնորհային մրցույթների և գրանցել են հաջողություններ:

Հաշվետու ժամանակում ՎՏԿ-ում կազմակերպվել են 20-ից ավել միջին և խոշոր մասշտաբի միջոցառումներ, որոնց մասնակիցների թիվը գերազանցել է 3000-ը:

Կենտրոնում գործող մետաղամշակման գերժամանակակից սարքավորումներով հագեցած լաբորատորիայում իրականացվել է 8 ինժեներական նախատիպերի պատրաստում:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Մարզի քաղաքաշինության ոլորտի հիմնախնդիրները կապված են բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման, հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքերի սեյսմակայունության բարձրացման և վերանորոգման, առողջապահական օբյեկտների կառուցման, վերանորոգման և համապատասխանեցման ժամանակակից պահանջներին, էներգախնայողության համակարգերի տեղադրման, մշակութային, նախադպրոցական, մարզական օբյեկտների, բազմաբնակարան շենքերի հիմնանորոգման, 3-րդ աստիճանի վթարայնություն ունեցող բազմաբնակարան բնակելի շենքերի ամրացման, բազմաբնակարան շենքերի վնասվածության աստիճանի որոշման նպատակով

հետազննումների անցկացման, բնակավայրերի բարեկարգման, բազմաբնակարան շենքերի կառավարման գործին պետական աջակցության, քաղաքաշինության ոլորտի գործընթացի հստակեցման, իրավասու մարմինների վարչարարության, թույլտվությունների, եզրակացությունների տրամադրման պարզեցման, ինչպես նաև քաղաքաշինական այլ խնդիրների հետ:

❖ 2022թ. քաղաքաշինության բնագավառում ներդրումների ծավալը կազմել է շուրջ 5,8 մլրդ ՀՀ դրամ:

❖ 2022թ. ավարտվել է «Ֆուլեր տնաշինական կենտրոն» բարեգործական հասարարական կազմակերպության կողմից իրականացվող 153 շահառու ընտանիքների բնակելի տների շինարարական աշխատանքները:

❖ 2022թ. աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովման ծրագրի շրջանակներում բնակապահովման իրավունքը դատական կարգով վերականգնվել է Լոռու մարզի գյուղական բնակավայրերում շահառու ճանաչված 28 ընտանիքի կողմից, որոնց ԲԳՎ-ի տրամադրման գործընթացը կիրականացվի 2023թ. :

❖ Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծմանն ուղղված պետական աջակցության ծրագրի ավարտից հետո աղետի գոտու բնակավայրերում դեռևս մնում են չլուծված ոչ հիմնական շինություններում/տնակներում ապրող քաղաքացիների բնակարանային խնդիրները: Փաստագրվել է ոչ հիմնական շինությունները, դրանց մասով կազմվել են աղյուսակային և քարտեզագրական նյութեր, մշակվել է խնդրի կանոնակարգման առաջարկությունների փաթեթ: Խնդիրը ներառվել է Կառավարության գործունեության 2021-2026 թվականների միջոցառումների ծրագրում:

Մասնավորապես ծրագրով նախատեսվում է.

❖ փաստագրման արդյունքների հիման վրա շարունակել երկրաշարժից հետո տեղադրված (կառուցված) ոչ հիմնական շինություններում բնակվող ընտանիքների վերաբնակեցման, այդ շինությունների քանդման և տարածքների քաղաքաշինական միջավայրը վերականգնելու հետ կապված գործընթացը:

❖ Կառավարության 2021-2026թթ. միջոցառումների ծրագրի համաձայն՝

✓ 13 հոկտեմբերի 2022 թվականի ընդունվել է ՀՀ կառավարության որոշում՝ «Աղետի գոտու բնակավայրերի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը երկրաշարժից հետո տեղադրված կամ կառուցված ոչ հիմնական շինություններից ազատելու կարգը հաստատելու մասին» N 1601-Ն որոշումը:

✓ 2023 թվականից կիրականացվի բուն ծրագրեր՝ Կառավարության կողմից սահմանված մոտեցումների և առաջնահերթությունների համաձայն:

✓ 2022թ. բարելավվել են Լոռու մարզի հանրակրթական դպրոցների և մանկապարտեզների շենքային պայմանները, ինչպես նաև թարմացվել է լաբորատոր գույքը:

❖ 2022թ. ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագրի աջակցությամբ մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում ավարտին է հասցվել խոհանոցների, ճաշարանների և սննդի պահեստների վերանորոգման և համապատասխան գույքով վերազինման աշխատանքները:

❖ 2022թ. իրականացվել են ՀՀ Լոռու մարզում անհետաձգելի համարվող կապիտալ բնույթի ծրագրեր թվով 18 դպրոցներում, մասնավորապես՝ ջեռուցման համակարգերի կառուցման և փոխարնման, դռների և պատուհանների փոխարինման, սանհանգույցների,

մարզադահլիճի,դասասենյակների վերանորոգման, տանիքներիի հիմնանորոգման, ,ուսումնական մասնաշենքի վերակառուցման:



2022թ. քաղաքաշինության ոլորտում իրականացվել և իրականացվում են հետևյալ խոշոր օբյեկտների շինարարական աշխատանքները՝

- Վանաձորի Միքայել Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջի վերակառուցում:
- Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջի մարզադահլիճի վերակառուցում:
- Ստեփանավանի Աշոտաբերդ թաղամասի թ.3 դպրոցի կառուցում
- Վանաձորի Ռաֆֆու անվան N 19 հիմնական դպրոցի մեկ մասնաշենքի վերակառուցում մանկապարտեզի
- Ալավերդու թիվ 2 հիմնական դպրոցի կառուցում
- Վանաձորի թիվ 19 հիմնական դպրոցի կառուցում
- Վանաձորի թիվ 11 մանկապարտեզի 2-րդ մասնաշենքի վերակառուցում
- Հագվու հիմնական դպրոցի «Մոդուլային» տիպի շենքի կառուցում
- Մեդովկայի միջնակարգ դպրոցի «Մոդուլային» տիպի շենքի կառուցում

2022թ. քաղաքաշինության ոլորտում իրականացվում են նաև հետևյալ շինարարական աշխատանքները

- Վանաձորի Խ.Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոցի մարզադահլիճի կառուցում
- Վանաձորի Ծ.Իսակովիչ անվան թիվ 23 հիմնական դպրոցի մարզադահլիճի կառուոցում
- Ստեփանավանի թիվ 1 վարժարանի մարզադահլիճի կառուցում
- Ագարակի միջնակարգ դպրոցի մարզադահլիճի կառուցում
- Վարդաբլուրի միջնակարգ դպրոցի մարզադահլիճի կառուցում
- ՎՎանաձորի Ղ.Ալիշանի անվան թիվ 27 հիմանկան դպրոցի մարզադահլիճի հիմանորոգում
- Ալավերդու թիվ 12 հիմնական դպրոցի մարզադահլիճի հիմնանորոգում

Քաղաքաշինության բնագավառում Լոռու մարզում զգալի են նաև ՀՏՀՀ-ով նախատեսված ծրագրերի իրականացումը: Ընդհանուր առմամբ 2022թ. ին ՀՏՀՀ-ի կողմից իրականացվել են շուրջ 1,9 մլրդ դրամի աշխատանքներ:

2022թ. կազմվել է ՀՀ Լոռու մարզի 128 բնակավայրերի տարածքներն ընդգրկող թվով 9 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծման առաջադրանքները և ներկայացվել է հաստատման:

Քաղաքաշինության ոլորտի զարգացման նպատակներն են եղել նաև բազմաբնակարան բնակարանային ֆոնդի վերականգնումը, բակերի բարեկարգումը, կոմունալ ենթակառուցվածքների վերանորոգումը, միավորված համայնքների համակցված գլխավոր հատակագծերի և շինարարական օբյեկտների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմումը:

Նախորդ տարվա համեմատությամբ 2022թ.-ին շինարարության թույլտվությունների, ավարտական ակտերի ձևակերպման և շահագրգիռ մարմիններին ներկայացման գործընթացը բարելավվել է:

ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Տրանսպորտ

❖ Մարզում գործում է 26 ներմարզային կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղի: Այդ երթուղիների սպասարկումը մրցութային կարգով իրականացնում են 13 մասնավոր կազմակերպություններ:

❖ Մարզում գործում է «Հարավկովկասյան երկաթուղու» Գյումրի-Այրում հատվածը՝ 12 կայարաններով:

❖ Ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացվում են Վանաձոր, Ալավերդի և Սպիտակ քաղաքներում:

❖ Փոխադրողների կողմից նոր ավտոբուսներ և միկրոավտոբուսներ չեն ներկայացվել, քանի որ ուղևորահոսքի նվազման հետևանքով ներմարզային երթուղիներ սպասարկելը դարձել է տնտեսապես ոչ շահավետ: Դրան նպաստում է նաև այն, որ տաքսամոտորային փոխադրումները բավականին ազատականացված են և կանոնավոր փոխադրումներ իրականացնողները գտնվում են ոչ մրցակցային պայմաններում:

❖ Համաձայն Հայաստանի Հանրապետությունում միասնական երթուղային ցանցի ստեղծման տեխնիկական առաջադրանքի՝ նախատեսվում է մարզի խոշոր քաղաքներից կամ մարզկենտրոնից դեպի Երևան, կամ այլ մարզի խոշոր քաղաքներ և դրա հետ միասին տվյալ խոշոր քաղաքը կամ մարզկենտրոնը իրեն հարող բոլոր բնակավայրերին կապող երթուղիների սպասարկման համար հայտարարել մրցույթներ մեկ փաթեթով: Արդյունքում հնարավոր կլինի ընտրել մեկ փոխադրող, որը կսպասարկի մարզի ինչպես շահութաբեր, այնպես էլ ոչ շահութաբեր երթուղիները ամբողջովին:

❖ 2023թ. բացի ընթացիկ աշխատանքներից նախատեսված է կատարել ուսումնասիրություններ՝ բնակչության սպասարկման որակը բարձրացնելու և երթերի կատարման ժամանակացույցը ուղևորներին ավելի հարմարավետ դարձնելու համար, ինչպես նաև բացատրական աշխատանք տանել վարորդների շրջանում պատշաճ մակարդակի սպասարկում ապահովելու նպատակով

Ճանապարհաշինություն

Համաձայն ՀՀ կառավարության 2014թ. փետրվարի 13-ի N265-Ն որոշման, Լոռու մարզում ավտոմոբիլային ճանապարհների ցանցը կազմում է 878.0կմ, այդ թվում ըստ նշանակության՝

միջպետական	216.2 կմ
հանրապետական	262.7 կմ
մարզային (տեղական)	399.1 կմ
Մարզում կան	
կամուրջներ և կամրջային անցումներ	175 հատ
ավտոմոբիլային թունելներ	5 հատ

2022թ-ին Լոռու մարզում իրականացված ճանապարհաշինական աշխատանքների ընդհանուր արժեքը կազմել է 13,9 մլրդ դրամ, որով հիմնանորոգվել կամ վերանորոգել է 77.0 կմ ճանապարհ (հավելված 1), ինչպես նաև սուբվենցիոն ծարագրերի ներկայացված հայտերով վերանորոգվել են ներհամայնքային ճանապարհներ, որոնց ընդհանուր երկարությունը կազմում է 26.4 կմ:

Առավել խոշոր ծրագրերն են Մ-3 և Մ-6 միջպետական և Հ-33 հանրապետական նշանակության ճանապարհների, ինչպես նաև Տ-5-7, Տ-5-23 և Տ-5-24 մարզային (տեղական) նշանակության ճանապարհահատվածների հիմնանորոգման աշխատանքները:

Սուբվենցիոն ծրագրերով մարզի 10 համայնքներում իրականացվել կամ ընթացքի մեջ են մի շարք ճանապարհաշինական աշխատանքներ: Այդ համայնքներն են՝ Վանաձոր, Ստեփանավան, Տաշիր, Ալավերդի, Սպիտակ, Լոռի Բերդ, Գյուլագարակ, Փամբակ, Թումանյան, Լերմոնտովո: Նշված համայնքներում աշխատանքները հիմնականում ավարտական փուլում են:

Ճանապարհաշինության ոլորտում բոլոր ֆինանսական աղբյուրներով իրականացված աշխատանքներ

/h	Ֆինանսավորման աղբյուրը	2022թ. Ծրագիր (մլն դրամ)	Կատարվել է 2022թ. (մլն դրամ)	Ծանոթություն
	ԸՆԴԱՄԵՆԸ ՄԱՐԶՈՒՄ	19061.027	9339.740	
	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	15769.515	6061.800	
	ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	15637.9	5930.6	
	ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ	131.58	131.18	
	ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԴՈՆՈՐՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ	3,291.51	3,277.94	

Հավելված 1

/h	Օբյեկտի և ծրագրի անվանումը	2022թ.Ծրագիր (մլն դրամ)	Կատարվել է 2022թ. (մլն դրամ)	Ծանոթություն
	ԸՆԴԱՄԵՆԸ ՄԱՐԶՈՒՄ	19,061.03	9,339.74	
	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	15769.515	6061.800	
	ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	15637.9	5930.6	
	Մ- 3, Թուրքիայի սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ97+020-կմ104+700 հատվածի հիմնանորոգում	1,337.818	1,079.188	Աշխատանքներն ավարտական փուլում են
	Մ- 3, Թուրքիայի սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ154+000-կմ176+900 հատվածի հիմնանորոգում հատվածի հիմնանորոգում	3,771.30	3,685.006	Աշխատանքներն ավարտական փուլում են
	Հ-33, /Մ-3 /Ստեփանավան-Ագարակ-Յաղդան-/Հ-35/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ8+100 հատվածի հիմնանորոգում	991.054	642.428	Աշխատանքներն ավարտական փուլում են

	Հ-70, Մ-6 – Աթան հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000 - կմ27+500 հատվածի հիմնանորոգում	2,720.000		2022թ-ին կրկին հայտարարված շին. մրցույթը կայացել է, կնքվել է պայմանագիր առանց ֆինանսական միջոցներ
	S-5-69, /Հ-70/ - Ահնիձոր մարզային նշանակության ավտոճանապարհի կմ0+000 - կմ4+000 հատվածի հիմնանորոգում	258.174		Ծրագիրը ներառվել է 2023թ. նախատեսվող աշխատանքների ցանկում:
	/Հ-70/ – Քարինջ մարզային նշանակության ավտոճանապարհի կմ0+000 - կմ3+500 հատվածի հիմնանորոգում	346.193		Ծրագիրը ներառվել է 2023թ. նախատեսվող աշխատանքների ցանկում:
	S-5-82, /Հ-70/ – Լորուտ մարզային նշանակության ավտոճանապարհի կմ0+000 - կմ1+600 հատվածի հիմնանորոգում	143.761		Ծրագիրը ներառվել է 2023թ. նախատեսվող աշխատանքների ցանկում:
	S-5-93, /Հ-70/ - Մարց մարզային նշանակության ավտոճանապարհի կմ0+000 - կմ0+800 հատվածի հիմնանորոգում	64.282		Ծրագիրը ներառվել է 2023թ. նախատեսվող աշխատանքների ցանկում:
	S-5-24,/Մ-3/ (Ստեփանավան) – Արմանիս – Ուրասար – Կաթնաղբյուր տեղական նշանակության ավտոճանապարհի կմ 6+600-կմ 15+200 հատվածի և Կաթնաղբյուր համայնքի 8-րդ և 9-րդ փողոցների հիմնանորոգում	1,174.90	146.40	Ծրագրի ավարտը նախատեսված է 2023թ-ին.
	Մ- 3, Թուրքիայի սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման կմ144+020-ում գտնվող կամրջի հիմնանորոգում	87.200	87.20	Աշխատանքներն ավարտվել են
	Հ-22, /Մ-6/-Դսեղ-/Հ-70/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի առաջին կիլոմետրում գտնվող կամրջի հիմնանորոգում	99.076		2022թ-ին հայտարարված շին. մրցույթը կայացել էր, կնքվել էր պայմանագիր, սակայն պայմանագիրը լուծվել է և կկազմակերպվի նոր մրցույթային գործընթաց
	Հ-60, Մ-3 - Մեծավան - Ձյունաշող հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ5+000 հատվածի կամրջի հիմնանորոգում	50.693		2022թ-ին հայտարարված շին մրցույթը չի կայացել
	Մ- 6 - Եղեգնուտ –Դեբետ ավտոճանապարհի կմ 0+000 - կմ 7+183 հատվածի հիմնանորոգում	920.804	74.05	Ծրագիրը ներառվել է 2022թ. նախատեսվող աշխատանքների ցանկում:
	S - 5 - 7, /Մ-7/ (Շիրակամուտ) – Լեռնավան (S – 5 - 38) ավտոճանապարհի կմ 0+000 – կմ1+142 հատվածի հիմնանորոգման աշխատանքեր	148.642	108.037	Աշխատանքներն ավարտական փուլում են

	Տ-5-23, /Մ-3/ - Սարամեջ ավտոճանապարհի կմ0+000-կմ4+300 հատվածի հիմնանորոգում	514.127	108.308	Ծրագրի ավարտը նախատեսված է 2023թ-ին.
	Վանաձոր քաղաքային համայնքի Կ.Դեմիրճյան փողոցի հիմնանորոգում	1,020.900		2022թ-ին հայտարարված շին. մրցույթը կայացել էր, կնքվել էր պայմանագիր, սակայն պայմանագիրը լուծվել է և կկազմակերպվի նոր մրցույթային գործընթաց
	Տ-5-46,/Մ-6/(Ալավերդի)-Սանահին թաղամաս-Ակներ ավտոճանապարհի ԿՄ0+000-ԿՄ9+300 և Տ-5-46 դեպի Սանահին վանական համալիր տանող հատվածների հիմնանորոգման աշխատանքներ	1,989.000		2022թ-ին կրկին հայտարարված շին. մրցույթը կայացել է, կնքվել է պայմանագիր առանց ֆինանսական միջոցներ
I	ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ	131.58	131.18	
	Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում	131.58	131.18	
II	ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԴՈՆՈՐՆԵՐ	2142.6	1626.7	
	Մ6՝ Վանաձոր- Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ38+450 - կմ90+191 հատվածի վերականգնման և բարելավման աշխատանքներ	3,168.02	3,154.45	
	Տ-5-32-Կաթնաջուր մարզային նշանակության ճանապարհի հիմնանորոգում	102.58	102.58	
	«Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի երկրորդ լրացուցիչ ֆինանսավորում» ծրագիր (ԿՆՃՑԲԾ ԼՖ2 ծրագիր) Մ6, Վանաձոր – Ալավերդի – Վրաստանի սահման ավտոճանապարհի կմ4+780 - կմ5+100, կմ5+900 - կմ6+476 հատվածների վթարավտանգ տեղամասերի բարելավման աշխատանքներ	20.91	20.91	Աշխատանքներն ավարտվել են

Լոռու մարզում իրականացված ճանապարհաշինական աշխատանքներ

❖ Ընթացքի մեջ է Մ6՝ Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքների երկրորդ փուլը: Ծրագրային արժեքն է՝ 3.837 մլրդ դրամ: Կապալառու կազմակերպություններն են «Հորիզոն-95» ՍՊԸ, «ԱԱԲ ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ և «Սուարդի» ԲԸ հայաստանյան մասնաճյուղ իտալական կազմակերպությունը: Աշխատանքները հիմնականում ավարտական փուլում են: Որոշ աշխատանքների մասով

կատարվել են նախագծային փոփոխություններ և այն ամբողջական կիրականացվեն 2023թ-ին: Երկրորդ փուլով Լոռու մարզում նախատեսվող ճանապարհահատվածի երկարությունը կազմում է 51.74 կմ, որից 32.95 կմ՝:

- Մ-3՝ Թուրքիայի սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի 22.9 կմ և 7.49 կմ երկարությամբ ճանապարհահատվածների հիմնանորոգում: Պայմանագրային ընդհանուր արժեքը՝ 3.93 մլրդ. դրամ: Կապալառու կազմակերպություններն են «Լեոպոլդ և ընկերներ» և «Ճանապարհ» ՍՊԸ-ները: Աշխատանքներն ավարտված են:
- Հ-33՝ /Մ-3 /Ստեփանավան-Ագարակ-Յաղդան-/Հ-35/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի 8.1 կմ ճանապարհահատվածի հիմնանորոգում: Պայմանագրային արժեքը՝ 991.0 մլն. դրամ: Կապալառու կազմակերպությունն է «ԱԱԲ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ: Աշխատանքները գտնվում են ավարտական փուլում:
- Տ-5-24՝ /Մ-3/ (Ստեփանավան) – Արմանիս – Ուրասար – Կաթնաղբյուր տեղական նշանակության ավտոճանապարհի կմ 6+600-կմ 15+200 հատվածի և Կաթնաղբյուր համայնքի 8-րդ և 9-րդ փողոցների հիմնանորոգում: Պայմանագրային արժեքը՝ 1.17 մլրդ. դրամ: Ծրագիրն իրականացվում է ՀՀ պետ. բյուջեի ֆինանսավորմամբ: Կապալառու կազմակերպությունն է «ԱԱԲ պրոյեկտ» ՍՊԸ: Աշխատանքներն ընթացքի մեջ են: Ավարտը նախատեսված է 2023թ.:
- Տ-5-41՝ Մ6 – Եղեգնուտ - Դեբեդ՝ մարզային (տեղական) նշանակության ավտոճանապարհի 8.3կմ երկարությամբ ճանապարհահատվածի հիմնանորոգում: Պայմանագրային արժեքը՝ 920.8 մլն դրամ: Կապալառու կազմակերպությունն է « Ծովագյուղի ՃՇՇ» ՍՊԸ: Ծրագիրն իրականացվում է ՀՀ պետ. բյուջեի համաֆինանսավորմամբ: Աշխատանքներն ընթացքի մեջ են: Ավարտը նախատեսված է 2023թ.:
- Տ-5–7՝ /Մ-7/ (Շիրակամուտ) – Լեռնավան (Տ – 5 - 38) ավտոճանապարհի կմ 0+000 – կմ1+142 հատվածի հիմնանորոգում: Պայմանագրային արժեքը՝ 148.6 մլն դրամ: Կապալառու կազմակերպությունն է «Ռ.Ղազարյան» ՍՊԸ: Ծրագիրն իրականացվում է ՀՀ պետ. բյուջեի ֆինանսավորմամբ: Աշխատանքներն ավարտական փուլում են:
- Տ-5-23՝ /Մ-3/ - Սարամեջ ավտոճանապարհի կմ0+000-կմ4+300 հատվածի հիմնանորոգում: Պայմանագրային արժեքը՝ 517.3 մլն դրամ: Կապալառու կազմակերպությունն է «Ռ.Ղազարյան» ՍՊԸ: Ծրագիրն իրականացվում է ՀՀ պետ. բյուջեի ֆինանսավորմամբ: Աշխատանքներն ընթացքի մեջ են: Ավարտը նախատեսված է 2023թ.:
- Լոռու մարզպետարանին մարզային նշանակության ա/ճանապարհների պահպանման և շահագործման համար 2021թ-ին հատկացվել էր 131.58 մլն դրամ, որից ընթացիկ ձմեռային պահպանման համար՝ 52.19 մլն դրամ, ընթացիկ ամառային պահպանման համար՝ 79.39 մլն դրամ:

Ճանապարհաշինության ոլորտում արձանագրված խնդիրները և դրանց վերացմանն ուղղված միջոցառումները

Ճանապարհաշինության ոլորտում ներդրումները բավարար չեն մարզի ամբողջ ճանապարհային ցանցի վերանորոգման համար:

Մարզում դեռևս առկա են չլուծված ճանապարհաշինական խնդիրներ, որոնք ենթակա են հրատապ լուծման, դրանցից են՝

✓ Տ-5-40, /Մ-6/ – Վահագնի – Անտառամուտ մարզային նշանակության ճանապարհի 5.0կմ երկարությամբ հատվածը՝ արժեքը - մոտ 300.0 մլն դրամ,

✓ Տ-5-34՝ /Մ-7/ (Լուսաղբյուր) – Խնկոյան մարզային նշանակության ճանապարհի 3 կմ երկարությամբ հատվածը՝ արժեքը - մոտ 150.0 մլն դրամ,

✓ Տ-5-27՝ /Հ-60/ (Ձյունաշող) – Դաշտադեմ – Նորամուտ մարզային նշանակության ճանապարհի 5.0 կմ երկարությամբ Ձյունաշող - Պաղաղբյուր հատվածը, արժեքը - մոտ 300.0 մլն դրամ:

✓ Տ-5-7՝ /Մ-7/ (Շիրակամուտ) – Լեռնավան (Տ-5-38) մարզային նշանակության ճանապարհի 8.2 կմ երկարությամբ հատվածը, արժեքը - մոտ 500.0 մլն դրամ,

✓ Հրատապ լուծման ենթակա հանրապետական նշանակության ճանապարհներից են.

✓ Հ-60՝ /Մ-3/ (Տաշիր) – Մեծավան – Ձյունաշող (Տ-5-27) ճանապարհի Մեծավան-Ձյունաշող հատվածը, երկարությունը՝ 4.3 կմ

✓ Հ-24՝ /Մ-3/ - Գյուլագարակ – Կուրթան - /Մ-6/ ճանապարհի Կուրթան - /Մ-6/ հատվածը, երկարությունը՝ 11.5 կմ

2023թ. նախատեսվում է իրականացնել մարզային և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ուսումնասիրություն, կազմել բոլոր ճանապարհների իրավիճակային նկարագիր, ունենալ մարզի հրատապ լուծում պահանջող ճանապարհահատվածների հիմնանորոգման մոտավոր հաշվարկ՝ ֆինանսավորման աղբյուրների և դոնորների առկայության դեպքում՝ վերջիններիս առաջարկ տրամադրելու համար

Ջրամատակարարում և ջրահեռացում

2021 թվականի մարտ ամսից մեկնարկել է Լոռու մարզում Հայ-Գերմանական համագործակցության ծրագրի շրջանակներում KFW բանկի ֆինանսավորմամբ նախատեսված՝ Վանաձորի 8-րդ ճնշումային գոտու բաշխիչ ցանցի վերակառուցման և շրջակա 9 բնակավայրերում՝ Ամրակից, Անտառամուտ, Ձորագյուղ, Գուգարք, Հոբարձի, Վարդաբլուր, Կուրթան, Լեռնապատ, Վահագնի բաշխիչ ցանցերի, ՕԿՋ-ների և 3 գետային ջրընդունիչների վերակառուցման աշխատանքները: Ծրագրի ընդհանուր արժեքը 4037225.2 հազ,դրամ է: 2022թ. իրականացվել են 905187.8 հազ. դրամի աշխատանքներ: Ծրագրի ավարտը նախատեսվում է 2023թ.ին:

❖ Ջրամատակարարման և ջրահեռացման բաշխիչ ցանցերի վերանորոգում և անհատական ջրաչափերի տեղադրման աշխատանքներ:

❖ Ուռուտ և Ագարակ համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման աշխատանքներ:

❖ Ծրագրերն իրականացվում են Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶՀ) և ՀՏԶՀ-ի ջրային տնտեսության ծրագրերի իրականացման մասնաճյուղի կողմից: Աշխատանքներն ընթացքի մեջ են, ավարտը նախատեսվում է 2023թվականին:

❖ Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում ներդրումների ծավալը 2022թ. կազմել է շուրջ 2.028 մլրդ դրամ:

❖ ՀՏԶՀ և ՀՏԶՀ-ի ջրային տնտեսության ծրագրերի իրականացման մասնաճյուղի կողմից 2022թ.-ին իրականացվել են նաև ՝

- ✓ Ախթալայի համայնքապետարանի ենթակայության ներքո գտնվող հիմնարկների, համայնքային պատկանելիության խմելու ջրի պոմպակայանների և ալրաղացի տարածքներում ֆոտովոլտային կայանների տեղադրման աշխատանքները: Ծրագրի արժեքը 47978 հազ.դրամ է: Աշխատանքներն ավարտված են:

Հաշվետու ժամանակահատվածում «Վեոլիա ջուր» ՓԲ ընկերության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- ❖ ՀՀ Լոռու մարզի բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավում(Սպիտակ քաղաքի Այգեստան-1 թաղամասի ջրամատակարարման, Շահումյան փողոցի կոյուղագծի վերակառուցում և Ալավերդի քաղաքի Սարահարթ թաղամասի թիվ 8 դպրոցիկոյուղագծի վերակառուցում)
- ❖ «Զախկալ» նոր քլորակայանի կառուցում
- ❖ Լոռու մարզ, գ.Այգեհատ 3,4,6 փողոցներիջրագծի կառուցում
- ❖ Լոռու մարզ, ք.Ալավերդի, Թումանյան փողոցի սկզբնամաս, Երևանյան խճուղի, ջրագծի վերակառուցում
- ❖ Լոռու մարզ, գ.Աքորի, 5և6 փողոցների ջրագծի կառուցում
- ❖ Լոռու մարզ, գ.Եղեգնուտ, ջրագծի վերակառուցում
- ❖ Լոռու մարզ, գ.Աքորի, 6 փողոցի ջրագծի կառուցում

❖ Ընդհանուր առմամբ ջրամատակարարման ոլորտում 2022թ. ներդրումների ծավալը կազմել Լոռու մարզում կազմել է 2,0 մլրդ. ՀՀ դրամ:

Գազամատակարարում (գազիֆիկացում)

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Լոռու գազաֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղի կողմից հաշվետու տարում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- ❖ Շնող գյուղի ցածր ճնշման ստորգետնյա գազատարի վթարային հատվածների վերատեղադրում՝ 22.262հազ.դրամ:
- ❖ Մեդովկա-Կրուգլայա Շիշկա ց/ճ ստորգետնյա գազատարի մեկուսիչ շերտի վնասված հատվածների վերանորոգում՝ 38.07158հազ.դրամ,
- ❖ Մեդովկա գյուղի մ/ճ ստորգետնյա գազատարի մեկուսիչ շերտի վնասված հատվածի վերանորոգում՝ 10.171715 հազ.դրամ,
- ❖ Կրուգլայա Շիշկա գյուղի մ/ճ ստորգետնյա գազատարի մեկուսիչ շերտի վնասված հատվածի վերանորոգում9.320983հազ.դրամ,
- ❖ Պրիվոլնոյե գյուղի ց/ճ ստորգետնյա գազատարի վթարային հատվածների վերատեղադրում և մեկուսիչ շերտի նորոգում՝ 83.756823 հազ.դրամ,
- ❖ Դեբետ գյուղը սնող մ/ճ ստորգետնյա գազատարի մեկուսիչ շերտի նորոգում՝ 77.614254հազ.դրամ

- Լորուտ գյուղի ցածր ճնշման սստորգետնյա գազատարների վթարային հատվածների վերատեղադրում՝ 28.927377հազ.դրամ,
- Գուգարք գյուղի Գուգարքի ԳԲԿ-ից մինչև 1-ին փողոց մ/ճ ստորգետնյա գազատարի մեկուսիչ շերտի նորոգում՝ 30.437224 հազ.դրամ,
- Բնական գազի կենցաղային հաշվիչների և պաշտպանիչ արկղերի ձեռքբերում և տեղադրում՝ 10487.42հազ.դրամ,
- Ազդանշանային սարքերի և ինքնաշխատ վթարային անջատիչ կափույրների ձեռքբերում և տեղադրում՝ 7763.47հազ.դրամ:

Համայնքային միջոցներով իրականացվել են Փամբակ համայնքի Ազնվաձոր բնակավայրի գազիֆիկացման աշխատանքներ՝ 760,0հազ.դրամ արժեքով:

- Ընդհանուր առմամաբ գազամատակարարման ոլորտում 2022թ. ներդրումների ծավալը կազմել Լոռու մարզում կազմել է 727,784 մլն. ՀՀ դրամ:

Էներգետիկա

Մարզի բոլոր բնակավայրերը միացված են էլեկտրական ցանցերին և ապահովված են հիմնականում անխափան և առանց լուրջ վթարների էլեկտրամատակարարմամբ:

2022թ.-ին մարզում իրականացվել են.

«Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» ծրագրի շրջանակներում 110/10/6 կՎ «Վանաձոր-1» ենթակայանի վերակառուցում 4141.0906 հազ. դրամ, ինչպես նաև էլեկտրական սարքավորումների և օդային գծերի շահագործման ու նորոգման աշխատանքներ 504 հազ. դրամ ներդրմամբ:

«ՀԷՑ» ՓԲԸ-ի ներդրումային ծրագրով իրականացվել են Օդային և մալուխային գծերի վերակառուցման և «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից նախատեսված այլ աշխատանքներ 250876 հազ.դրամ ներդրմամբ:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իրականացվել են

- Լերմոնտովո խոշորացված համայնքում ֆոտովոլտային կայանների տեղադրում
- Լոռի բերդ խոշորացված համայնքի բնակավայրերում արևային ֆոտովոլտային կայանների տեղադրում
- Մեծավանում Արևային ֆոտովոլտային կայանների կառուցում
- Սարչապետ համայնքի տարածքում արևային ֆոտովոլտային կայանների կառուցում
- Տաշիրում ֆոտովոլտային կայանների տեղադրում
- Օձուն համայնքի տարածքում արևային ֆոտովոլտային կայանների տեղադրում
- Ստեփանավան խոշորացված համայնքում արևային կայանների տեղադրում

«ՀԷՑ» ՓԲԸ միջոցներով իրականացվել են

- Քաղաք-3 6կՎ ՄԳ նոր երկրորդ շղթայի կառուցում
- Քաղաք-5 6կՎ ՄԳ նոր երկրորդ շղթայի կառուցում
- Նոր կայմային ենթակայանների կառուցում 15 հատ
- Փամբակ հայանքի Եղեգնուտ գյուղի ամբողջական 6/10-0.4կՎ օդային և մալուխային գծերի վերակառուցում

- Դսեղ գյուղի ամբողջական 6/10-0.4կՎ օդային և մալուխային գծերի վերակառուցում
- Թվով 8 շենքերի մուտքերի էլեկտրահաղորդման գծերի վերակառուցում հիմնովին
- «Ալավերդի-1» 110/35/6կՎ ԵԿ-ի յուղահավաքների կառուցում

- «Ստեփանավան» 110/35/10կՎ ԵԿ-ի յուղահավաքների կառուցում
- թվով 385 նոր կառուցվող բաժանորդների միացումներ

Լոռու մարզի բոլոր 11 համայնքներում համայնքային բյուջեով իրականացվել են փողոցների լուսավորության ցանցերի կառուցման աշխատանքներ 240,406.244 հազ. դրամ արժեքով:

- Ընդհանուր առմամաբ էներգետիկայի ոլորտում 2022թ. ներդրումների ծավալը կազմել Լոռու մարզում կազմել է 1,4 մլրդ. ՀՀ դրամ:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսության բնագավառում 2022թ.-ի գործունեության ծրագրով պալանավորված և փաստացի իրականացված ներդրումների ծավալը ըստ ֆինանսավորման աղբյուրների (պետական, համայնքային, միջազգային, մասնավոր) կազմել է շուրջ 1,789,016.3 հազար դրամ, որից պետական աջակցության ծրագրերի իրականացման շրջանակներում ներ է դրվել շուրջ 740,233.0 հազար դրամ, համայնքային ներդրումները կազմել են շուրջ 67,643.0 հազար դրամ, միջազգային ու դոնոր կազմակերպությունների կողմից շուրջ 311,140.4 հազար դրամ և մասնավոր ներդրումներ շուրջ 670,00.0 հազար դրամ:



Մարզում Ֆինանսական տարբեր աղբյուրներով չպլանավորված, բայց իրականացված ներդրումների ծավալը կազմել է 6,09 մլրդ դրամ:

Ընդհանուր առմամբ գյուղատնտեսության բնագավառում 2022թ. ներդրումների ծավալը կազմել է կազմել է *7,8 մլրդ* դրամ:

❖ ՀՀ Լոռու մարզպետի 1 դեկտեմբերի 2022թ. թիվ 836-Ա որոշման համաձայն Լոռու մարզի համայնքներում և բոլոր կարգի տնտեսություններում 2023թ. հունվարի 1-18-ը իրականացվել է անասնագլխաքանակի համատարած հաշվառում:

Լոռու մարզի 2022թ-ի անասնագլխաքանակը՝ 2023թ. հունվարի 1-ի դրությամբ (վիճ. ծառայության տվյալներ)

h/h	Անվանում	գլուխ
1	Խոշոր եղջերավոր կենդանիներ, որից կովեր	68 886 34 338
2	Մանր եղջ. կենդ. Որից՝ ոչխարներ այծեր	29 906 28 378 1 528
3	Խոզեր	18 581
4	Թռչուններ	131 553
5	Մեղվաընտանիք	20 614
6	Ձիեր	2 429

Լոռու մարզի 2022թ. անասնաբուծական մթերքների արտադրության ծավալները

Անվանում	Չափի միավոր	2022թ.
Կաթ	տոննա	83300
Միս	տոննա	23100
Ձու	մլն. հատ	47.9

❖ Տաշիր համայնքում սկսվել է «Երեմյան Փրոջեքթս» ընկերությունների խմբի «Երեմյան ֆարմ» խոշոր տավարաբուծական և խոզաբուծական համալիրի հիմնան աշխատանքները: Համալիրի կառուցելու համար Եվրասիական զարգացման բանկը կներդնի 25 մլն դոլար: Կառուցման ընդանուր գումարը կկազմի 31 մլն. դոլար: 2022թ.-ին ներդրման գումարը կազմել է 10 մլն. դոլար:

❖ Սպիտակի թռչնաբուծական կոմբինատը սեփական միջոցների ներդրմամբ իրականացրել է՝ ինկուբատորային արտադրամասի, թռչունների մայրական կազմի, սպանդանոցի և կերային արտադրամասի վերազինման և կառուցման աշխատանքներ: Ներդրումների գումարը կազմել է 600 մլն. դրամ:

❖ Գյուլագարակ բնակավայրում շարունակվում է սպանդանոցի կառուցման աշխատանքները: 2022թ.-ին ներդրման գումարը կազմել է 20 մլն. դրամ:

❖ Գյուլագարակ համայնքի Գարգառ բնակավայրում հիմնված 14 հա հապալասի այգում կաթիլային ոռոգման և այլ աշխատանքների իրականացման վրա կատարվել է 50 մլն. դրամի ներդրում

- Եվրոպական միության ֆինանսական ներդրմամբ և Ավստրիական զարգացման գործակալության (ԱԶԳ) համաֆինանսավորմամբ ԵՄ «Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում (EU GAIA) ծրագրի շրջանակներում) 2022թ-ին ներդրվել է 56 մլն. դրամ (ծրագրի ՄԱԶԾ (UNDP) բյուջեն՝ 2 միլիոն եվրո է):
- Եվրոպական միություն «Տեղական դերակատարների զորեղացում հանուն զարգացման Լոռու և Տավուշի մարզերում» (EU LEAD4Lori and Tavush Marzes) ծրագրի շրջանակներում 2022թ-ին Լոռու մարզում ներդրվել է 21 մլն. 825 հազար դրամ:
- «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի (ՔՈԱՖ) կողմից իրականացված կաթի արժեշղթայի զարգացման "CheeseUp" ծրագրի շրջանակներում կատարվել է 232 մլն. դրամի ներդրում:
- «Կանաչ Արահետ» ՀԿ-ն 2022թ-ի ընթացքում Լոռու մարզում իրականացրել է 2 ծրագիր՝
- ✓ Սոցիալական ձեռներեցության էկոհամակարգի զարգացում՝ սահմանային գյուղերում կանաչ առաջընթացի համար (SEED): Ծրագրի նպատակն է թիրախային տարածաշրջանի երիտասարդների ձեռնարկատիրական ներուժի զարգացումը: Ֆինանսավորումը՝ Եվրոմիություն: Ներդրման գումարը կազմել է 50 մլն.140 հազար դրամ
- ✓ ՀՀ Տավուշի, Շիրակի եվ Լոռու մարզերում «Կլիմակայուն գյուղատնտեսության կարողությունների բազմամակարդակ ինտեգրացված զարգացում» ծրագրի շրջանակներում 2022-2024թթ-ին Լոռու մարզի Մարց և Քարաձոր համայնքներում իրականացվում են՝ փորձացուցադրական տնտեսությունների ու փոքր վերամշակող արտադրամասերի հիմնում, կայուն գյուղատնտեսության ուսուցում, տնկիների ու ոչ ավանդական բույսերի սերմերի տրամադրում: Ֆինանսավորումը՝ Գերմանիայի դաշնության համագործակցության և զարգացման նախարարություն: Լոռու մարզում ներդրման գումարը կազմել է 63 մլն.220 հազար դրամ:
- ՎՎԲ, ԵՆԲ վարկային և ՀՀ կառավարության միջոցներով Համայնքային ենթակառուցվածքների II ծրագրի, փուլ 3-Հայաստանի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքի ծրագրի շրջանակներում կատարվել է 905 մլն.187 հազար դրամի ներդրում:
- «Լոռի» ՋՕԸ-ի կողմից ոռոգման համակարգի վերանորոգման և գարնան նախապատրաստական աշխատանքների վրա կատարվել է 56 մլն 604 հազար դրամի ներդրում:

«Լոռի» ՋՕԸ-ի կողմից ջրօգտագործողներին տրված ոռոգման ջրերի, հասույթի և վարձավճարների գանձումը

h/h	ՋՕԸ-ի անվանումը	Ոռոգված տարածքը (ha)			Ջրտուքը հազ. խ.մ.	Հասույթը հազ. դրամ	Գանձումը հազ. դրամ	Գանձման մակար-դակը %
		Ընդա-մենը	որից մեխանի-կական	որից ինքնա-հոս				
1	Լոռի	1407	706	701	3446	37913	36651	97

*ՀՀ Լոռու մարզի գյուղատնտեսական հողատեսքերը 2022 թվականի **հուլիսի 1-ի** դրությամբ*

	(հեկտար)					
	Գյուղ. նշանակության հողեր, ընդամենը	**Վարելահողեր**	**Բազմամյա տնկարկներ**	**Խոտհարքներ**	**Արոտներ**	**Այլ հողատեսքեր**
Լոռու մարզ	250844.0	41977.1	447.6	35058.4	145593.8	27767.1

Լոռու մարզում 2021-2022թթ. կատարված գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերի և բերքահավաքի համեմատականները (ըստ ԱՎԾ-ի)

հ/հ	**Մշակաբույսը**	**2021թ**		**2022թ.**		**Համեմատական 2021թ-ը 2022թ-ի նկատմամբ(աճը)**			
		ցանքը հա	**բերքը տ**	**ցանքը հա**	**բերքը տ**	**ցանքը**		**բերքը**	
						հա	**%**	**տ**	**%**
1	Հացահատիկ	**11363**	28573	**11911**	32354	+548	+4.8	+3781	+13.2
2	Հատիկաընդեղեն	**191**	420	**194**	385	+3	+1.5	-35	-8.3
3	Կարտոֆիլ	**3543**	53612	**3475**	51204	-68	-1.9	-2408	-4.4
4	Բանջարաբոստանային մշակաբույսեր	**1292**	12305	**1150**	17970	-142	-10.9	+5665	+46
5	Կուտակվել է խոտ		71141		92799			+21658	+30
6	Կերային մշակաբույսեր	**993**	7365	**1722**	9250	+729	+73	+1885	+25.6
7	Տեխնիկական մշակաբույսեր	**95**	125	**29**	39	-66	-69.4	-86	-31
8	Պտուղ և հատապտուղ	**2314**	2864	**2355**	1838	+41	+1.8	-1026	-35
	Ընդամենը ցանքեր	**21596**		**22039**		**+443**	**+2**		
	Կատարվել է աշնանացան	**9514**		**10549**		+1035	+10.8		

Բնապահպանություն

Անտառային տնտեսություն

Մարզի անտառները լեռնային են, ունեն ընդգծված հողապաշտպան, ջրապաշտպան և կլիմայակարգավորիչ նշանակություն, ինչպես նաև սոցիալ-տնտեսական, գիտական բարձր արժեք և աչքի են ընկնում բուսական տեսակների բազմազանությամբ: Մարզի անտառկազմող հիմնական ծառատեսակներն են՝ հաճարենին, կաղնին, բոխին և սոճին, իսկ ոչ հիմնական տեսակներ են համարվում լորենին, կեչին, թեղին, հացենին:

Մարզի անտառների կառավարումն իրականացվում է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 5 անտառտնտեսությունների կողմից՝ Վանաձորի, Թումանյանի, Ջիլիզայի, Ստեփանավանի և Տաշիրի:

2022թ. ընթացքում պլանային և այլ հատումները կազմել են 16 565 մ^3:

2022թ. ընթացքում մթերվել և մարզի ազգբնակչությանը անվճար տրամադրվել է 25 435մ^3 թափուկ վառելափայտ: Թափուկ վառելափայտից օգտվել են շուրջ 3562 շահառու:

Լոռու մարզի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերում 2022թ. ընթացքում հայտնաբերված ապօրինի հատումները կազմել են 2 810 ծառ – 2 024 մ^3 ընդհանուր ծավալով:



Անվանումը	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.
Օրինական հատումներ (մ^3)	11 282	10 826	14 598	10 504	8 030	9 234	11 313	16 565
Թափուկ (մ^3)	10 954	9 910	13 167	1 2738	24 507	19 495	21 130	25 435
Ապօրինի հատումներ (մ^3)	219	332	697	1 751	4 284	7 033	3 946	2 024

ՀՀ Ոստիկանության մարզային վարչության հետ պարբերաբար ամփոփվել է մարզի տարածքում ապօրինի ծառահատումների, փայտանյութի անօրինական տեղաշարժի և օրինախախտումների վերաբերյալ տվյալները.

Անվանումը	Չափման միավոր	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.
Ստուգայցների թիվը	հատ	1186	1645	1959	1521	2641	1721
Ապօրինի անտառհատումների, փայտանյութի տեղափոխման և իրացման դեպքերի թիվը	հատ	222	233	328	289	454	441
Հայտնաբերված փայտանյութի քանակը	մ^3	1158	764	886	648	1018.8	993.2
Հարուցված քրեական գործերի թիվը	հատ	46	56	90	123	129	72
Վարչական պատասխանատվության ենթարկվծների թիվը	հատ	41	73	89	71	106	49

2022թ. ընթացքում պետ. բյուջեի և այլ միջոցներով «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Լոռու մարզի անտառտնեսությունների տարածքներում իրականացվել են.

- ✓ շուրջ 82.3 հա անտառտնկման աշխատանքներ;
- ✓ 37 հա տարածքի վրա բնական վերաճին օժանդակման միջոցառումներ;
- ✓ Շուրջ 475 հա տարածքի վրա անտառմշակույթների խնամքի և լրացման աշխատանքներ;
- ✓ շուրջ 10.6 հա տնկարանի ցանքսի, լրացման և խնամքի և այլ աշխատանքներ;
- ✓ շուրջ 7 կմ ցանկապատման աշխատանքներ;

Ստեղծվել է 193 ժամանակավոր աշխատատեղ, վերը նշված աշխատանքների վրա կատարված ծախսերի ընդհանուր գումարը կազմել է 61 մլն. 733,25 հազ. դրամ:

❖ 2023թ. «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Լոռու մարզի «անտառտնտեսություն» մասնաճյուղերում նախատեսվում է իրականացնել շուրջ 40 մլն. դրամի անտառտնկման, անտառվերականգնման աշխատանքներ: Կստեղծվի շուրջ 90 ծամանակավոր աշխատատեղ:

❖ Թեղուտի անտառվերականգնման ծրագրի շրջանակներում 2015-21թթ. ընթացքում Շնող համայնքում հիմնվել է 98.4 հա պտղատու այգի: 2022թ. ընթացքում ևս իրականացվել է 25 հա պտղատու այգիների հիմնում: Ծրագրի արժեքը 50 մլն. դրամ է, իրականացվել է 38 մլն. 948 հազ. դրամի աշխատանք: Մնացած 11 մլն. 52 հազ. դրամի աշխատանքները (աշնանը տնկած այգիների խնամքի և լրացման աշխատանքներ) կիրականացվեն 2023թ. գարնանը: Ստեղծվել է 6 ժամանակավոր աշխատատեղ:

❖ Իրականացվել է նաև 2021թ. հիմնված պտղատու այգիների խնամքի և լրացման աշխատանքներ: Իրականացված աշխատանքի արժեքը կազմել է 18 մլն. 450 հազ. դրամ: Ստեղծվել է 4 ժամանակավոր աշխատատեղ:

❖ 2023թ. նախատեսվում է ևս 21 հա պտղատու նոր այգիների հիմնում, որի արժեքը նախնական տվյալներով կազմում է 55 մլն. 136 հազ. 720 դրամ: Կստեղծվի 5 ժամանակվոր աշխատատեղ:

❖ «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամը Լոռու մարզում 2022թ. ընթացքում իրականացրել է Ստեփանավան, Սարատովկա, Ուրասար, Պրիվոլնոյե, Կողես, Կաթնաջուր բնակավայրերի համայնքային տարածքներում անտառտնկման, նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների խնամքի և լրացման, ինչպես նաև 2 կմ ցանկապատման աշխատանքներ:

✓ Համայնքային ծառատունկ ծրագրի շրջանակներում մարզի համայնքներին ու տարբեր կազմակերպություններին է տրամադրվել 1 մլն. 500 հազ. դրամի շուրջ 3000 տնկիներ:

✓ «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի և Եվրամիության՝ կանաչ համայնք դիմակայուն ապագա ծրագրի շրջանակներում, Լոռու մարզի երկու համայնքներում հիմնվել են տնամերձ տնկարաններ: Ստեփանավան համայնքում 18, Մարգահովտում՝ 13: Տնկարաններն ապահովել են սերմերով և կտրոններով՝ փորձելով հետագայում ստեղծել արդեն իսկ կայացած տնկարաններ շահառուների համար, որը նրանց կապահովի եկամուտ: Առաջիկա երկու տարում աճեցված տնկիները կգնվի ծրագրի շրջանակներում:

Ընդհանուր առմամբ 2022թ. «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամի կողմից Լոռու մարզում իրականցվել են անտառտնկման, նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների լրացման և խնամքի աշխատանքներ: Անտառվերականգնման ծրագրի կողմից մարզում տնկվել է 218 հազ. 900 սերմնաբուսակ, համայնքային ծառատունկ ծրագրի շրջանակներում համայնքներին և կազմակերպություններին է տրամադրվել շուրջ 3000 տնկի: Հիմնադրամի կողմից ներդրումները կազմել են շուրջ 128 մլն. 358 հազ. դրամ, ստեղծվել է 134 ժամանակավոր աշխատատեղ:

Անտառտնկման համար նոր տարածքների ընտրության հարցում մարզպետարանի բնապահպանության բաժինը սերտ համագործակցում է «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամի հետ:

Հիմնադրամը մարզում իրականացնում է նաև տարաբնույթ բնապահպանական ուսուցողական դասընթացներ, անվճար հիմունքներով համայնքներին է տրամադրում պտղատու և դեկորատիվ տնկիներ:

2023թ. մարզում նախատեսում է իրականացնել շուրջ 62,5 հա անտառպատման, ինչպես նաև նախորդ տարիներին հիմնված անտառտմշակույթների լրացման և խնամքի և 5 կմ ցանկապատման աշխատանքներ: Հիմնադրամի կողմից նախատեսվում է ՀՀ Լոռու մարզում իրականացնել շուրջ 141 մլն. 400 հազ. դրամի աշխատանքներ, որի ընթացքում ի թիվս այլա աշխատանքների կտնկվի շուրջ

250 հազ. սերմնաբուսակ: Վերոնշյալ աշխատանքների իրականացման ընթացքում կստեղծվի 178 ժամանակվոր աշխատատեղ:

❖ «Մայ ֆորեսթ Արմենիա» հասարակական բնապահպանական կազմակերպությունը 2019թ-ից իվեր ՀՀ Լոռու մարզում իրականացնում է գլխավորապես անտառտնկման և անտառհիմնման աշխատանքներ: Անտառվերականգնման/անտառհիմնման աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հիմնել է երկու տնկարան՝ Լոռու մարզի Դեբետ և Գուգարք համայնքներում և փակ արմատային համակարգով տնկիների աճեցման համար հիմնադրված ջերմոց Վանաձոր քաղաքում:

2022թ. ընթացքում «Մայ ֆորեսթ Արմենիա» բնապահպանական ՀԿ-ն իրականացրել է շուրջ 6 կմ ցանկապատում, անտառապատել է 150 հա մակերեսներով Սպիտակ համայնքի Ջրաշեն բնակավայրի 2-րդ տեղամասը, ինչպես նաև Սպիտակ համայնքի Ջրաշեն բնակավայրի 1-ին տեղամասի 110 հա և Շիրակամուտ բնակավայրի 30 հա տարածքներում իրականացրել է նախորդ տարի տնկած անտառմշակույթների լրացման և խնամքի աշխատանքներ: Իրականացված ծառտնկման և խնամքի միջոցառումների ընթացքում կազմակերպության կողմից մարզում տնկվել շուրջ 615 հազ. տնկի: Մասնավորապես մեծ ծավալ է ընդունել նաև տնկափոսերի մաքրումը և մուլչապատման աշխատանքները: Շուրջ 426 հազ. ծառի մուլչապատման աշխատանքներն իրականացվել են այդ ծառերից յուրաքանչյուր տնկափոսի համար: 2022թ. ընթացքում վերոնշյալ աշխատանքների իրականացման համար ընդունվել է հարակից համայնքներից՝ գարնանը 140 և աշնանը 190 ժամանակավոր աշխատողներ: Վերոնշյալ աշխատանքներն իրականացնելու համար ծախսվել է շուրջ 150 մլն. դրամ:

❖ 2023 թվականին «Իմ Անտառ Հայաստան» բնապահպանական կազմակերպությունն իր առջև նախանշել է ավելացնել տնկվող ծառերի քանակը՝ նպատակ ունենալով տնկել տարեկան 800 հազ. ծառ, ինչպես նաև ընդլայնել համագործակցությունը ՀՀ Լոռու մարզի համայնքների հետ: Այս պահին կազմակերպությունը ստացել է ՀՀ Լոռու մարզի Սպտակ համայնքի Սարահարթ, Շենավան և Արևաշող բնակավայրերում կազմակերպության կողմից շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման դրական պատասխան: 2023 թվականին նախատեսվում է նաև Ստեփանավան համայնքի Ուրասար բնակավայրի տեղամասի անտառտնկումը, որի համար ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանն է ներկայացվել ՇՄԱԳ փորձաքննության դիմումը: Նախատեսում է իրականացնել շուրջ 226 մլն. դրամի աշխատանքներ: Կստեղծվի շուրջ 150 ժամանակավոր աշխատողներ:

❖ Ընդհանուր առմամբ 2022թ. ընթացքում Լոռու մարզում իրականացվել է շուրջ 282 հա անտառտնկման, շուրջ 800 հա նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների խնամքի և լրացման աշխատանքներ, 37 հա տարածքի վրա բնական վերաճին օժանդակման միջոցառումներ, շուրջ 15 կմ ցանկապատման աշխատանքներ, ինչպես նաև Թեղուտի անտառվերականգնման ծրագրով Շնող համայնքում հիմնվել է 25 հա պտղատու այգի: Իրականացվել են նաև նախկինում կառուցված ցանկապատի վնասված հատվածների վերանորոգման աշխատանքներ:

❖ «ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների հարակից էկոհամակարգերի կայուն կառավարում և համայնքային կարողությունների զարգացում» դրամաշնորհային ծրագրի հայեցակարգում ընդգրկված են Հայաստանի Հանրապետության 3 մարզ, այդ թվում Լոռու մարզը՝ Մարգահովիտ և Ֆիոլետովո բնակավայրերով:

2022թ. ընթացքում Մարգահովիտ բնակավայրում տեղադրվել է խմոց , 3 ջերմոց յուրաքանչյուրը 50 մ² մակերեսով, 1 չորանոց, շահառուներին է տրամադրվել հանքային պարարտանյութեր և հումուս:

❖ Ֆիոլետովո համայնքում կառուցվել է հեռագնա արոտների 1.8 կմ երկարությամբ ճանապարհ, 750 մ երկարութկյամբ ջրատարով 24 մ երկարությամբ ջրախմոց, 3 ջերմոց յուրաքանչյուրը 50 մ² մակերեսով, բնակչությանը է տրամադրվել պտղատու ծառերի տնկիներ և բանջարեղենի սածիլներ: Ֆիոլետովոյի միջնակարգ դպրոցին տրամադրվել պտղատու ծառերի տնկիներ և հիմնվել է պտղատեւ այգի: Իրականացվել է 30 մլն. 616,7 հազ. դրամի աշխատանքներ, ստեղծվել են 24 հիմնական և 32 ժամանակավոր աշխատատեղեր:

❖ ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի Կանաչ Կլիմայի հիմնադրամի կողմից «Հայաստանի անտառների կայունություն, հարմարվողականության բարձրացում և գյուղական կանաչ աճի խթանում մեղման միջոցով» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ՀՀ Լոռու մարզում փակ արմատային համակարգով տնկիների աճեցման նպատակով կառուցվել են 500 մ² մակերեսով 2 ջերմատներ, որոնք կահավորվել են տնկիների աճեցման կոնտեյներներով: Իրականացվել է 44 մլն. 830 հազ. դրամի աշխատանքներ, ստեղծվել են 6 հիմնական և 15 ժամանակավոր աշխատատեղ:

Ծրագրի շրջանակներում 2023թ. Լոռու մարզում նախատեսվում է իրականացնել 74 մլն. 600 հազ. դրամի աշխատանքներ, կստեղծվի 15 հիմնական և 22 ժամանակավոր աշխատատեղ:

Լոռու մարզային փրկարարական վարչության հետ համատեղ մշակվում և պարբերաբար անց են կացվում «Անտառների հրդեհների հրդեհաշիջման կազմակերպում» թեմայով շտաբային ուսումնավարժություններ:

Ընդերքօգտագործում և շրջակա միջավայր

Լոռու մարզը հարուստ է տարբեր տեսակի օգտակար հանածոներով և իր նշանակությամբ երկրորդն է հանրապետությունում:

Մարզի տարածքում 44 կազմակերպություններ ունեն ընդերքարդյունահանման արտոնագրեր, որոնցից 6-ը մետաղական:

Քննարկվել են ՀՀ շրջակա միջավայրի պահպանությանն և ընդերքօգտագործմանն առնչվող մի շարք օրենքների, կառավարության որոշումների և այլ իրավական ակտերի նախագծեր, որոնց վերաբերյալ Լոռու մարզպետարանի կողմից լիազոր մարմիններին ներկայացվել են համապատասխան առաջարկություններ:

Մարզի ընդերքի օգտագործման և օրինականության վերաբերյալ պահանջվող ձևաչափով համապատասխան գերատեսչություններին պարբերաբար ներկայացվել են տեղեկանքներ:

ՀՀ պետական բյուջեի կողմից 2017-2022թթ. բնապահպանական և առողջապահական ծրագրեր իրականացնելու համար Լոռու մարզի վնասակար ազդեցության ենթարկվող համայնքներին տրամադրված գումարների վերաբերյալ տվյալները հետևյալն են.

հազ. դրամ

Հ/Հ	Համայնքներ	Տարիները				
		2017թ.	2018թ.	2019թ.	2021թ.	2022թ.
1	Ալավերդի	57 815.6	170 268.75	76 266.4	370 994.0	
2	Օձուն	49 857.3		27615.6	76 522.5	
3	Ախթալա	1 874.3			3 061.9	
4	Շնող	2 120.0				4 683.1
Ընդամենը Լոռու մարզ		111 667.2	170 268.75	103 882.0	450 578.5	4 683.1

Լոռու մարզի վնասակար ազդեցության ենթարկվող համայնքներին 2022թ. համար ՀՀ պետական բյուջեի կողմից նախատեսվել է Շնող համայնքին հատկացնել 4 մլն. 717.2 հազ դրամ: Իրականացվել է Շնող համայնքում արևային էներգիայով ինքնալիցքավորվող լուսատուների տեղադրման աշխատանքներ: Իրականացված ծրագրի փաստացի արժեքը կազմել է 4 մլն. 683,1 հազ. դրամի: Աշխատանքներն ավարտվել են: Տնտեսվել է 34 հազ. 100 դրամ: Ստեղծվել է 4 ժամանակավոր աշխատատեղ:

Լոռու մարզի վնասակար ազդեցության ենթարկվող համայնքներին 2023թ. համար ՀՀ պետական բյուջեից նախատեսվում է հատկացնել 98 մլն. 54 հազ. դրամ, որից

- Շնող համայնքին 92 մլն. 500 հազ. դրամ՝ Շնող համայնքի վարչական տարածքի արևմտյան հատվածի անջրդի հողատարածքների և Շնող ու Թեղուտ բնակավայրերի տնամերձ հողամասերի ոռոգման ցանցի կառուցման համար:
- Սպիտակ համայնքին 5 մլն. 554 հազ. դրամ՝ Սպիտակ համայնքի Սպիտակ բնակավայրի կարիքների համար էներգախնայող led լուսատուների ձեռք բերման համար:

2022թ. ընթացքում Լոռու մարզի 5 համայնքներում իրականացվել է շրջակա միջավայրի պահպանության և ընդերքօգտագործման բնագավառների մասնագիտական հսկողություն ու արդյունքները ներկայացվել տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացներում (ՇՄԱԳ) Լոռու մարզպետարանի բնապահպանության բաժինը՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության, ՏԻՄ-երի և այլ շահագրգիռ կառույցների հետ համատեղ կազմակերպել և ակտիվ մասնակցություն է ունեցել բազմաբնույթ հասարակական լսումների և քննարկումների:

Մարզում էկոլոգիական վիճակը բարելավելու և բնապահպանական այլ ծրագրեր իրականացնելու համար Լոռու մարզպետարանը սերտ համագործակցում է պետական կառավարման մարմինների, դոնոր կազմակերպությունների և ՀԿ-ների հետ:

ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

❖ 2022թ. կազմվել և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվել հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների փոփոխման 29 հողաշինական գործ, որոնք միջգերատեսչական հանձնաժողովի կողմից ստացել են դրական եզրակացություն:

❖ 2022 ընթացքում Լոռու մարզի համայնքներում փոփոխության է ենթարկվել 18.28 հեկտար հողամասերի նպատակային նշանակություն, որի արդյունքում համայնքային բյուջե է մուտքագրվել 27516.78 հազ. դրամ կադաստրային արժեքների տարբերություն:

❖ 2022թ. մարզի համայնքներում օտարվել է 154 միավոր հողամաս 32.75 հեկտար մակերեսով: Աճուրդների մեկնարկային գները սահմանվել են կադաստրային արժեքներով կամ գերազանցել են այն: 2022թ. հողամասերի աճուրդներից համայնքների բյուջե է մուտքագրվել շուրջ 171856.4 միլիոն ՀՀ դրամ: Օտարված 144 միավորի հողամասերի օտարման դեպքում հողամասերը օտարվել են հողամասի կադաստրային արժեքից բարձր գնով, իսկ 10 միավոր հողամաս օտարվել է կադաստրային արժեքով:

❖ Հաշվետու ժամանակահատվածում մարզի համայնքներում իրականացված հողերի աճուրդային վաճառքի արդյունքում ձևավորված գումարը կազմել է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված նվազագույն մեկնարկային արժեքի 113%-ը:

❖ Ընդհանուր առմամբ 2022թ. վարձակալության տրամադրման համար նախատեսնված 24463 հա պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից փաստացի վարձակալության է հանձնվել 4440,92հա 3567.4 հազ.դրամ վարձավճարով, փաստացի գանձվել է 3653.45 հազ դրամ վարձավճար, հավաքագրումը կազմել է 102 %:

❖ 2022 թ. վարձակալության տրամադրման համար նախատեսնված 98076 հա համայնքային և պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից փաստացի վարձակալության է հանձնվել 46950.1. հա 20944.6 հազ. դրամ վարձավճարով, փաստացի գանձվել է 217582.7 հազ դրամ վարձավճար: Լոռու մարզի համայնքների կողմից հողերի վարձակալությամբ տրամադրման վարձավճարների հավաքագրումը կազմել է 103.9 %

❖ ՀՀ կառավարության 2000թ. հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետությաան հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 656 որոշման համաձայն կազմվել և ժամանակին ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե և ՀՀ էկոնոմիկայի նախարարություն է ներկայացվել մարզի հողային հաշվեկշիռը 2021թ. հուլիսի 1-ի դրությամբ:

Լոռու մարզի հողային հաշվեկշռի համաձայն մարզի վարչական տարածքը կազմում է 379864.5 հա, որից գյուղատնտեսական նշանակության 250844,0 հա, բնակավայրերի՝ 16522.9 հա, արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր՝ 3989.8 հա, էներգետիկայի կապի տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 1675 հա, հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 2405.6 հա, հատուկ նշանակության՝ 1217.4 հա, անտառային՝ 100603.0 հա, ջրային՝ 2606.7 հա:



❖ Գյուղատնտեսական նշանակության՝ 250844.0 հա հողերից, որից վարելահող 41977.1 հա, բազմամյա տնկարկ 447.6 հա, խոտհարք 35058.4 հա, արոտ 145593.8 հա, այլ հողատեսք 27767.1 հա: Քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության 46233.7 հա հողամասերից չի օգտագործվում՝ 3761.82 հա վարելահող, բազմամյա տնկարկ 45.59 հա, խոտհարք 1562.85 հա, արոտ 2261.68 հա, այլ հողատեսք 7.48 հա:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

❖ Նախապատրաստվել և անցկացվել է մարզպետի մոտ մարզի բոլոր համայնքների ղեկավարների և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների ղեկավարների մասնակցությամբ խորհրդակցություններ:

❖ Կազմակերպվել և անց է կացվել մարզի խորհրդի նիստ:

❖ Հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման և տեղական ինքնակառավարման բնագավառում օրենսդրությամբ մարզպետին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման նպատակով ներկայացվել և ընդունվել են մարզպետի 16 որոշումներ:

❖ Աջակցություն է ցուցաբերվել թիվ 22, 24 և 25 տարածքային ընտրական հանձնաժողովներին՝ համամասնական ընտրակարգով անցկացված համայնքների ավագանիների ընտրությունների նախապատրաստման և անցկացման կազմակերպման աշխատանքներում:

❖ Իրականացվել է ՀՀ օրենսդիր, գործադիր, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններից, հասարակական կազմակերպություններից, քաղաքացիներից ստացված գրությունների քննարկման աշխատանքների համակարգումը:

❖ Ներկայացվել է պաշտոնական թղթակցությունների, հանձնարարականների կատարման 644 պատասխանների նախագծեր:

❖ Ուսումնասիրվել է քաղաքացիներից ստացված 85 դիմում-բողոքներ և ներկայացվել են դրանց պատասխանների նախագծեր:

❖ Ըստ անհրաժեշտության և ստացված հանձնարարականների կազմվել և համայնքների ՏԻՄ-երին է ուղարկվել 208 շրջաբերական գրություններ:

❖ Ապահովվել է մարզի համայնքներում ՏԻՄ-երի սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողության աշխատանքներին վարչության մասնագետների մասնակցությունը:

❖ 2022 թվականին ստացվել են համայնքների ավագանիների 1202 և համայնքների ղեկավարների 7193 որոշումներ:

❖ Ըստ անհրաժեշտության աշխատանքներ են տարվել հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների հետ (Լոռու մարզային զինկոմիսարիատ, ոստիկանության մարզային վարչություն, վիճակագրության ծառայության մարզային բաժին,

փրկարարական մարզային վարչություն, անձնագրային և վիզաների վարչության տարածքային ստորաբաժանումներ, այլ ծառայություններ):

❖ Հատուկ ուշադրություն է դարձվել ՀՀ օրենսդիր, գործադիր, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններից, հասարակական կազմակերպություններից, քաղաքացիներից ստացված գրությունների և դիմումների առավել խորությամբ քննարկմանը և դրանց հստակ պատասխանների ներկայացմանը:

❖ Ապահովվել է ՀՀ Լոռու մարզպետի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2022 թվականի հիմնական միջոցառումների պլանը հաստատելու մասին» ՀՀ Լոռու մարզպետի որոշման նախագծի կազմման աշխատանքները, ապահովվել են պլանով սահմանված բոլոր միջոցառումների իրականացումը:

❖ Կազմվել, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հետ համաձայնեցվել և հաստատվել են «Լոռու մարզի քաղաքացիական պաշտպանության» պլանը, «Լոռու մարզի տարահանման» պլանը, «Լոռու մարզի տարահանված բնակչության կենսաապահովման գործընթացի նախապատրաստման» պլանը:

❖ Մարզի համայնքների կողմից 2022 թվականի ընթացքում մշակվել են Սպիտակ, Փամբակ, Թումանյան և Լերմոնտովո համայնքների աղետների ռիսկերի պլանները, ինչպես նաև համայնքների նախադպրոցական ուսումնական հաստատությունների աղետների ռիսկերի պլանները՝ հաշվի առնելով ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից մշակած մեթոդական ուղեցույցը:

❖ Վարչությունը մասնակցել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից 2022թ. ապրիլի 25-ից 29-ը անցկացված Լոռու մարզի քաղաքացիական պաշտպանության վիճակի համալիր գնահատմանը:

❖ Հաստատվել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ում 2022 թվականի ուսումնական տարում ՀՀ Լոռու մարզպետարանի, մարզի համայնքների և կազմակերպությունների ղեկավար աշխատողների և մասնագետների պատրաստման պլանը: Ապահովվել է ըստ պլանի ունկնդիրների մասնակցությունը դասընթացներին: 41 ունկնդիրներից դասընթացներին մասնակցել են 36-ը:

❖ ՀՀ Լոռու մարզպետի մոտ և մարզի Տաշիր, Սարչապետ, Մեծավան, Ալավերդի, Ախթալա, Շնող, Օձուն համայնքներում կազմակերպվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից մշակված և մարզպետներին տրամադրած մարզի վերոնշյալ համայնքների միավորման ծրագրի նախագծի աշխատանքային քննարկումներ՝ համայնքների ղեկավարների մասնակցությամբ:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

❖ 2022 թվականին մարզի 2 համայնքներում անցկացվել են՝ Ալավերդի, Տաշիր միավորված համայնքների համամասնական ընտրակարգով համայնքների ավագանիների ընտրություններ, ինչպես նաև Լոռի Բերդ և Գյուլագարակ համայնքների համամասնական ընտրակարգով ավագանու հերթական ընտրություններ:

❖ Սահմանվել և իրականացվել է հսկողություն 2022 թվականի ընթացքում համայնքների ղեկավարների, համայնքապետարանների աշխատակազմերի կառուցվածքային ու առանձնացված ստորաբաժանումների, համայնքային ենթակայության կազմակերպությունների և հիմնարկների

աշխատակիցներին չտրամադրված արձակուրդները տրամադրելու ուղղությամբ և բոլոր աշխատակիցներին տրվել են չօգտագործված արձակուրդները:

❖ Մշտական մեթոդական և գործնական օգնություն է ցուցաբերվել մարզի տեղական ինքնակառավարման մարմիններին ՏԻՄ ոլորտի գործող օրենսդրության և հատկապես «Տեղական ինքնակառավարման մասին» և «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքների կիրարկման և գործավարության կազմակերպման հարցերում: Մասնավորապես 2022թ. միավորված համայնքներին է տրամադրվել մեթոդական ձեռնարկներ և բոլոր անհրաժեշտ նյութերը՝ ավագանու կանոնակարգ, նիստեր, կայացվելիք որոշումների օրինակելի ձևեր, կարգեր և այլն:

❖ Մարզպետարանի ինտերնետային կայքում համայնքների ՏԻՄ-երի վերաբերյալ տվյալները թարմացնելու նպատակով տեղեկատվություն է ներկայացվել զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնին:

❖ Պարբերաբար իրականացվել է մարզի համայնքների կողմից ՀԿՏՀ շահագործման մշտադիտարկում:

❖ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից ստացվել, տեսակավորվել և համայնքապետարաններին է տրամադրվել 2022թ.-ի հունվարի 1-ի և հուլիսի 1-ի դրությամբ հաշվառված քաղաքացիների ցուցակները:

❖ Աշխատանքներ են իրականացվել համայնքների թվով 16 ՀՈԱԿ-ների տնօրենների թափուր պաշտոնների մրցույթների կազմակերպման և անցկացման աշխատանքերում: Հայտարարված 16 մրցույթներից կայացել են 4-ը: Մրցույթներին մասնակցելու համար դիմել են 5 քաղաքացիներ, հաղթող են ճանաչվել և տնօրենների պաշտոններում նշանակվել են 4-ը:

❖ Աշխատանքներ են իրականացվել մարզի 16 համայնքների ինտերնետային կայքերի շահագործման մակարդակը բարձրացնելու, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջներին համապատասխանացնելու, համայնքների կողմից այդ կայքերում առկա նյութերի թարմացման և բնակչությանը ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության և հրապարակայնության ապահովման ուղղությամբ:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

❖ Համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար հայտարարվել են 250 մրցույթներ, որոնցից կայացել են 186-ը: Մրցույթներին մասնակցելու համար դիմել են 299 քաղաքացիներ: Մրցույթների արդյունքում հաղթող ճանաչվել և թափուր պաշտոններում նշանակել են 177-ը:

❖ Ապահովվել են համայնքային ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար հայտարարված մրցույթների հրապարակայնությունը՝ մարզպետարանի կայք էջում, ֆեյսբուքյան էջում, http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում մշտապես տեղադրվել են հայտարարված մրցույթների վերաբերյալ տեղեկատվությունը, բացի այդ պատշաճ կերպով կազմվել և սահմանված ժամկետներում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար հայտարարված մրցույթների հայտարարությունները և ժամանակացույցերը, մրցույթներին դիմած քաղաքացիների թվաքանակին վերաբերյալ տեղեկատվությունը: Մրցույթների արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը ամիսը մեկ անգամ ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն և հանրային իրազեկման նպատակով

դրանք տեղադրվել են մարզպետարանի կայքում: Աջակցել ենք համայնքապետարաններին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման ապահովման հարցում:

❖ Ճշգրտվել և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն են ներկայացվել վերապատրաստման ենթակա համայնքային ծառայողների ցուցակները:

❖ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի կողմից հաստատված ծրագրով, պլան գրաֆիկով և սահմանված չափանիշներին համաձայն «Աութսորս» ՍՊԸ-ի կողմից մարզի համայնքներում 3 խմբով իրականացվել են թվով 60 համայնքային ծառայողների վերապատրաստումներ:

❖ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հանձնարարությամբ Գերմանական միջազգային համագործակցության ընկերության GIZ-ի կողմից կազմակերպվել է մարզի միավորված համայնքներում համայնքապետարանների աշխատակազմերի քարտուղարների վերապատրաստման կարիքների գնահատման աշխատանքների անցկացումը և իրականացվել է վերջիններիս վերապատրաստում:

❖ 2022 թվականի ընթացքում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին է նոր միավորմած Ալավերդի, Սպիտակ, Տաշիր, Թումանյան, Փամբակ, Լերմոնտովո համայնքների համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկերի նախագծերը: Քննարկվել է Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկությունը և ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

❖ Մարզի համայնքապետարանների աշխատակազմերից մշտապես հավաքագրվել են համայնքային ծառայողների մասին անհրաժեշտ տեղեկությունները (գրանցամատյան Ձև 1, 2) և աշխատակազմերի, բյուջետային հիմնարկների և համայնքայինկազմակերպությունների հաստիքացուցակները:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

2022թ. Լոռու մարզում գործել է.

❖ 5 բուհ, որից 1-ը ոչ պետական, 11 միջին մասնագիտական, որից 1-ը ոչ պետական, 2 արհեստագործական պետական ուսումնական հաստատություններ

❖ 73 նախադպրոցական ուսումնական հաստատություն՝ 4176 երեխաներով

❖ 163 հանրակրթական ուսումնական հաստատություն, այդ թվում 80-ը՝ միջնակարգ, 68-ը՝ հիմնական, 1-ը՝ հատուկ /մաթեմատիկայի և բնագիտական առարկաների խորացված ուսուցմամբ/, 11 ավագ դպրոց և 3 վարժարան:

❖ Մարզային ենթակայությամբ գործող 149 դպրոցներն ընդգրկում են՝

❖ միջնակարգ դպրոցներ - 80

❖ վարժարան - 1

❖ հիմնական դպրոցներ - 68

- Մարզի դպրոցներում ուսուցիչ-աշակերտ հարաբերակցությունը 01.01.2023.-ի դրությամբ կազմել է 1/8,6

Նախադպրոցական կրթություն

❖ 2022 թվականին Լոռու մարզում գործել է 73 նախադպրոցական ուսումնական հաստատություն և 36 դպրոցահեն նախակրթարան: 5-6 տարեկանների թիվը նախադպրոցական ուսումնական հաստատություններում 1331 է, նախակրթարաններում՝ 548: 5-6 տարեկան երեխաների ընդհանուր թվի 44.9%-ը ստանում են նախադպրոցական կրթական ծառայություններ:

❖ Գործող նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքային հզորությունը կազմում է 6352 երեխա/տեղ, որի միայն 65.7%-ն է շահագործվում:

❖ Գյուղական համայնքների ՆՈՒՀ-երում ընդգրկված երեխաների թիվը 1339 է, որը կազմում է մարզի ՆՈՒՀ-երում ընդգրկված երեխաների ընդհանուր թվի 32%-ը: Այս բացը մասամբ լրացնում են գյուղական համայնքների դպրոցների կազմում գործող նախակրթարանները, որտեղ ընդգրկված է 352 5-6 տարեկան երեխա:

❖ 2018-2022 թվականներին նախադպրոցական հաստատությունների քանակի և դրանցում ընդգրկված երեխաների թվի դինամիկան տրված է Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

Տարեթիվը	Մանկապարտեզների թիվը	Հաճախող երեխաների թիվը	5-6 տարեկան երեխաների թիվը
2018	70	4751	1833
2019	72	5055	1870
2020	68	3369	1544
2021	71	4351	1761
2022	73	4176	1331

Միջնակարգ կրթություն

❖ Մարզային ենթակայության 149 դպրոցում աշխատում է 2445 ուսուցիչ, 1 դասարանում սովորող աշակերտների միջին թիվը 16.8 է:

❖ Հանրակրթական հաստատությունների հիմնական ցուցանիշները ըստ տարիների ներկայացված են Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2.

Ցուցանիշներ	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.
Դպրոցների քանակը	149	149	149	149	149
Աշակերտների թվաքանակը այդ թվում՝	26751	27499	27947	28430	28518
/1-ին/ դասարան	3118	3018	2995	3075	2946
/9-րդ/ դասարան	2346	2356	2576	2539	2692
/12-րդ/ դասարան	498	778	735	785	816
Միջին հաշվով 1 դպրոց հաճախում են	179	184	187	191	191

Դասարանների միջին քանակը մեկ դպրոցում	10.7	10.9	11	12,4	11.4
Միջին հաշվով մեկ դասարան հաճախում են	16.7	16.9	16.9	15,4	16.8
Ուսուցիչ-աշակերտ հարաբերակցություն	1/8.5	1/9.3	1/10	1/9.8	1/8.6

Գծապատկերից երևում է, որ 2022 թվականին նախորդ տարվա համեմատ արձանագրվել է աշակերտների թվի աճ՝ 88-ով:

❖ 2022 թվականին մարզի 149-ից 146 հանրակրթական ուսումնական հաստատություններից վերապատրաստվել և ատեստավորման ներկայացվել են 849 ուսուցիչներ, որոնցից 827-ի համար ատեստավորման հանձնաժողովը կայացրել է «համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին» որոշումը, իսկ 2 ուսուցչի համար կայացվել է «չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին» որոշումը, որից 1-ը վերապատրաստման արդյունքում չի հավաքել համապատասխան կրեդիտներ, 1-ը՝ չունի մանկավարժական կրթություն և համապատասխան աշխատանքային ստաժ: Մարզի 3 դպրոցներ՝ Աթանի հիմնական, Այգեհատի հիմնական և Լորուտի միջնակարգ դպրոցները ուսուցիչներ չեն ներկայացրել:

❖ Ըստ դպրոցների տվյալների՝ 2022թ. մարզի տարածքում հայտնաբերվել են պարտադիր ուսուցումից դուրս մնացած 82 երեխա, որից 45-ը՝ Լերմոնտովո, 6-ը՝ Ֆիոլետովո համայնքների երեխաներն են (հիմնականում՝ մոլոկաններ), 8-ի մոտ առկա են առողջական խնդիրներ, մնացածի պատճառներն այլ են՝ հիմնականում կապված արտերկրում գտնվելու հետ:

Պարտուսից դուրս մնացած երեխաների ծնողների կամ խնամակալների հետ անց են կացվել բացատրական աշխատանքներ:

❖ Կրթության ոլորտում աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրին միտված մարզի՝ պարտուսի տարիքի երեխաների ընդգրկվածությունը հանրակրթական համակարգում կազմում է 99,8%:

❖ Խորհրդատվական օգնություն է ցուցաբերվել մարզի 149 հանրակրթական դպրոցների տնօրեններին, աշխատակիցներին և կոլեգիալ կառավարման մարմիններին՝ խորհուրդներին:

❖ 2022 թվականի ընթացքում ՀՀ Լոռու մարզային ենթակայության թվով 149 հանրակրթական դպրոցներում կազմակերպվել են դպրոցի տնօրենի թափուր պաշտոնների համար 53 մրցույթներ: 2022 թվականի ընթացքում ուսուցչի թափուր տեղի համար հայտարարվել է շուրջ 2340 մրցույթ:

❖ 2022 թվականին ՀՀ Լոռու մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններից 121 դպրոցների 683 երթևեկող ուսուցիչների և 24 դպրոցի 210 աշակերտի փոխհատուցվել է 54077.1 հազար դրամ ճանապարհածախս:

❖ Ի կատարումն ՀՀ վարչապետի՝ 21.06.2022թ. թիվ 726-Ա որոշման 3-րդ կետի՝ նախապատրաստվել է մարզի սոցիալապես անապահով, ծնողազուրկ 7-13 տարեկան 300 աշակերտների ցուցակը, որոնք իրենց ամառային հանգիստը 2 հերթափոխով անց են կացրել Հանքավանի «Լուսաբաց» մանկական առողջարարական ճամբարում: Պատշաճ մակարդակով կազմակերպվել է երեխաների մեկնումը եւ վերադարձը:

❖ Մարզային ենթակայության թվով 149 հանրակրթական ուսումնական հաստատություններից 104-ը ջեռուցումը իրականացնում է լոկալ համակարգով /բնական գազով՝ կաթսայատուն կամ փոքր հզորության կաթսա/, 21-ը գազի վառարանով, 16-ը վառելափայտով, 15-ը էլեկտրականությամբ, 2-ը հեղուկ վառելիքով: Թվով 2 դպրոց օգտագործում է երկու էներգակիր, թվով 4 դպրոց միաժամանակ ջեռուցվում են գազի վառարաններով և փոքր հզորության ջեռուցման կաթսաներով:

❖ Նորոգման աշխատանքներ են իրականացվել ՀՀ Լոռու մարզային ենթակայության թվով 109 հանրակրթական ուսումնական հաստատություններում.

❖ Նոր դպրոցական շենքային համալիրների կառուցման աշխատանքներ են իրականացվում Ստեփանավանի թիվ 3, Ալավերդու թիվ 2, Վանաձորի թիվ 19, Մեդովկայի և Հագվու դպրոցներում:

❖ Մասնակի նորոգման աշխատանքներ են իրականացվել թվով 57 դպրոցներում /Վանձորի թիվ 3, 4, 8, 16, 20, 23, 24, 25, 27, 28, 30, Արջուտի, Ազնվաձորի, Բազումի, Գուգարքի, Դարբասի, Եղեգնուտի, Մարգահովիտի, Շահումյանի, Վահագնիի, Ֆիոլետովոյի, Ձորագյուղի, Փամբակի, Սպիտակի թիվ 2, 3 ,8, Արևաշող, Գեղասարի, Գոգարանի, Լեռնավանի, Մեծ Պարնու, Ջրաշենի, Սարահարթի, Ստեփանավանի թիվ 2, 6, Ագարակի, Հոբարձու, Սվերդլովի, Վարդաբլուրի, Արմանիսի, Պուշկինոյի, Ուրասարի, Ալավերդու թիվ 1, 11, Թումանյանի, Շամլուղի, Լորուտի, Ճոճկանի, Շնողի, Ջիլիզայի, Ծաթերի,Կարմիր Աղեգու, Դաշտադեմի, Ձյունաշողի, Միխայլովկա /:

❖ 2022 թվականին ՀՀ Լոռու մարզային ենթակայության 7 ուսումնական հաստատություններում սկսվել են մարզադահլիճների կառուցման կամ հիմնանորոգման աշխատանքներ / Վանաձորի Խ. Աբովյանի անվան N9 հիմնական դպրոցի, Վանաձորի N23 հիմնական դպրոց, Ստեփանավանի N1 վարժարան, Ագարակի միջնակարգ դպրոց, Վարդաբլուրի միջնակարգ դպրոց, Վանաձորի Ղևոնդ Ալիշանի անվան N27 հիմնական դպրոցԱլավերդու N12 հիմնական դպրոց/:

❖ Ջեռուցման համակարգ է մոնտաժվել Արջուտի, Սարատովկայի, Մեծավանի թիվ 1, Սարալանջի, Ալավերդու թիվ 7 դպրոցներում:

❖ Գազաֆիկացում է իրականացվել Արջուտի և Սարալանջի դպրոցներում:

❖ Ջեռուցման համակարգի վերափոխման, մասնակի նորոգման աշխատանքներ են իրականացրել թվով 16 դպրոցներում /Վանաձորի թիվ 6, 9, 23 , 24, 25, Անտառամուտի, Լեռնապատի, Ձորագյուղի, Լեռնանցքի, Կաթնաջրի, Ծաղկաբերի, Լեռնանցքի, Սարամեջի, Ագարակի, Սվերդլովի, Պրիվոլնոյեի/:

❖ Տանիքի փոխարինման՝ այդ թվում մասնակի նորոգման աշխատանքներ են իրականացվել թվով 13 դպրոցներում՝ /Վանաձորի թիվ 8, 24, 27, Լերմոնտովոյի, Սպիտակի թիվ 1, 2, Կաթնաղբյուրի, Լեջանի, Ալավերդու թիվ 11, Աքորու, Արդվու, Մղարթի, Ձորամուտի/:

❖ Թեքահարթակներ են կառուցվել կամ համապատասխանեցվել շինարարական նորմերին թվով 18 դպրոցում /Վանաձորի թիվ 4, 9, 25, 27, 30, Լեռնապատի, Ձորագյուղի, Սպիտակի թիվ 2, 3, Արևաշողի, Ստեփանավանի թիվ 1, 2, Ալավերդու թիվ 1, 12, Շամլուղի, Աքորու, Աթանի, Սարատովկայի/:

❖ Պատուհաններ և դռներ են փոխարինվել թվով 34 դպրոցներում / Վանաձորի թիվ 3, 12, 16, 21, 23, 25, 30, Ազնվաձորի, Լերմոնտովոյի, Մարգահովիտի, Ֆիոլետովոյի, Ձորագյուղի, Արևաշողի, Ծաղկաբերի,Կաթնաջրի, Մեծ Պարնու, Ջրաշեն, Ստեփանավանի թիվ1, Բովաձորի, Գյուլագարակի, Սվերդլովի, Վարդաբլուրի,Կողեսի,Պուշկինոյի,Ալավերդու թիվ 10, Թումանյանի, Շամլուղի, Արևաձագի, Աքորու, Հաղպատի, Ճոճկանի,Ջիլիզայի, Քարկոփի, Ծաթերի/:

❖ Հատակների նորոգման աշխատանքներ են իրականացվել թվով 16 դպրոցներում /Վանաձորի թիվ 4, 8, 30, Ազնվաձորի, Ֆիոլետովոյի, Սպիտակի թիվ 8, Հարթագյուղի, Սարամեջի, Բովաձորի, Գյուլագարակի, Արմանիսի, Ուրասարի, Շամլուղի, Նեղոցի, Մեծավնի թիվ 1, Միխայլովկա/:

❖ ՀՀ Լոռու մարզի անհետաձգելի համարվող կապիտալ բնույթի ծրագրերի ցանկում ընդգրկվել են թվով 17 դպրոցներ, որոնցից 16-ում /Վանաձորի թիվ 8, 9, 16, 20, 21, 24/2ծրագիր/, 28, Գուգարքի հիմնական, Լեջանի միջնակարգ, Սպիտակի թիվ 2, Ծաթերի հիմնական, Աքորու միջնակարգ, Դարպասի միջնակարգ/ իրականացվել են 99,806,400 ՀՀ դրամի շինարարական աշխատանքներ:

Առարկայական օլիմպիադաների կազմակերպում

2022թ. առաջին կիսամյակի ընթացքում ամփոփվել են 2021-2022 ուստարվա դպրոցական առարկայական օլիմպիադաների արդյունքները: Լոռու մարզը ունեցել է թվով 60 մրցանակակիր, զիջելով միայն մայրաքաղաքին, որոնցից՝

- **1-ին կարգի դիպլոմ է ստացել 4 աշակերտ,**
- **2-րդ կարգի դիպլոմ՝ 9 աշակերտ,**
- **3-րդ կարգի դիպլոմ՝ 25 աշակերտ**
- **գովասանագիր՝ 22 աշակերտ:**

Հատուկ /ներառական/ կրթություն

2022-2023 ուստարում ներառական կրթություն են իրականացրել մարզի 118 հանրակրթական դպրոցներ՝ 701 վկայագրված աշակերտների համար, որոնցից 508-ը՝ միջին ծանրության աստիճանի են, 175-ը՝ ծանր, 18-ը՝ խորը:

Ռազմահայրենասիրական դաստիարակություն

2022թ-ի ընթացքում ՀՀ Լոռու մարզպետարանի Կրթության, մշակույթի և սպորտի վարչության կողմից կազմակերպվել և իրականացվել են ռազմահայրենասիրական դաստիարակության մի շարք միջոցառումներ. մարզի աշակերտները մասնակցել են հանրապետական ռազմամարզական խաղերին, մասնագիտական կողմնորոշան նպատակով աշակերտների հետ կազմակերպվել են հանդիպումներ ՊՆ բարձրաստիճան պաշտոնյաների: Լոռու մարզի երկրապահների միության միջոցով, երկու հերթափոխով կազմակերպվել է թվով 102 անապահով աշակերտների հանգիստը Գեղարքունիքի մարզի Ծովինար համայնքի հարևանությամբ գտնվող «Եռասերունդ Երկրապահ» ուսումնամարզական և հանգստի համալիրում :

Դասագրքերի և ուսուցչի ձեռնարկների բաշխումը

Դասագրքերի շրջանառու համակարգով 2022-2023 ուստարվա սկզբում բաշխվել է 19 անուն 25 388 դասագիրք: Դասագրքերի վարձավճարների գանձումը մարզում կատարվել է 100 տոկոսով: Բաշխվել է տարրական դասարանների 24 անուն 64 320 դասագիրք:

ՄՇԱԿՈՒՅԹ

❖ Ամանորյա և Սուրբ ծննդյան օրվան նվիրված հանդիսությունների կազմակերպում և անցկացում:

❖ Ամանորին նվիրված թատերականացված ներկայացումներ են կազմակերպվել Վանաձորի «Հայքի» հրապարակում, Հովի.Աբեյանի անվան պետական դրամատիկական թատրոնում, Վանաձորի քաղաքապետարանի Տիկնիկային և «Բոհեմ» կամերային թատրոնում, Գուսան Զաքարյանի անվան մշակույթի տանը և այլ թատերականացված խմբերի ելույթներ մշակութային տարբեր

հաստատություններում:Նմանատիպ հանդիսություններ են կայացել մարզի այլ համայնքներում: Մասնավորապես Ալավերդի, Սպիտակ, Ստեփանավան, Տաշիր և այլ:

❖ Հայոց բանակի կազմավորման 30- ամյակին նվիրված միջոցառումների սկիզբը հունվարի 28-ին ազդարարվեց Վանաձորի զինվորական պանթեոն այցով: Մարզային ու քաղաքային իշխանության ներկայացուցիչներ, ազատամարտիկներ, բարեկամներ, ինչպես նաև քաղաքացիներ իրենց խոնարհումը բերեցին Արցախյան ազատամարտում, 4-օրյա, 44-օրյա պատերազմներում նահատակված հերոսների հիշատակին: Կատարվեց հոգեհանգստի կարգ: Ծաղկեպսակներ խոնարհվեցին նաև Վազգեն Սարգսյանի կիսանդրու առջև:Բազմաբնույթ հանդիսություններ են կազմակերպվել մարզի կրթական հաստատություններում, մշակույթի ակումբներում, գրադարաններում:

❖ Գուգարաց թեմի հետ համատեղ մեծ հանդիսությամբ նշվել է Սուրբ Սարգիս Զորավարի և երիտասարդների օրհնության տոնը:

❖ Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի 107-րդ տարելիցի ոգեկոչման մարզային միջոցառումներ. Այդ թվում.՝

✓ Հայ Առաքելական Եկեղեցու Գուգարաց թեմի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցում և թեմի բոլոր եկեղեցիներում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված Սուրբ Պատարագի և հոգեհանգստի արարողություններ, երիտասարդական քայլերթեր:Կազմակերպվել է մոմավառություն՝ ծաղիկների և ծաղկեպսակների խոնարհում խաչքարին:

✓ Մարզի հանրակրթական դպրոցներում կազմակերպվել են գրական-երաժշտական ցերեկույթներ, հուշ-երեկոներ, բաց դասեր. (նվիրված Մեծ Եղեռնի զոհ դարձած հայ գրողներին), քաղաքական և հասարակական անվանի գործիչների հետ հանդիպումներ:

❖ Կազմակերպվել են Մայիսյան տոներին նվիրված բազմաթիվ միջոցառումներ: Այդ թվում.Հանրապետության տոնը և Ղարաքիլիսայի հերոսամարտի 102-րդ տարեդարձը: Ավանդույթի համաձայն՝ տոնական միջոցառումը կազմակերպվել էր Ղարաքիլիսայի ճակատամարտի վայրում՝ «Կոտրած եկեղեցի» հուշակոթողի մոտ:

❖ Մայիսի 9-ին մարզկենտրոն Վանաձորում մեծ շուքով նշվեց Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 77-ամյակը: Հայրենական մեծ պատերազմի զոհերի հիշատակին կառուցված հուշակոթողի մոտ, ուր առավոտից հնչում էր տոնական երաժշտություն, հավաքվել էր հոծ բազմություն:

❖ ՀՀ Անկախության 31-ամյա հոբելյանին և Սահմանադրության օրվան նվիրված հանդիսություններ և տոնական համերգներ են կազմակերպվել մարզի համայնքներում, մասնակցությամբ մարզի լավագույն համույթների և անհատ կատարողների:

❖ Մարզի վաստակաշատ կանանց շնորհավորելու նպատակով այս տարի նույնպես կանանց տոնին նվիրված միջոցառում է կազմակերպվել մարզպետարանի դահլիճում: Կրթության, առողջապահության, տեղական ինքնակառավարման, ոստիկանության, դատախազության, ազգային անվտանգության և այլ ոլորտների շուրջ 30 մտավորական կանանց շնորհավորել է ՀՀ Լոռու մարզպետ Ա. Խաչատրյանը:

«Պետական աջակցություն մշակութային միջոցառումներին» ծրագրի շրջանակներում կազմակերպվել են հետևյալ միջոցառում-հանդիսությունները.

✓ «Պատանի երաժիշտ կատարողների» Լոռու մարզային մրցույթ-փառատոն: Փառատոնը կայացել է Վանաձորի Էդ. Կզարթմյանի անվան երաժշտական դպրոցում, մասնակցությամբ՝ մարզի քաղաքային և գյուղական համայնքների երաժշտական և արվեստի դպրոցների սովորող աշակերտների միջև: Մասնավորապես՝ Վանաձորի, Սպիտակի, Ստեփանավանի, Ալավերդու, Տաշիրի, Օձունի, Շնողի, Շիրակամուտ համայնքներից: Բոլոր մասնակիցները ՀՀ Լոռու մարզպետի կողմից պարգևատրվել են շնորհավորագրերով:

✓ «Ազգային նվագարանների երգի-պարի, ասմունքի» ամենամյա Լոռու մարզային փառատոնը կայացել է Վանաձորի Լոռի ժամանցի կենտրոնի դահլիճում, որին մասնակցում էին մարզի քաղաքային և գյուղական համայնքներից շուրջ 13 մանկապատանեկան պարային համույթներ, 27 անհատ կատարողներ, մասնավորապես՝ Վանաձորի, Սպիտակի, Ստեփանավանի, Ալավերդու, Տաշիրի, Սարչապետի, Օձունի, Մեծավան, Շնող և այլ համայնքներից: Բոլոր մասնակիցները ՀՀ Լոռու մարզպետի կողմից պարգևատրվել են շնորհավորագրերով և հուշանվերներով:

✓ Հայկական Ավանդական ծիսակատարություններին, ավանդույթներին նվիրված հանդիսություն «Վարդավառ», «Խաղող օրհնեք», «Խաչվերաց տոն»: Կազմակերպվել է ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի Սբ. Աստվածածին եկեղեցու բակում, որտեղ մասնակցել ել մարզի պարային համույթներ, անհատ կատարողներ, թատերական խմբակներ:

Այլ միջոցառումների թվում՝

❖ «ԹԱՏԵՐԱԿԱՆ ԼՈՌԻ » փառատոնի կազմակերպման աշխատանքներին աջակցություն

❖ «ՖՐԱՆԿԱՖՈՆԻԱՅԻ ՕՐԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ծրագրի շրջանակներում բազմաթիվ միջոցառում-հանդիսություններ մշակութային կառույցներում:

❖ Եվրոպական ժառանգության օրերը Հայաստանում» մի շարք միջոցառումներ մշակութային հաստատություններում՝ համերգասրահներում:

❖ «Երգչախմբային արվեստի» միջազգային օրվան նվիրված հանդիսություն, մասնակցությամբ մարզում գործող երգչախմբերի:

❖ 1988թ. երկրաշարժի անմեղ զոհերի հիշատակի ոգեկոչման գրական-երաժշտական միջոցառումներ:

❖ Լոռու մարզային գրադարանի ամերիկյան կենտրոնում տեղի է ունեցել ցերեկույթ՝ նվիրված արձակագիր, դրամատուրգ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր Գուրգեն Խանջյանին:

❖ Ինքնուս ստեղծագործողներ Երիտասարդ հաշմանդամների ձեռքի աշխատանքների ցուցահանդես վաճառք:

❖ «Ազգային գրադարանային շաբաթ» ծրագրի շրջանակներում.

ա/ «Աշխարհի գրադարանները» դասախոսություն

բ/ Հանդիպում գրողներ Մ. Միկոյանի, Խ. Գասպարյանի, ժող. վարպետ Մ. Սարգսյանի հետ:

❖ Վանաձորի Կառլոս Աբովյանի անվան պատկերասրահում նկարիչներ Անատոլի Ավետյանի և Վարդան Մերջանյանի գեղանկարչական աշխատանքների ցուցահանդես:

❖ Հանդիսություններ, գրական, երաժշտական բազմաթիվ միջոցառումներ, հանդիպումներ, շնորհանդեսներ Վանաձորի Ստեփան Զորյանի տուն-թանգարանում

❖ «Լոռի-Փամբակ երկրագիտական թանգարանում» Շուշիի գորգերի ցուցադրություն:

❖ «Ազգային Գրադարանային Շաբաթ» ծրագրի շրջանակներում Լոռու մարզային գրադարանում և մարզի գրադարաններում կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ, գրական-երաժշտական ցերեկույթներ, որոնք անցել են պատշաճ մակարդակով

❖ «Թանգարանային գիշեր» խորագիրը կրող միջոցառումներ են կազմակերպվել մարզում գործող բոլոր թանգարաններում:

❖ Երեխաների պաշտպանության օրվան նվիրված բազմաթիվ միջոցառումներ են կազմակերպվել մարզի համայնքներում: Մասնավորապես՝ Վանաձորի Հայքի հրապարակում կավճանկարի մրցույթ, Գեղագիտության ազգային կենտրոնի և գեղարվեստի դպրոցի ցուցասրահներում սաների ստեղծագործությունների ցուցադրություն, մանկական- թատերական ներկայացումներ մշակույթի տներում և ակումբներում:

❖ Ուսուցիչների միջազգային օրվա կապակցությամբ ՀՀ Լոռու մարզպետ Արամ Խաչատրյանը շնորհակալագրեր ու ծաղիկներ նվիրեց մանկավարժության ոլորտի նվիրյալներին:

❖ Ղարաբաղյան ազատամարտում ընկած զինվորների հուշաքարի մոտ կազմակերպվել է Անհետ Կորած Ազատամարտիկների օրվան նվիրված միջոցառում, որտեղ իրենց մասնակցությունն էին բերել անհետ կորած զինվորների հարազատներ, պետական և հոգևոր այրեր, վետերաններ, ազատամարտիկներ, մտավորականներ, ուսանողներ: Կատարվել է ծաղկեպսակների և ծաղիկների խոնարհում: Միջոցառումը շարունակվել է Վանաձորի գեղագիտության ազգային կենտրոնում, որտեղ հանդես են եկել ասմունքողներ և անհատ երաժիշտ-կատարողներ:

❖ Հիշատակի տուրք է մատուցվել 1988 թ. արհավիրքի զոհերին: Լոռու մարզի Հայ Առաքելական եկեղեցիներում կատարվեց հոգեհանգստի կարգ: Վանաձորի Սուրբ Աստվածածին եկեղեցու Նահատակաց պուրակում հոգեհանգստյան աղոթք հնչեցվեց Գուգարաց թեմի առաջնորդ գերաշնորհ Տեր Հովնանի հանդիսապետությամբ, որից հետո երկրաշարժի զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթող-խաչքարին ներկաները՝ մարզային և քաղաքային իշխանությունների, ավագանու, մտավորականների ու հոգևոր դասի ներկայացուցիչները, բազմաթիվ քաղաքացիներ ծաղիկներ ու ծաղկեպսակներ խոնարհեցին:

ՈԼՈՐՏԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

❖ Շենքային պայմանների բարելավում:

❖ Առավել նշանակալից պատմամշակութային հուշարձանների ընդգրկում զբոսաշրջության երթուղիներում:

❖ Մշակութային կառույցներում տեխնիկական սարքավորումների հագեցվածության ապահովում ժամանակակից միջոցներով:

❖ Մշակույթի ոլորտի աշխատողների սոցիալական վիճակի բարելավում և աշխատավարձի բարձրացում, մասնավորապես աշխատողների ընդգրկումը սոցիալական ապահովագրության փաթեթի մեջ:

Սպորտ

❖ ՀՀ Լոռու մարզում գործում են 19 մարզադպրոց, 3 մարզական ակումբ, մարզական հասարակական կազմակերպություններ: Տարբեր մարզական թիմերում և խմբակներում ընդգրկված են մոտ 7000 երեխա:

❖ Հունվարին, ՀՀ Լոռու մարզպետարանի ֆինանսական աջակցությամբ, ՀՀ Լոռու մարզի Վանաձորի թիվ 6 հիմնական դպրոցի հետ համատեղ կազմակերպվել է աղջիկների բասկետբոլի

մարզային առաջնություն՝ նվիրված արցախյան զոհերի հիշատակին: Հաղթողների և մրցանակակիրներին պատվոգրերով և գավաթներով պարգևատրել է ՀՀ Լոռու փոխմարզպետ Գ.Ասրյանը:

❖ Փետրվարին կազմակերպվել են «ՀՀ Վարչապետի գավաթ»-ի համար սեղանի թենիսի համայնքային և մարզային փուլերը: Հանրապետական փուլին մասնակցած 11 մարզիկից 10-ը պարգևատրվել են դրամական մրցանակներով:

❖ Վանաձորի «Աթլետիկայի օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մասնագիտացված մարզադպրոց» ՀՈԱԿ-ի հետ համատեղ կազմակերպվել է Վանաձորի պատանեկան բաց առաջնություն՝ նվիրված Արցախյան հերոսամարտերում զոհված հայորդիների հիշատակին: Աթլետիկայի մարզադպրոցի սաներից 3-ը զոհվել են պատերազմում:

❖ Մարտ ամսին Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախաձեռնությամբ և Լոռու մարզպետարանի աջակցությամբ անցկացվեց դպրոցահասակ երեխաների մասնակցությամբ ֆուտբոլի առաջնություն: Վանաձորի «Հայաստան» ՄՀԿ անցկացված մրցաշարին մասնակցում էին աղջիկների և տղաների թիմերը: Առաջնության նպատակն էր նպաստել ֆուտբոլի հետագա զարգացմանն ու տարածմանը դպրոցահասակների շրջանում, ի հայտ բերելու տաղանդավոր պատանի ֆուտբոլիստների:

❖ Ապրիլի 11-ին և 18-ին Վանաձորի «Կենտրոն» համալիր մարզադպրոցում կազմակերպվել է «Սպորտլանդիա» մարզական միջոցառման Լոռու մարզային փուլը: 1-3-րդ և 4-6-րդ դասարանցիների համար նախատեսված մրցույթին մասնակցում էին մարզի բոլոր տարածաշրջանների 22 դպրոցների հավաքական թիմերը: Մրցույթին ներկա էին Լոռու մարզպետի տեղակալ Հովհաննես Ավետիսյանը, մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ պետ Արամ Գրիգորյանը, մշակույթի և սպորտի բաժնի պետ Արամ Ռևազյանը, մարզպետի օգնական Էրիկ Կոստանյանը և այլ պաշտոնատար անձինք:

❖ 2022թ մայիսի 2-ին Վանաձորի աթլետիկայի մարզադպրոցում կայացավ «ՀՀ Վարչապետի գավաթ»-ի խճուղավազքի Լոռու մարզային փուլը միջնակարգ և ավագ դպրոցների մասնակցությամբ, որտեղ հաղթող է ճանաչվել Վանաձորի թիվ 5 ավագ դպրոցի թիմը: Լոռեցիները եզրափակիչ փուլում գրավել են պատվավոր 3-րդ տեղը և պարգևատրվել հավաստագրերով, մեդալներով, դրամական պարգևներով:

❖ ԿԳՄՍ նախարարության հետ համատեղ 10.05.2022թ «Հայաստան» ՄՀԿ Վանաձորի մասնաճյուղի մարզադահլիճում կազմակերպվել է ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և Արցախի Հանրապետության հանրակրթական դպրոցների 4-6–րդ դասարանցիների «Սպորտլանդիա» մարզական միջոցառման հանրապետական մրցաշարի եզրափակիչ փուլը, որին մասնակցում էին ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և Արցախի հանրապետության հաղթող թիմերը:

❖ 2022թ մայիսի 4-13-ը ՀՀ ֆուտբոլի ֆեդերացիայի և Լոռու մարզի սեղանի թենիսի ֆեդերացիաների հետ համատեղ կազմակերպվել է «ՀՀ Լոռու մարզպետի գավաթ 2022» մրցաշարը՝ սեղանի թենիս, պատանիների ֆուտզալ և մեծահասակների ֆուտզալ մարզաձևերից: Սեղանի թենիսի մրցումներին մասնակցել են 40-ից ավել մարզիկներ և մարզուհիներ, պատանիների մրցաշարին մոտ 400 դպրոցական, իսկ մեծահասակների պայքարին մոտ 200 մարզիկներ: Հաղթող և մրցանակակիր մարզիկներն ու թիմերը պարգևատրվել են ՀՀ Լոռու մարզպետի և ՀՀ ֆուտբոլի ֆեդերացիայի պատվոգրերով, գավաթներով, մարզագույքով և դրամական պարգևներով:

❖ Մայիսի 24-ին Մարգահովիտ - Լերմոնտովո ճանապարահատվածում, 26-ին և 27-ին համապատասխանաբար Սպիտակի շրջանաձև խաչմերուկ - Արևաշող տանող ճանապարհին և Ստեփանավանի Ամենափրկիչ մատուռ – Լճեր տանող ճանապարհին կազմակերպվել է

սուբվենցիոն ծրագրերով կառուցված կամ հիմնանորոգված ճանապարհներին ու մայրուղիներին սիրողական խճուղավազքի մրցաշարի առաջնության մարզային մրցումներ:

❖ Կազմակերպվել են 2022 թվականի օգոստոսի 23-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Շողակաթ (նախկին Շորժա) համայնքի լողափնյա տարածքում անցկացվելիք «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» լողի սիրողական մրցաշարի իրազեկման, խորհրդատվության, մրցաշարին պատշաճ մասնակցելու աշխատանքները:

❖ Կազմակերպվել են 2022թ. հոկտեմբերի Փարաքար-Էջմիածին մայրուղում (Արմավիրի մարզ) անցկացվելիք «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» խճուղային կրոսավազքի սիրողական մրցաշարի իրազեկման, խորհրդատվության, մրցաշարին պատշաճ մասնակցելու աշխատանքները:

❖ 2022թ. հոկտեմբերի 18-ին Վանաձորի աթլետիկայի մարզադպրոցում և թիվ 5 ավագ դպրոցում կազմակերպվել է ԿԳՄՍ նախարարության կողմից անցկացվող նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդների հանրապետական ռազմամարզական խաղերի Լոռու մարզային փուլը: Հանրապետական փուլում մարզում հաղթող ճանաչված Վանաձորի թիվ 13 ավագ դպրոցի թիմը գրավեց պատվավոր 2-րդ տեղը:

❖ Կազմակերպվել են «ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և Արցախի հանրապետության հանրակրթական դպրոցների 7-12-րդ դասարանցիների «Սպարտակիադա» մարզական միջոցառման Լոռու մարզային փուլերը: Հաղթողները մասնակցել են եզրափակիչ փուլին:

❖ Սեպտեմբերին Վանաձորի աթլետիկայի մարզադպրոցում անցկացվեցին «Ազգային Ժողովի գավաթ»-ի խաղարկության համայնքային և մարզային փուլերը: Մասնակից թիմերին Լոռու մարզպետ Արամ Խաչատրյանի և իրենց անունից ողջունեցին մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Արամ Գրիգորյանը և մարզպետի օգնական Էրիկ Կոստանյանը: Հաղթող թիմերը մարզը կներկայացնեն հանրապետական փուլում:

❖ Դեկտեմբերի 24-25-ը Վանաձորում «Աշխատանքային ռեզերվներ» ՄՀԿ-ի հետ համատեղ կազմակերպվել է «Ազգային ժողովի գավաթի» խաղարկության հանրապետական եզրափակիչ փուլը՝ ՀՀ բոլոր մարզերի և Երևանի թիմերի մասնակցությամբ: ՀՀ Լոռու մարզը գրավել է երրորդ պատվավոր տեղը:

❖ ՀՀ Լոռու մարզպետարանի նիստերի դահլիճում պարբերաբար կազմակերպվում են միջազգային մրցասպարեզներում հաջողություններ գրանցած մարզիկների և նրանց մարզիչների պարգևատրման արարողություններ:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

2022թ. ընթացքում Լոռու մարզում գործել են հետևյալ բուժհաստատությունները

հ/հ	բուժհաստատության տեսակը	քանակը	մահճակալ-ների թիվը
1.	**բժշկական կենտրոններ՝**	**5**	**426**
	«Վանաձորի բժշկական կենտրոն»ՓԲԸ		216
	«Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ		60
	«Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ		60
	«Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ		50
	«Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ		40
2.	**դիսպանսեր**	**1**	**35**
3.	պոլիկլինիկաներ	**4**	
4.	Լոռու մարզային արյան փոխներարկման կայան	**1**	
5.	առողջության առաջնային պահպանման կենտրոններ /ամբուլատորիաներ/	**19** (որից համայնքային ենթակայության՝ 5)	
6.	առողջապահական ընկերությունների կազմում գործող բուժակ-մանկաբարձական կետեր	95	
7.	**Ընդամենը՝**	**30**	**461**

Մարզի առողջապահական ընկերություններում աշխատում են՝ բժիշկներ - 446, միջին բուժաշխատողներ - 923, այլ - 570, ընդամենը՝ 1939 մարդ:

2022թ. ընթացքում առողջապահության համակարգում նախատեսված պետական պատվերի կատարողական աշխատանքների բազային ծավալը ներկայացվում է՝

2022թ. Բազային ծավալ հազ. դրամ		Կատարողական	Ֆինանսավորում
ԸՆԴԱՄԵՆԸ՝	5368558.0	5360112.3	5359358.5

Ընդունված կատարողականը ֆինանսավորվել է 99.9 %-ով:

Մարզային ենթակայության առողջապահական ընկերություններում վճարովի ծառայության մուտքերն ըստ տարիների՝

	Վճարովի ծառայության մուտքերը կազմել են՝ հազ.դրամ
2014թ.	475415.9
2015թ	523786.7
2016թ	526069.1
2017թ.	608255.7
2018թ.	722956.6
2019թ.	1202544,3
2020թ.	1084902.4
2021թ.	1289415.2
2022թ.	1400782.3

Նկատվում է վճարովի ծառայությունների աճ 2021թ. համեմատ՝ շուրջ **8.6 %**-ով:
Առողջապահության համակարգում ֆինանսավորումը շարունակվել է իրականացվել սահմանափակված բյուջեի ֆինանսավորման սկզբունքով:

Մարզպետարանի ենթակայության բաժնետիրական ընկերությունների ծախսերի վերլուծությունը ցույց է տալիս, որ պետական պատվերի ֆինանսավորումն ստանալուց և վճարումները կատարելուց հետո յուրաքանչյուր ամսվա 1-ի դրությամբ կրեդիտորական պարտքերը չեն գերազանցում տվյալ եռամսյակի համար մարզպետարանի կողմից հաստատված նախահաշվային գումարի մեկ երրորդը:

2022թ. ընթացքում ՀՀ Լոռու մարզում իրականացվել են՝

❖ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում սեփական միջոցներով ձեռք են բերել գույք և սարքավորումներ, ընդամենը 38717.4 հազ. դրամ արժողությամբ: ՀՀ ԱՆ-ի կողմից հատկացվել են ընդամենը 92.0 հազ. դրամ արժողությամբ սարքավորումներ: «Ազնավուր հիմնադրամ»-ի կողմից «Վերականգնողական բաժանմունք»-ի համար տրամադրվել է 360.0 հազ. դրամ արժողությամբ հայելի:

❖ «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում սեփական միջոցներով իրականացվել են վերանորոգման աշխատանքներ՝ ընդամենը 839.7 հազ. դրամ արժողությամբ և ձեռք են բերվել գույք, սարքավորումներ և բժշկական պարագաներ, ընդամենը 5056.6 հազ. դրամ արժողությամբ: Լիզինգով ձեռք է բերվել լապարասկոպ սարք՝ 3775.9 հազ. դրամ արժեքով: ՀՀ ԱՆ-ի կողմից անհատույց տրամադրվել է հիվանդի մոնիտոր՝ ընդամենը 4843.4 հազ. դրամ արժեքով:

❖ «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն սեփական միջոցներով ձեռք է բերել 383.2 հազ. դրամի սարքավորում և գույք: Առողջապահության նախարարության կողմից հատկացվել են ընդամենը 1010.0 հազ. դրամ արժեքով սարքավորումներ:

❖ «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն սեփական միջոցներով ձեռք է բերել 2 օդորակիչ՝ ընդամենը 640.0 հազ. դրամ արժողությամբ: ՀՀ ԱՆ-ի կողմից հատկացվել են ընդամենը 61382.0 հազ. դրամ արժողությամբ սարքավորումներ, այդ թվում ռենտգեն սարք՝ 8779.6 հազ. դրամ, թվային ռենտգեն սարք՝ 52000.0 հազ. դրամ և 2 խնամյալի մոնիտոր՝ ընդամենը 602.4 հազ. դրամ արժողությամբ:

❖ «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն սեփական միջոցներով կատարել է վերանորոգման աշխատանքներ՝ ընդամենը 22750.0 հազ. դրամ արժողությամբ, ձեռք են բերվել ընդամենը 4471.8

հազ. դրամ արժողությամբ գույք և սարքավորումներ և կատարվել է 2018-2019թթ ձեռք բերված սարքավորման /համակարգչային տոմոգրաֆ/ լիզինգի մարում՝ 2022թ. ընդամենը 3853.0 հազ. դրամ: ՀՀ առողջապահության նախարարության կողմից անհատույց 5 տարի ժամկետով տրամադրվել է ամենագնաց շտապ օգնության ավտոմեքենա, պատվաստանյութերի պահպանման համար 335.6 հազ. դրամ արժողությամբ սառնարանային խցիկ: «Մամոգրաֆիայի ծրագրի» կողմից տրամադրվել են 2, իսկ «Թոքաբանության ազգային կենտրոն»-ի կողմից 1 համակարգչային տեխնիկա՝ ընդամենը 1093.0 հազ. դրամ արժեքով:

❖ «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ում սեփական միջոցներով կատարվել են վերանորոգման աշխատանքներ և ձեռք են բերվել գույք և սարքավորումներ, ընդամենը 8067.4 հազ. դրամ արժեքով:

❖ «Լոռու մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ սեփական միջոցներով ձեռք է բերել ընդամենը 2452,0 հազ. դրամ արժողությամբ գույք և սարքավորում:

❖ «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ն սեփական միջոցներով ձեռք է բերել ընդամենը 1740.0 հազ. դրամ արժողությամբ սարքավորումներ, կատարվել են 2706.6 հազ. դրամ արժողությամբ վերանորոգման աշխատանքներ: ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրվել է թվային ռենտգեն սարք՝ 27603.0 հազ. դրամ արժեքով:

❖ «Գուգարք» կենտրոնական պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ն սեփական միջոցներով իրականացրել է 829.2 հազ. դրամ արժողությամբ վերանորոգման աշխատանքներ և ձեռք է բերել 1120.0 հազ. դրամ արժողությամբ սարքավորումներ: ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրվել է սառնարան և սառցարան՝ ընդամենը 624.9 հազ. դրամ արժեքով:

❖ «Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ին ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրվել է ընդամենը 684.3 հազ. դրամ արժողությամբ սարքավորումներ: Սեփական միջոցներով ձեռք են բերել 72.0 հազ. դրամ արժողությամբ սարքավորումներ 1824.0 հազ. դրամ արժեքով ռենտգեն կաբինետի վերանորոգման աշխատանքներ:

❖ «Վանաձորի թիվ 5 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ն սեփական միջոցներով, իրականացրել է վերանորոգման աշխատանքներ 3219.9 հազ. դրամ արժողությամբ և ձեռք են բերել սարքավորումներ՝ 1210.0 հազ. դրամ արժողությամբ: ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրվել են սարքավորումներ՝ ընդամենը 53010.0 հազ. դրամ արժողությամբ, այդ թվում թվային ռենտգեն սարք 52000.0 հազ. դրամ արժեքով, 2 նոութբուք՝ 848.0 հազ. դրամ և բազմաֆունկցիոնալ տպիչ՝ 162.0 հազ. դրամ արժողությամբ:

❖ «Գուգարքի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ին ՀՀ առողջապահության նախարարության կողմից հատկացվել է ընդամենը 815.4 հազ. դրամ արժողությամբ պատվաստանյութերի սառնարաններ:

❖ «Մեծ Պարնիի ԱԿ» ՊՈԱԿ-ին ՀՀ առողջապահության նախարարության կողմից հատկացվել է ընդամենը 335.6 հազ. դրամ արժողությամբ պատվաստանյութերի սառցարան: *«Կամրջակ»* բարեգործական ՀԿ-ի կողմից հատկացվել է անվասայլակ՝ 178.5 հազ. դրամ:

❖ «Մեծավանի ԱԿ» ՊՈԱԿ-ում անհատ բարերարների կողմից իրականացվել են վերանորոգման աշխատանքներ, ձեռք են բերվել գույք և սարքավորումներ ընդամենը՝ 6779.0 հազ. դրամ արժողությամբ:

❖ «ՈՒռուտի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ին Լոռի Բերդի համայնքապետարանի կողմից տրամադրվել է ընդամենը 3558.0 հազ. դրամ (Սվերդլովի ԲՄԿ-ի վերանորոգում – 3500.0 հազ. դրամ, հակահրդեհային վահանակ՝ 58.0 հազ. դրամ):

❖ «Օձունի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ը սեփական միջոցներով ձեռք է բերել ընդամենը 467.5 հազ. դրամ արժողությամբ սարքավորումներ և հակակողոպուտային և հակահրդեհային

համակարգ: ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրվել է ընդամենը 1003.0 հազ. դրամ արժողությամբ սարքավորումներ, այդ թվում պատվաստանյութերի պահպանման սառնարան և սառցարան՝ ընդամենը 882.0 հազ. դրամ արժեքով:

❖ «Դսեղի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ին ՀՀ առողջապահության նախարարության կողմից հատկացվել է պատվաստանյութերի պահպանման սառնարան և սառցարան ընդամենը՝ 817.5 հազ. դրամ արժեքով:

❖ «Աքորու ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ին ՀՀ առողջապահության նախարարության կողմից հատկացվել է ընդամենը 553.6 հազ. դրամ արժողությամբ սարքավորումներ:

❖ «Արևածագի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ին ՀՀ առողջապահության նախարարության կողմից հատկացվել է պատվաստանյութերի պահպանման սառցարան, նոութբուք և այլ սարքավորումներ ընդամենը՝ 973.6 հազ. դրամ արժեքով: Սեփական միջոցներով ձեռք է բերվել հակահրդեհային համակարգ և տագնապ ազդանշան՝ ընդամենը 143.0 հազ. դրամ արժողությամբ:

❖ «Ախթալայի ԱԿ» ՊՓԲԸ-ն սեփական միջոցներով իրականացրել է վերանորոգման աշխատանքներ և ձեռք է բերել գույք և սարքավորումներ ընդամենը 314.0 դրամ արժեքով:

❖ «Շնողի ԲԱ» ՀՈԱԿ՝ Շնողի համայնքապետարանը կատարել է 4436.1 հազ. դրամի ներդրում, որից դրամաշնորհ՝ 2550.0 հազ. դրամ և գույք ու սարքավորումներ ընդամենը 1886.1 հազ. դրամ արժեքով: ՀՀ առողջապահության նախարարության կողմից հատկացվել է պատվաստանյութերի պահպանման սառնարաններ՝ 532.0 հազ. դրամ արժեքով:

❖ «Ճոճկանի ԲԱ» ՀՈԱԿ-ին համայնքապետարանը հատկացրել է 165.0 հազ. դրամ:

Այսպիսով, մարզի առողջապահական ընկերություններում սեփական միջոցներով ձեռք են բերվել գույք, սարքավորում, կատարվել են վերանորոգման աշխատանքներ ընդամենը 279191.2 հազ. դրամ արժեքով, որից ՀՀ առողջապահության նախարարության կողմից՝ 155708.7 հազ. դրամ արժեքով, սեփական միջոցներով՝ 104737.8 հազ. դրամ արժեքով, բարեգործական հիմնադրամներից՝ 10585.6 հազ. դրամ արժեքով, համայնքապետարանների կողմից 8159.1 հազ. դրամ արժեքով:

❖ 2022թ. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովվել է մարզի ամբուլատոր-պոլիկլինիկական ընկերություններում բնակչության անվճար բուժօգնությունը: ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մարզի առողջապահական ընկերություններում հիվանդանոցային բուժօգնություն է ստացել 20704 հիվանդ, որից պետական պատվերի շրջանակներում՝ անվճար՝ 16525 հիվանդ, համավճարով՝ 572 հիվանդ, վճարովի՝ 3607 հիվանդ: 2022թ. հունվար-մայիս ամիսներին «Սպիտակի բժկական կենտրոն» ՓԲԸ-ում բուժում են ստացել կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) վարակված 760 հիվանդ: Մարզում գործող 5 ուղեգրող հանձնաժողովների կողմից տրամադրվել են 193 ուղեգիր՝ սոցիալապես անապահով և հատուկ խմբերում չընդգրկված, սակայն անապահով վիճակում գտնվող անձանց բուժօգնության ցուցաբերման նպատակով:

❖ «Հայկական ակնաբուժական նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում ստեղծված մարզային ակնաբուժական կենտրոնում կատարվել են 772 վիրահատություններ, որից սոցիալապես խոցելի խմբերին պատկանող.

- ✓ Պետպատվերի շրջանակներում՝ 370 /անվճար/,
- ✓ ՀԱՆ ԲՀ-ի բարեգործական ծրագրերի շրջանակներում՝ 18,
- ✓ վճարովի սկզբունքով՝ 384 վիրահատություն:
- ✓ Իրականացվել է ընդամենը 105 լազերային վիրահատություն, որից
- ✓ ՀԱՆ ԲՀ-ի բարեգործական ծրագրերի շրջանակներում՝ 75,
- ✓ վճարովի սկզբունքով՝ 30 վիրահատություն:

❖ Մարզային ենթակայության առողջապահական հաստատությունների տնօրենների մրցույթները իրականացվում են գործող կարգի համաձայն (ՀՀ կառավարության 3 փետրվարի 2022թ. թիվ 129-Ն որոշում): «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի տնօրենի թափուր պաշտոնների համար հայտարարվել և անց է կացվել մրցույթ:

❖ Երկրում կորոնավիրուսի համաճարակով պայմանավորված ՀՀ Լոռու մարզի «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն 2022թ. հունվար-մայիս ամիսներին վերապրոֆիլավորվել է որպես COVID-19 կորոնավիրուսային վարակի բուժման հիվանդանոցի՝ միջինը 100 մահճակալ հզորությամբ: Հիվանդանոցում ստացիոնար բուժում ստացած

- ✓ հիվանդների թիվը - 760,
- ✓ առողջացած – 643,
- ✓ մահ – 111,
- ✓ տեղափոխում – 6:

Հիվանդանոցը սպասարկել են ոչ միայն ՀՀ Լոռու մարզի, այլ նաև Հայաստանի Հանրապետության կորոնավիրուսով վարակված բնակչությանը:

ՀՀ-ում կորոնավիրուսային /Covid-19/ վարակի սկզբից առ 01.01.2023թ. Լոռու մարզում արձանագրվել են՝

- ✓ ընդհանուր հիվանդացության դեպքեր – 25962,
- ✓ մահ – 584,
- ✓ առողջացած – 25369,
- ✓ բուժվող – 9:

Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) համավարակի կանխարգելման գործընթացում առանցքային դեր ունի պատվաստանյութի կիրառումը: Հայաստանի Հանրապետությունում մեկնարկել է կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստումների գործընթացը՝ այդ թվում ՀՀ Լոռու մարզում: Առ 03.01.2023թ. մարզում կատարվել են ընդամենը՝ 143995 պատվաստում, որից 1-ին դեղաչափ՝ 73226, 2-րդ դեղաչափ՝ 66642, 3-րդ դեղաչափ (խթանիչ)՝ 4127: 18-ից բարձր բնակչության (159200 մարդ) ըստ 1-ին դեղաչափի պատվաստումները կազմում են 46%, ըստ 2-րդ դեղաչափի՝ 42%:

Ոլորտում բնակչության առողջական վիճակը բնութագրող կարևորագույն ցուցանիշներ են հիվանդացությունը և մահացությունը: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ ինչպես հանրապետությունում, այնպես էլ մարզում դեռևս բարձր են հիվանդացության մակարդակները.

2017-2022թթ. տվյալները, որը բերվում են ստորև, ցույց են տալիս, որ մարզում առկա է նորագոյացություններով, շաքարային դիաբետով և հոգեկան հիվանդությունների նվազում, իսկ տուբերկուլոզի հիվանդացության՝ աճ:

Հիվանդություններ	**2017թ.**	**2018թ.**	**2019թ.**	**2020թ.**	**2021թ.**	**2022թ.**
Շաքարային դիաբետ	5170	5965	5700	6960	6322	6122
Նորագոյացություններ	3656	3614	3670	3759	2469	2219
Հոգեկան հիվանդություններ	4841, այդ թվում 485-ը նարկոլոգ. կաբ./	4361, այդ թվում 487-ը նարկոլոգ. կաբ./	4917, այդ թվում 532-ը նարկոլոգ. կաբ./	4889, այդ թվում 543-ը նարկոլոգ. կաբ./	4891 այդ թվում 542-ը նարկոլոգ. կաբ./	4752 այդ թվում - 518-ը նարկոլոգ. կաբ./
Տուբերկուլոզ	334	312	281	265	246	247

Տուբերկուլոզի ազգային կենտրոնի բազմադեղորայքակայուն բաժանմունքում ինտենսիվ փուլի բուժում կազմակերպվել է դեղորայքակայուն 8 հիվանդների, որոնց բուժօգնությունը ամբուլատոր պայմաններում իրականացվել է ՀՀ Լոռու մարզի տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետներում:

❖ Լոռու մարզում հաշվառված և ծրագրային հեմոդիալիզ են ստանում 95 հիվանդ:

❖ Առողջապահության նախարարի 12.03.2019թ. թիվ 611–Ա հրամանով Հայաստանում ներդրված սանիտարական ավիացիայի ծառայության միջոցով ՀՀ Լոռու մարզից Երևանի առաջատար բժշկական կենտրոններում մասնագիտացված բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով տեղափոխվել է 4 պացիենտ:

❖ ՀՀ առողջապահության նախարարի հրամաններով ՀՀ առողջապահության նախարարության մարդասիրական օգնության հանրապետական կենտրոնից մարզի համար ձեռք է բերվել մարդասիրական օգնության ճանապարհով մարզին հատկացված 20 մլն 367 հազ. 836 դրամ արժեքով և կենտրոնացված գնումների միջոցով ձեռք բերված 150 մլն 125 հազ. 971 դրամ արժեքով դեղորայք:

❖ ՀՀ առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից մեկնարկել է Կայունացման և զարգացման Եվրասիական հիմնադրամի միջոցներից ֆինանսավորվող «Առողջապահության առաջնային օղակում ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկողության կատարելագործում» դրամաշնորհային ծրագիրը, որի շրջանակներում ՀՀ Լոռու մարզում 01.01.2022-15.04.2022թթ. ընթացքում իրականացվել են կրծքագեղձի քաղցկեղի կանխարգելմանն ու վաղ հայտնաբերմանն ուղղված 3208 մամոգրաֆիկ սքրինինգային հետազոտություն կանանց 50-69 տարիքային խմբում: *Առ 01.01.2023թ. կատարվել է*

- ✓ Տաշիրի տարածաշրջանում՝ 1042 հետազոտություն
- ✓ Ալավերդու տարածաշրջանում՝ 2166 հետազոտություն

Այնուհետև նշված սքրինինգային ծրագրում լավագույն ցուցանիշներ ցուցաբերած 8 բժշկական կազմակերպություններին տրամադրվել է խրախուսում՝ 12 համակարգիչ և 6 տպիչ:

❖ Միաժամանակ 2022թ. ՀՀ Առողջապահության նախարարության կողմից մշակվել է ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի «Վարակաբանական բաժանմունք»-ի համար նոր մասնաշենքի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթները, որի հիման վրա 2023թ. նախատեսվում է մեկնարկել նոր շենքի կառուցման շինարարական աշխատանքներ:

❖ Մեթադոնային փոխարինող բուժման ծրագրի շրջանակներում 2022թ. ընթացքում «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ում պետպատվերով սպասարկվել են 31 անձ, վճարովի հիմունքներով՝ 41 անձ:

❖ Պետպատվերի հիմունքներով մեթադոն ստացած անձանց համար ձեռք է բերվել 75լ (75000մլ) մեթադոն տեսակի դեղամիջոց՝ 1 մլն 544 հազ. 856 դրամ արժողությամբ:

❖ Վճարովի հիմունքներով մեթադոն ստացած անձանց համար ձեռք է բերվել 52լ (52000 մլ) մեթադոն տեսակի դեղամիջոց՝ 3 մլն 380 հազ. դրամ արժողությանբ:

❖ ՀՀ Պաշտպանության նախարարության կողմից հատկացվել է 4 մլն 171 հազ 317 դրամ արժեքով դեղորայք:

❖ ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ վարչությունն իրականացրել է նաև հատուկ /առանձին/ և սոցիալական անապահով խմբերի քաղաքացիներին հանրապետության

առողջարաններ ուղեգրման գործընթացը: 2022թ. Ջերմուկի «Արարատ» մոր և մանկան առողջարան են ուղեգրվել մինչև 18 տարեկան 18 հաշմանդամ երեխաներ և 18 խնամող:

❖ 2022թ. «Ոչ վարակիչ հիվանդությունների վերահսկում և կանխարգելում» ծրագրի շրջանակներում մարզում կատարվել է գլյուկոզայի հետազոտություն՝ 11474 մարդ /62.1% թիրախի նկատմամբ/, պապ-քսուք՝ 2554 մարդ (36% թիրախի նկատմամբ):

❖ Զորակոչային և նախազորակոչային աշխատանքները մարզում ապահովել են 1 մարզային բժշկական և 1 ստացիոնար (վիրաբուժական և թերապևտիկ պրոֆիլ) բժշկական հանձնաժողովները:

❖ Լոռու մարզում նախազորակոչիկների, զորակոչիկների և զինծառայողների շրջանում կանխարգելիչ պատվաստումների գործընթացն իրականացվել է համապատասխան ԱԱՊ հաստատության կողմից՝ ըստ Պատվաստումների ազգային օրացույցի:

❖ 2022թ. ընթացքում ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ համատեղ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տեղում կազմակերպվել են վերապատրաստման 5-շաբաթյա դասընթացներ՝ 205 բուժքույրերի համար:

❖ ՀՀ առողջապահության նախարարի հրամանով և UNISEF ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ կազմակերպվել և անց են կացվել դասընթացներ մարզի ընդամենը 165 ընտանեկան բժիշկների, մանկաբույժների և տեղամասային մանկական ու ընտանեկան բուժքույրերի համար:

❖ Նոր կորոնավիրուսային վարակը սպառնալիք է աշխարհում յուրաքանչյուր երկրի համար: ՀՀ ԱՆ Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտն (այսուհետ՝ ԱԱԻ) իրականացրել է բազմաթիվ դասընթացներ, որոնք միտված են եղել աջակցելու հանրապետությունում կորոնավիրուսային համավարակի դեմ իրականացվող պայքարին:

❖ 2022թ. ընթացքում իրականացվել են իմունականխարգելման գործընթացի վերաբերյալ դասընթացներ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների բժիշկների և բուժքույրերի համար:

❖ 2022թ. մարզում արձանագրվել են մանկական մահացության հետևյալ ցուցանիշները. պերինատալ մահացության 11 դեպք, այդ թվում՝ 9 մեռելածին դեպք, 0-1 տարեկան՝ 3 դեպք (որից 0-7 օրական՝ 2 հիվանդանոցային դեպք, 10 օրական՝ 1 տնային մահվան դեպք):

Արձանագրվել է 1 մայրական մահ:

Լոռու մարզ	մանկական մահացություն /պրոմիլե/	պերինատալ մահացություն /պրոմիլե/
2016թ	5.8	9.2
2017թ	5.6	9.7
2018թ	5.9	5.9
2019թ.	2.0	3.7
2020թ.	7.4	6.2
2021թ.	3.5	8.4
2022թ.	1.4	4.7

2017-2022թթ. Լոռու մարզում ծնելիության, մահացության և բնական աճի ցուցանիշներ

Լոռու մարզ		Ծնելիություն	Մահացություն	Բնական աճ
2017	բացարձակ թիվ	2689	2630	0.3 պրոմիլե
	ըստ 1000 բնակչի	12.2	11.9	
2018	բացարձակ թիվ	2361	2473	-0.5 պրոմիլե
	ըստ 1000 բնակչի	11.9	12.2	
2019	բացարձակ թիվ	2439	2447	-0.1 պրոմիլե
	ըստ 1000 բնակչի	11.4	11.5	
2020	բացարձակ թիվ	2435	2926	-2.3 պրոմիլե
	ըստ 1000 բնակչի	11.4	13.7	
2021	բացարձակ թիվ	2238	3038	-3.8 պրոմիլե
	ըստ 1000 բնակչի	10.5	14.3	
2022	բացարձակ թիվ	2149	2414	-1.2 պրոմիլե
	ըստ 1000 բնակչի	10.2	11.4	

❖ Ուսումնասիրվել են Լոռու մարզի առողջապահական հաստատությունների հաստիքացուցակների և մատուցվող վճարովի ծառայությունների գները, կատարվել են համապատասխան փոփոխություններ:

❖ Կանոնակարգվել է Լոռու մարզի բուժկանխարգելիչ հաստատությունների տարեկան վիճակագրական հաշվետվությունների նախնական ստուգման և 2023թ. մարզի պետական պատվեր հավակնող մարզային և համայնքային ենթակայության բժշկական օգնության և սպասարկման պետական պատվերի տեղադրման հայտերի նախնական վերլուծություն, գործող կարգին համապատասխանություն, այնուհետև ՀՀ առողջապահության նախարարություն ներկայացնելու գործընթացը:

❖ Մարզի գլխավոր մասնագետների հետ կազմակերպվել են խորհրդակցություններ առողջապահական ընկերություններում տնօրենների հետ համատեղ աշխատանքի ընթացքում առաջացած հարցերի լուծման ուղղությամբ:

❖ Համաձայն «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի, այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողովի որոշմամբ «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ում 2 անձ իրականացրել են այլընտրանքային ծառայություն:

❖ Մարզի առողջապահական ընկերությունները սերտ համագործակցել են մի շարք միջազգային ընկերությունների հետ՝ «Հայաստանի Մանուկներ Բարեգործական հիմնադրամ» «COAF», «Ամքոր», «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամ, Ֆրանսահայ բժիշկների միություն և այլն:

❖ «Հայաստանի Մանուկներ Բարեգործական հիմնադրամ» «COAF»-ի կողմից իրականացվել են մի շարք առողջապահական ծրագրեր, կատարվել է շուրջ 12,470.000 հազար դրամի ներդրում:

Քաղցկեղների վաղ հայտնաբերման ծրագրի շրջանակներում ծախսվել է 7,272.0 հազ. դրամ:

Քաղցկեղների (կրծքագեղձ, վահանաձև գեղձ, շագանակագեղձ) վաղ հայտնաբերման նպատակով Լոռու մարզի 28 շահառու համայնքներում հետազոտվել է 687 պացիենտ, որից՝

- ✓ Բոլոր 687 պացիենտներին կատարվել է ուլտրաձայնային հետազոտություն (կանանց՝վահանաձև գեղձի և կրծքագեղձերիի, տղամարդկանց՝ վահանաձև գեղձի, շագանակագեղձի և որովայնի խոռոչի օրգանների)
- ✓ 323 տղամարդ, բացի վերոնշյալ ուլտրաձայնային հետազոտությունից, անցել է նաև ուրոլոգիական հետազոտություն և ուրոլոգի խորհրդատվություն:
- ✓ 314 տղամարդու կատարվել է ՊՍԱ ընդհանուրի որոշում:
- ✓ 266 պացիենտի կատարվել է վահանաձև գեղձի հորմոնների որոշում:
- ✓ 5 պացիենտի կատարվել է վահանաձև գեղձի բարակ ասեղային ասպիրացիոն բիոպսիա / FNA,
- ✓ 8 պացիենտի կատարվել է կրծքագեղձերի մամոգրաֆիկ հետազոտություն և մամոլոգի խորհրդատվություն, երկուսին կատարվել է նաև կրծքագեղձի գոյացության բիոպսիա՝ հյուսվածաբանական հետազոտությամբ
- ✓ Չորս տղամարդու կատարվել է շագանակագեղձի բիոպսիա
- ✓ Հայտնաբերվել է 2 կրծքագեղձի քաղցկեղ, 4 վահանաձև գեղձի քաղցկեղ, 3 շագանակագեղձի քաղցկեղ,

Ստոմատոլոգիական ծրագիր.

Դսեղում հիմնած ստոմատոլոգիական կաբինետում անվճար ծառայություն է մատուցվել մինչև տասնութ տարեկան 219 շահառուի 11 գյուղից: Ծրագրի շրջանակներում կատարվել է 585 ատամի պլոմբավորում և 230 կաթնատամի հեռացում: Ծրագրից առաջին անգամ օգտվող յուրաքանչյուր երեխային տրվել է նաև ատամի խոզանակ և մածուկ:

Ստոմատոլոգիական ծրագրի շրջանակում ծախսվել է 4000.0 հազ. դրամ:

Աջակցող վերահսկողություն ծրագիր.

Ծրագրի շրջանակներում Հիմնադրամի շահառու 17 համայնքում, տեղի բուժաշխատողների հետ միասին, իրականացվել է՝

- ✓ առողջ երեխայի զարգացման գնահատում՝ 0-5 տարեկան երեխաների շրջանում, ընդգրկվածությունը՝ 95%
- ✓ ոչ վարակիչ քրոնիկական հիվանդություններով /շաքարային դիաբետ, զարկերակային գերճնշում/ պացիենտների վերահսկողություն, այդ թվում գլիկոլիզացված հեմոգլոբինի /HbA1c/ որոշում 615 պացիենտի մոտ
- ✓ արտերկրյա մասնագետների այցեր՝ /ընտանեկան բժիշկներ, սրտաբան, մանկաբույժ, ֆիզիոթերապիստներ/ փորձի փոխանակման և ծառայություններ մատուցելու նպատակով

Աջակցող վերահսկողության ծրագրի շրջանակներում ծախսվել է 1198.0 հազ. դրամ:

❖ «Հայաստանի Մանուկներ Բարեգործական հիմնադրամ»- ի կողմից «Դսեղի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի համար կառուցվում է նոր շենք, որը նախատեսվում է ավարտին հասցնել 2023թ. ապրիլ-մայիս ամիսներին, ներդրումների ծավալը 2022թ. կազմել է 168,000.000 հազար դրամ:

❖ Լոռու մարզին Ֆրանսահայ բժիշկների միության Փարիզի մասնաճյուղի կողմից 2011թ. տրամադրվել էր շարժական ստոմատոլոգիական կլինիկա, որի միջոցով անվճար ստոմատոլոգիական բուժօգնություն և սպասարկում են ստացել մարզի 0-18 և 60-ից բարձր տարիքի ազգաբնակչությունը: Շարժական կլինիկան հերթականությամբ կայանվում է մարզի բոլոր պոլիկլինիկաներում, առողջության առաջնային պահպանման կենտրոններում և ամբուլատորիաներում՝ սպասարկելով նաև նրանց կազմի մեջ գտնվող բուժակ մանկաբարձական կետերի սպասարկման տարածքի ազգաբնակչությանը: Շարժական կլինիկան սպասարկել է

ընդհանուր հաշվով 3594 մարդ: 2022թ. այն սպասարկել է Գուգարք, Շահումյան, Շենավան բնակավայրերի բնակչությանը՝ ընդամենը 496 մարդ, որից 307-ը՝ 0-18 և 189-ը՝ 60-ից բարձր: Սպասարկվել են նաև պատերազմի հետևանքով Արցախի Հանրապետությունից տարհանված ազգաբնակչությունը:

❖ Ալավերդու բժշկական «Հելլեն Մեդ» ՓԲԸ-ի և «Ամքոր» կազմակերպության հետ միասին Թումանյանի տարածաշրջանի գյուղերում իրականացվել է «Համայնքային վերարտադրողական առողջության բարելավում իրազեկման և բուժսպասարկման միջոցով» ծրագիրը, որը 2022թ. իրականացվել է Մարց, Լորուտ, Աթան, Շամուտ և Չկալով համայնքներում: Հետազոտվել են 1154 կին, որից կրծքագեղձի և վահանաձև գեղձի սոնոգրաֆիա՝ 1154, էնդոկրինոլոգի խորհրդատվություն՝ 1154, լաբորատոր հետազոտություններ՝ 602, մամոգրաֆիա՝ 18 կանանց շրջանում: Իրականացվել են նաև միզուղիների հիվանդությունների վաղ հայտնաբերման սկրինինգ: Կատարվել են միզասեռական համակարգի 762 տղամարդու սոնոգրաֆիկ հետազոտություն, 186 ՊՍԱ հետազոտություն:

❖ «Ամքոր» կազմակերպության կողմից 2022թ. ՀՀ Լոռու մարզում իրականացվել են հետևայլ ծրագրերը՝ «Համայնքային վերարտադրողական առողջության բարելավում»՝ 20 մլն դրամ արժեքով, «Առողջ ատամներ, առողջ համայնք»՝ 8688.0 հազ. դրամ արժեքով: «Պարենային աջակցություն անապահով երեխաներին և տարեցներին»՝ 378.9 հազ. դրամ արժեքով:

❖ «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի կողմից ՀՀ Լոռու մարզում իրականացվել է «Հայաստանում կոնքազդրային հոդի հոդախախտի հաշմանդամության կանխարգելում նորածինների մոտ» ծրագիրը: Մարզում կատարվել են 1654 հետազոտություն, հայտնաբերվել են 15 կոնքազդրային հոդի հոդախախտով նորածին:

❖ USAID մանկական սքրինինգի ծրագրի շրջանակներում ստուգվել է 7380 դպրոցական, 25 դպրոց, տրամադրվել են ակնոցներ: Դասընթացներին մասնակցել են 16 ընտանեկան բժիշկ և 15 դպրոցական բուժքույր

❖ WDF ծրագրով՝ ՇՀՀ 20-1742 ծրագրով՝ «Հայաստանի շաքարախտի ազգային ծրագիր և կուրության կանխարգելում ռետինոպաթիայից» հետազոտվել են 1432 մարդ, որից օպտիկական համակցված տոմոգրաֆիա՝ 189 անձ: Դասընթացներին մասնակցել են 25 ներզատաբաններ, սրտաբաններ և նյարդաբաններ և 49 թերապևտներ, ընտանեկան բժիշկներ:

❖ Վանաձորում գործում է «Հովարդ Կարագյոզյան» բարեգործական ատամնաբուժական և ակնաբուժական կենտրոնը,որն սպասարկում է մանկական (մինչև 12 տարեկան երեխաներ) ազգաբնակչությանը: Ակնաբուժական ծառայություն հիմնադրման օրվանից մատուցվել է 9827 երեխայի, որից 2022թ. առաջին անգամ հաշվառման է վերցվել 1558 երեխա, հաշվառումից հանվել են՝ 235 երեխա, հաշվառման մեջ են՝ 2510: Ատամնաբուժական ծառայություն հիմնադրման օրվանից մատուցվել է 55734 երեխայի, որից 2022թ. առաջին անգամ ընդգրկվել են 1811 երեխա, իսկ հաշվառումից հանվել են՝ 1972: Հաշվառման մեջ մնացած է 14880 երեխա:

❖ Լոռու մարզ գործուղված, ինչպես նաև ոչ տեղաբնակ նոր նշանակված բժիշկ-մասնագետների բնակարանային կարիքները լուծելու հարցում ցուցաբերվում է նյութական և կենցաղային հետևողական աջակցություն աշխատել են 2, իսկ «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում՝ 1 սիրիահայ բժիշկներ:

❖ Ճապոնիայի կառավարության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ախտաբանա-հյուսվածքաբանական լաբորատորիան ամբողջովին կվերազինվի և կհագեցվի նորագույն ժամանակակից, արդի միջազգային չափանիշներին համապատասխան լաբորատոր տեխնիկայով:

❖ ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի նոր շենքի կառուցումը: 2022թ. մեկնարկել և ընթանում են ՀՀ Լոռու մարզի «Տաշիր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի նոր շենքի կառուցման շինարարական աշխատանքները:

❖ ԱՄՆ դեսպանատան ռազմական համագործակցության գրասենյակի կողմից «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին և մի քանի այլ հաստատություններին տրամադրվել է գույք և բժշկական նշանակության ապրանքներ:

❖ 2022թ-ի ընթացքում ՀՀ Լոռու մարզի առողջապահական ընկերություններում Հայաստան-Սփյուռք համագործակցության զարգացման ուղղությամբ իրականացվել են աշխատանքներ՝ ԱՄՆ-ից, Անգլիայից, Ֆրանսիայից բժիշկների այցեր և փորձի փոխանակումներ:

❖ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի (ԻՀԱԿ) բժշկական շարժական խմբի մասնագետները 2022թ. ծրագրերի շրջանակներում իրականացրել են 37 այց Լոռու մարզի 23 համայնքներում՝ Սարահարթ, Արևաշող, Լուսաղբյուր, Բազում, Դարբաս, Փամբակ, Ագարակ, Ամրակից, Արևածագ, Արծնի, Բլագոդարնոյե, Գարգառ, Լեռնահովիտ, Կաթնառատ, Ձորամուտ, Մեդովկա, Միխայլովկա, Պուշկինո, Պրիվոլնոյե, Սարատովկա, Սարչապետ, Վարդաբլուր, որտեղ շարժական կլինիկաների և տեղական ամբուլատորիաների բազայի վրա ՄԻԱՎ-ի, վիրուսային հեպատիտներ Բ-ի, Ց-ի և սիֆիլիսի վերաբերյալ հետազոտվել է 993 մարդ:

❖ Լոռու մարզում 2022թ. իրականացվել է 3 հանրային միջոցառում՝ 2-ը՝ Վանաձոր և 1-ը՝ Սպիտակ քաղաքներում, որոնց ընթացքում հետազոտվել է 239 մարդ: Հանրային միջոցառումները կազմակերպվել էին ՁԻԱՀ-ից մահացածների հիշատակի օրվա, հեպատիտների դեմ պայքարի համաշխարհային օրվա և հետազոտության եվրոպական շաբաթվա շրջանակներում:

❖ Իրականացվել են սեմինար-վարժանքներ բուժաշխատողների շրջանում՝ Ալավերդի, Տաշիր, Ստեփանավան և Օձուն համայնքներում, որոնց մասնակցել է Լոռու մարզի վերոհիշյալ համայնքների 103 բուժաշխատող:

❖ Վանաձոր քաղաքում իրակացվել է փոխօգնության խմբի 11 հանդիպում, որին մասնակցել է 194 կին: Հանդիպումների ընթացքում քննարկվել է ՄԻԱՎ վարակին առնչվող հարցեր:

❖ ԻՀԱԿ-ում 2022թ. հոկտեմբերին տեղի ունեցած ՀՀ ԱՆ-ի կողմից կրեդիտավորված (16 ՇՄԶ կրեդիտ) «Բնակչության զանգվածային թեստավորման և պատվաստումների արշավի կազմակերպում և իրականացում» թեմայով սեմինարին մասնակցել է Լոռու մարզի 3 ավագ բուժաշխատող:

❖ ՀՀ առողջապահության նախարարության կողմից Վանաձոր քաղաքում կազմակերպվել և իրականացվել է «Առողջ ապրելակերպ» խորագրով քայլարշավ, որին մասնակցել են առողջապահական ու կրթական ոլորտի ներկայացուցիչները և աշակերտները:

❖ ՀՀ Լոռու մարզ հրավիրված երիտասարդ բժիշկներին ևս ցուցաբերվում է նյութական և կենցաղային հետևողական աջակցություն:

❖ Թարմացվել են առողջապահական ընկերությունների ինտերնետային կայք-էջերը, որտեղ արտացոլված են ընկերությունների գործունեությունն ու աշխատանքի ծավալը:

❖ Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունում գործում է (0322) 2-33-99 հեռախոսահամարով թեժ գիծ՝ ազգաբնակչության կողմից բարձրացված հարցերին արագ արձագանքելու նպատակով: Թեժ գծի աշխատանքի արդյունքում նաև վեր են հանվում համակարգում առկա թերություններ, բացթողումներ: Արձանագրվել է ավելի քան 300 զանգ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական աջակցություն

❖ Շարունակվում են պետական քաղաքականության ուղղություններից մեկի՝ սոցիալական ծառայությունների մեկտեղման՝ համալիր կենտրոնների ստեղծման աշխատանքները: Սոցիալական պաշտպանության վարչարարության ծրագիրը Հայաստանի սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման բարեփոխումների առանցքային ծրագիրն է, ըստ որի տարածաշրջանային կենտրոններում կգործեն ՄՍԾ-ի տարածքային կենտրոնները: Սպիտակի նույնատիպ Համալիր կենտրոնի կառուցումով մարզում կամբողջանա համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների կառուցման գործընթացը:

❖ 2021թ. ապրիլից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության /ձևավորված Միասնական սոցիալական ծառայության՝ ՄՍԾ, կազմում/ անցած սոցիալական աջակցության տարածքային թվով հինգ տարածքային կենտրոններին կից գործող Տարածաշրջանային համաձայնագրերի հիման վրա ձևավորված Համակարգող խորհուրդների նախագահներ են ընտրվել ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակիցները, որն ինքնին փաստում է մարզպետարանի սերտ համագործակցային աշխատանքի մասին: ՄՍԾ տարածքային կենտրոններում գործող համակարգող խորհուրդները յյուրաքանչյուր ամիս անց են կացրել նիստեր, կատարել տնայցեր:

❖ 2022թ. ընթացքում Կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստները տրա-մադրվել են անապահովության գնահատման համակարգի միջոցով, որի տեռղեկատվական շտեմարանը վարում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը: Նախատեսվում է 2023թ. հոկտեմբերին ներդնել անապահովության գնահատման նոր չափորոշիչներ:

❖ Մարզում 2022թ. ընթացքում նախատեսված ավելի քան 4.3 մլրդ դրամից՝ սոցիալական ծառայության տարածքային մարմինների կողմից վճարվել է շուրջ 2 մլրդ դրամ պետական նպաստներ /ներառյալ՝ ընտանեկան և սոցիալական նպաստները, հրատապ օգնությունները/:

❖ Սահմանված ժամկետում են իրականացվել տարաբնույթ կենսաթոշակները, ընտանեկան և սոցիալական նպաստների և տարաբնույթ հրատապ օգնությունների վճարումները /դրանք են՝ նպաստառության սահմանային միավորից ցածր միավոր ունեցող ընտանիքներին տրվող եռամսակային դրամական, նպաստառու ընտանիքներում՝ երեխայի ծննդյան, երեխայի առաջին դասարան ընդունվելու, ընտանիքի անդամի մահվան դեպքերում դրամական օգնությունները/:

❖ Մարզի սոցիալական ծառայությունների կողմից շարունակվել է Խորհրդային տարիներին բանկում ավանդադրված գումարների դիմաց տրվող փոխհատուցման գործընթացը:

Կենսաթոշակային ապահովություն

ՀՀ Լոռու մարզում 01.01.2022թ. դրությամբ կենսաթոշակ են ստանում ավելի քան 49 հազար մարդ, հաշմանդամություն ունեն ավելի քան 16 հազարը, մանկուց հաշմանդամություն ունի շուրջ 700 երեխա:

Մարզում սահմանված ժամկետներում վճարվել են 2022թ. կենսաթոշակները:

Աշխատաշուկա և զբաղվածություն

❖ Ինչպես նախորդ, այնպես էլ 2022թ. ՀՀ Լոռու մարզում վարձատրվող հասարակական աշխատանքների շրջանակներում աշխատանքներ չեն իրականացվել:

❖ Շարունակում են գործել ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ համայնքների հետ համագործակցային «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավումը զբաղվածության խթանման

միջոցով» (LIFE՝ Կյանք) ծրագրի աջակցությամբ համայնքի ենթակայության ներքո Վանաձորում կազմավորված բարեկարգման հարցերով և համայնքային գույքի պահպանման և սանմաքրման աշխատանքներով զբաղվող «Նեցուկ» ՀՈԱԿ-ը և Սպիտակում՝ ջերմոցային տնտեսությունը, որտեղ յուրաքանչյուրում ներգրավված են մեկուկես տասնյակ հաշմանդամություն ունեցող անձինք:

❖ Զբաղվածության ծրագրեր են իրականացնում մարզում գործող «Լիարժեք կյանք» /նախագահ՝ ՀՀ վարչապետի հասարակական հիմունքներով խորհրդական Սուրեն Մաղաքյան, երեխաների վերականգնողական, կրթական և հանգստի ծրագրեր/, «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» /նախագահ՝ Անուշ Ասլանյան, տպագրություն, կարի արտադրություն, կրթական, իրավունքի իրացման ծրագրեր/ հաշմանդամության հարցերով զբաղվող ՀԿ-ները, Վանաձորում գործող «Էբրիկոտ» ընկերությունը /ղեկավար՝ Գայանե Խաչատրյան, հուշանվերների և արծաթյա զարդերի արտադրություն/, որոնց աշխատանքներում զբաղված են հիմնականում հաշմանդամություն ունեցող անձինք:

❖ 2022թ. «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ-ն ստեղծեց Անկախ կյանքի կենտրոն, նման ծրագրային աշխատանքներ մինչ այդ իրականացրել էր «Լիարժեք կյանք» ներառական հասարակության խթանման ՀԿ-ն, առաջիկայում նման կենտրոնների ստեղծումը դառնալու է նպատակային ուղղություն:

Աջակցություն հաշմանդամություն ունեցող անձանց և տարեցներին

ՀՀ Լոռու մարզում բնակվում են 19,276 հաշմանդամություն ունեցուղ անձ, որից երեխա՝ 746: Հաշմանդամություն ունեցող անձանց համակողմանի աջակցությունը շարունակում է մնալ մարզպետարանի առաջնահերթ գործառույթներից մեկը: Մարզպետարանը սերտ համագործակցային աշխատանք է իրականացնում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ, գործընթացում ներգրավելով մարզի ակտիվ կառույցներին:

Առաջնահերթ ուղղություններից է հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայրի ապահովումը (առավելաբար՝ թեքահարթակների կառուցում), որը հիմնականում ընթանում է համակարգված աշխատանքների դեպքում (պետական ծրագրային աշխատանքներ, սուբվենցիոն ծրագրեր): Առաջիկայում օրենսդրության խստացման արդյունքում ինչպես պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններում, այնպես էլ հասարակական, տարաբնույթ վայրերում (մշակութային, մարզական կառույցներ, ընտրատեղամասեր և այլն) կունենանք մատչելի միջավայրի այլ պատկեր:

❖ 2021-2022թթ. համայնքների խոշորացման ծրագրից հետո ՀՀ Լոռու մարզում ձևավորվեցին 2021թ.-ից հետո՝ 38, 2022թ.-ից ավարտին՝ 11 համայնքներ (որոնցից՝ 9-ը խոշորացված կամ բազմաբնակավայրային/: Խոշորացված թվով 9 համայնքներում շենքերի առջև կառուցված են թեքահարթակներ /Վանաձորում այն կիրառելի չէ մեծ թեքության պատճառով), սակայն շատ դեպքերում մեկից ավելի հարկեր ունեցող համայնքապետարանների շենքերում մատչելի են միայն առաջին հարկերը, որոնցից շատերի դեպքում Սպասարկման գրասենյակներ են գործում: Իսկ չխոշորացված երկու համայնքներում (Լերմոնտովո, Ֆիոլետովո) համայնքապետարանների շենքը երկհարկանի է, համայնքի ղեկավարի աշխատակազմը տեղավորված է երկրորդ հարկում: Լերմոնտովոյում շենքի առջև կառուցված է թեքահարթակ, իսկ Ֆիոլետովոյում՝ չկա:

❖ ՀՀ Լոռու մարզային ենթակայության թվով 149 հանրակրթական հաստատու-թյուններից հաշվետու տարվա ընթացքում թվով 118 դպրոցներում սովորում է 701 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտ: Թվով 25 դպրոց ունի հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված սանհանգույցներ, իսկ 124 դպրոց ունի թեքահարթակ, 21-ը մատչելի է, երկու դպրոց (Ալավերդու թիվ 2, Հագվի) ներկայումս կառուցվում է:

❖ Իրենց մատչելիությամբ առանձնանում են Վանաձորի Ե.Չարենցի անվան թիվ 7 և Ա.Խլղաթյանի անվան թիվ 18 դպրոցները, որտեղ հարմարեցված է հաշմանդամություն ունեցող անձանց մուտքի և կառույցի ներսում ազատ տեղաշարժը:

❖ «Լիարժեք կյանք» ներառական հասարակության խթանման հասարակական կազմակերպության Ստեփանավան համայնքում գործող նորաբաց նոր գրասենյակը հիմնանորոգվեց «Ջինիշյան հիշատակի հիմնադրամի» և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի ու կահավորվեց «Ստեփան Գիշյան» հիմնադրամի ֆինանսավորմամբ: Առաջիկայում ծրագրվում է երկհարկանի շենքում տեղադրել նաև վերելակ և այն կդառնա ՀՀ-ում մատչելի և օրինակելի կառույցներից մեկը, քանի որ բացի քաղաքաշինության նորմերին համապատասխան թեքահարթակը, մատչելի սանհանգույցը, ունի նաև տեսողության և լսողության խնդիրներով անձանց համար քաղաքաշինական մատչելի, անվտանգ և անարգել միջավայր:

❖ 2022թ. ընթացքում ՀՀ ԿԳՄՍ նախարարության և ԱՄՆ ՄԶԳ համագործակցությամբ «Ներառական կրթության համակարգի հզորացում Հայաստանում» ծրագրի շրջանակներում ՀՀ Լոռու մարզային ենթակայության թվով 14 (Վանաձորի թիվ 4, 9, 25, 27, 30, Սպիտակի թիվ 2, 3, Ստեփանավանի թիվ 1, 2, Ալավերդու թիվ 1, 12 հիմնական, Լեռնապատի, Շամլուղի և Սարատովկայի միջնակարգ դպրոցներ) հանրակրթական հաստատություններում թեքահարթակները, սանհանգույցները հարմարեցված են հաշմանդամություն ունեցող անձանց համար, ինչպես նաև վերանորոգվել է առանձնացված սենյակ, իսկ Աքորու և Օձունի թիվ 2 միջնակարգ դպրոցներում կառուցվել է թեքահարթակ:

❖ ՀՀ Լոռու մարզի իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող 29 առողջապահական ընկերություններից 22-ը ունեն թեքահարթակ և մատչելի են /որից՝ 2-ում առկա է վերելակ/, մատչելի է 4-ը, մասնակի մատչելի՝ 1, մատչելի չէ 2-ը: Գյուղական համայնքներում գործող թվով 95 բուժակ-մանկաբարձական կետերից 43-ը մատչելի են, մատչելի չէ 34-ը, մասնակի մատչելի՝ 9, տարածք չունեցող 9 ԲՄԿ սպասարկվում են արտագնա:

❖ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բոլոր հարկերում լիարժեքորեն պահպանված են հաշմանդամություն ունեցող անձանց համար իրավական ակտերով սահմանված շինությունների մատչելիության պայմանները՝ ազատ մուտք, լայն դռներ, վերելակ, իսկ «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ստացիոնարում տեղադրված է վերելակ:

❖ ՄՍԾ-ի կազմում գործող բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների կողմից լրացված վերականգնողական անհատական ծրագրերի հիման վրա հաշմանդամություն ունեցողները պետության կողմից պետական հավաստագրերով անվճար ստացել են վերականգնողական տարաբնույթ պարագաներ (անվասայլակներ, լսողական սարքեր, հենակներ, պրոթեզներ, արմնկահենակներ և այլն):

❖ Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Լոռու մարզային հանձնաժողովը 2022թ. ընթացքում հրավիրել է է դռնբաց 3 նիստ /մեկը՝ արտագնա/, որի ընթացքում ներկայացվել են կատարված և ընթացիկ աշխատանքների, օրենսդրական փոփոխությունների մասին թեմատիկ տեղեկատվություն: Լոռու մարզը, ի դեմ՝ «Լիարժեք կյանք» ներառական հասարակության

խթանման և «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ-ների, ներկայացված է Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի կազմում:

❖ Մարզպետարանը սերտ համագործակցում է մարզում գործող միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների (կամ մասնաճյուղերի) հետ, նրանցից մեծ մասը ընդգրկված են մարզպետարանում գործող տարբեր հանձնաժողովներում կամ տարածաշրջանային համակարգող խորհուրդներում:

❖ Հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց հիմնահարցերով զբաղվող միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների սոցիալական աջակցության ծրագրերը վերաբերել են մարզում գործող ցերեկային կենտրոններին, տնային պայմաններում միայնակ հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական սպասարկման ծառայություններին և հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամք տրամադրող հաստատություններին, որոնց ֆինանսավորման ստվար մասը իրականացվում է ՀՀ պետական բյուջեից: Մարզպետարանի ուշադրության կենտրոնում են եղել նաև անապահով քաղաքացիների հիմնահարցերը:

❖ ՀՀ Լոռու մարզպետի 02.11.2022թ. թիվ 732-Ա որոշումով ձևավորվեց «ՀՀ Լոռու մարզում հոգեկան առողջական խնդիրներ ունեցող անձանց և նրանց ընտանիքի անդամների փոխօգնության աշխատանքները համակարգող աշխատանքային խումբ, որը համագործակցային աշխատանք է իրականացնում ՀՀ առողջապահության նախարարության հետ:

Փախստականների և միգրացիայի հիմնահարցեր

❖ ՀՀ Լոռու մարզում բնակվող գրեթե բոլոր փախստականները ստացել են քաղաքացիություն /գրեթե 90% եղել են, նախկին քաղաքաբնակներ/ աշխատունակ են նրանց ավելի քան 40%-ը:

❖ 1999-2005թթ. բնակարանային խնդիր է լուծվել փախստականների 292 ընտանիքների համար /Փախստականների նորվեգական խորհրդի, ՄԱԿ-ի և ՀՀ պետբյուջեի միջոցներով: Իսկ 2006-2022թթ. Լոռու մարզում փախստական ընտանիքների բնակարանային ապահովման պետական ծրագիր չեն իրականացվել, միայն պարբերաբար սեփականաշնորհվել են որոշակի ժամկետով փախստական ընտանիքներին հատկացված քոթեջները, տները:

❖ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայությունը մարզպետարանի հետ կատարած համատեղ ուսումնասիրությունից հետո, նախկինում իրենց բնակապահովման իրավունքը չիրացրած 9 փախստականի ընտանիքից շահառու են ընտրել 6-ին /Ախթալա-4, Սպիտակ-1, Ստեփանավան-1/: Ծրագիրը ընթացքի մեջ է և նախատեսվում է, որ 2023թ. նախկինում բնակարանի գնման համար իրենց հավաստագիրը չիրացրած փախստական ընտանիքներին ևս մեկ հնարավորություն կտրվի:

❖ Նորաստեղծ ՀՀ ներքին գործերի նախարարության աշխատակազմ փոխադրված Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը նախաձեռնել է բնակարանի կարիքավոր փախստական ընտանիքների ցուցակների վերանայման աշխատանքներ /ՀՀ Լոռու մարզում նախնական տվյալներով նման ընտանիքների թիվը գերազանցում է 100-ը /վերջին հաշվառ-ման ժամանակ 47 ընտանիքներ գտնվում էին արտերկրում, նրանց մեծ մասը՝ ՌԴ-ում/:

Զոհված և հաշմանդամ զինծառայողների հիմնահարցեր

❖ ՀՀ կառավարության 06.12.2018թ. թիվ 1419-Ն, 10.08.2017թ. թիվ 1016-Ն և 09.06.2005թ. թիվ 947-Ն որոշումների պահանջներով են ընթանում զոհված (մահացած) և հաշմանդամ (վիրավոր)

զինծառայողների (ազատամարտիկների) ունեցող ընտանիքների բնակարանային ապահովման աշխատանքները:

❖ Վերջին տարիներին Լոռու մարզում բնակարան կամ բնակարան ձեռք բերելու համար ֆինանսական աջակցություն են ստացել զոհվածի և զինհաշմանդամի ավելի քան 250 ընտանիքներ:

❖ 2022թ. ընթացքում օրենսդրական փոփոխության արդյունքում /ՀՀ կառավարության 25.11.2021թ. թիվ 1930-Ն որոշման Հավելվածի 6-րդ կետի համաձայն բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող շահառուների ապահովման գործընթացը պետք է իրականացվի ըստ տարիների/ ՀՀ պաշտպանության նախարարությունից բնակարանի գնման վկայագիր տրամադրելու համար պահանջվել է թվով 4 հաշմանդամություն ունեցող զինծառայողների բնակարանային գործը /մինչև 2005թ. հաշվառված/, ՀՀ ՊՆ ուղարկվել է դրանցից երկուսի փաստաթղթերը, քանի որ մյուս երկուսի ընտանիքները բացակայում էին:

❖ 2022թ. հաշվառվել է 14 զոհված /մահացած, անհետ կորած, ընտանիքներից մեկի դեպքում զոհվել են երկու եղբայրները/ և թվով 1 հաշմանդամություն ունեցող զինծառայողների ընտանիքների փաստաթղթերը ուղարկվել են ՀՀ պաշտպանության նախարարություն՝ փոխհատուցման համար:

❖ ՀՀ Լոռու մարզպետի 10.01.2022թ. թիվ 12-Ա որոշմամբ համակարգված առողջապահության և սոցիալական ապահովության վարչության մասնագետները իրավական և մասնագիտական (նախկինում՝ վարչական) հսկողություն են իրականացրել համայնքներում՝ լիազոր նախարարությունների կողմից առաջարկված հարցաշարերի հիման վրա:

❖ 2022թ. արդյունավետորեն է գործել Դրամական և նյութական օգնություն տրամադրելու համար ՀՀ Լոռու մարզպետարան հասցեագրված քաղաքացիների դիմումների քննարկման հանձնաժողովը: Կազմակերպվել և անցկացվել են ՀՀ Լոռու մարզպետարան դիմած քաղաքացիների դիմումների քննարկման հանձնաժողովի թվով 10 նիստեր, որոնց ընթացքում քննարկվել են ավելի քան 1000 քաղաքացիների դիմումները, որոնց տրվել է համապատասխան լուծում /դրամական օգնության տրամադրում, նամակի վերահասցեագրում ՏԻՄ-եր, մերժում, եթե վերջին մեկ տարվա ընթացքում արդեն իսկ ստացել է դրամական աջակցություն և այլն/:

❖ ՀՀ Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունում գործում է թեժ գիծ՝ 0322 2-33-99 հեռախոսահամարով /առողջապահության և սոցիալական ապահովության հարցերով/: Հեռաձայնողների հարցերն առնչվում են առողջապահական, սոցիալական և շատ այլ ոլորտներում իրավունքների իրացմանը, որոնց անմիջապես անդրադարձ է եղել:

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանություն

2022թվականի Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում իրականացվել են բազմաթիվ աշխատանքներ.

❖ Ուսումնասիրվել է թվով 670 կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաներ, կատարվել են նրանց կարիքների գնահատում, ուսումնասիրման և գնահատման արդյունքների հիման վրա մշակվել են կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնման անհատական

ծրագրեր և ապահովվել դրանց իրականացումը համապատասխան հաստատություններում: Եղել են երեխաների կյանքին և առողջությանը սպառնացող, երեխայի իրավունքների և շահերի ոտնահարման հատուկ դեպքեր, որոնց տրվել է արագ արձագանք և վերականգնվել են երեխայի իրավունքները: Կարգավորվել են ամուսնալուծվող ընտանիքների երեխաների ՝ ծնողներից մեկի կամ մյուսի մոտ խնամքի և տեսակցության հարցեր, ընտանիքի վերամիավորմանն ու ամրապնդմանը ուղղված մասնագիտական աշխատանքներ, իրավունքների և պարտականությունների պարզաբանումներ, խորհրդատվություններ, համատեղ հանդիպում-քննարկումներ /փոխհամաձայնությամբ/:

- Ուսումնասիրվել է մարզի ԽՀՀ-ների գործունեությունները, ներկայացվել են առաջարկություններ, տրվել մեթոդական ցուցումներ, տարվել աշխատանքներ համայնքների ԽՀՀ-ների կողմից աշխատանքային թերությունների վերացման ուղղությամբ: Անհրաժեշտության դեպքում համապատասխան մասնագետները մասնակցություն են ունեցել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների նիստերին:
- Կատարվել է մոտ 760 քաղաքացիների ընդունելություն, որի ընթացքում տրվել են համապատասխան ցուցումներ և խորհրդատվություններ տարբեր հարցերի շուրջ՝ հոգեբանական, սոցիալական, մանկավարժական, առողջական, իրավաբանական և այլն:
- 2022թ-ի ընթացքում անչափահասի շահերը և իրավունքները պաշտպանելու նպատակով համապատասխան մասնագետը մասնկացություն է ունեցել 46 դատական նիստերի, որտեղ անչափահասը եղել է տուժող, մեղադրյալ կամ վկա:
- Ոստիկանության համապատասխան ծառայությունների և ԽՀՀ-ների հետ համատեղ քննարկվել են մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ, հանցագործություն կատարած անչափահասների խնդիրները, անհրաժեշտության դեպքում տրվել են ուղղորդումներ համապատասխան հաստատություններ՝ ցերեկային խնամք իրականացնող կենտրոններ: Պրոֆիլակտիկ աշխատանքներ են իրականացվել իրենց երեխաների վրա բացասական ներգործություն ունեցող, հակասոցիալական վարքագիծ դրսևորող ծնողների հետ:
- 2022թ.-ի ընթացքում ՈԼՄՎ-ի կողմից հաշվառված են 24 անչափահասներ, որից՝

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԻՎ	ՀԱՆՑԱՆՔ ԿԱՏԱՐԱԾ	ՉԱՆՑԱՆՔ ԿԱՏԱՐԱԾ	ՄՈՒՐԱ ՑԻԿ	ԹԱՓԱՌԱ ՇՐՋԻԿ	ՊԱՐՏՈՒՍ ԻՑ ԴՈՒՐՍ ՄՆԱՑԱԾ	ԱՆՕԹԵՎԱՆ ԸՆՏԱՆԻՔԸ ԼՔԱԾ	ՏՂԱ	ԱՂՋԻԿ	ԾՆՈՂ
24	21	3	-	-	-	-	22	2	1

- Բռնության ենթարկված քաղաքացիների պաշտպանության, ինչպես նաև թրաֆիկինգի դեպքերի կանխարգելման նպատակով համագործակցելով ոստիկանության բաժինների, համայնքների և այլ պատկան մարմինների հետ համատեղ կատարվել է ուսումնասիրություն, կարիքների գնահատում և ուղղորդում համապատասխան կառույցներ /վերականգնողական, խնամքի տրամադրման, իրավական, կրթական, բժշկական աջակցության տրամադրման նպատակով/:
- Կատարվել են ավելի քան 156 տնայցեր, որոնց արդյունքում երեխաներից մի քանիսի խնամքը կազմակերպվել է շուրջօրյա խնամք իրականացնող հաստատությունում, խնամատար ընտանիքներում: Մյուսների մուտքը շուրջօրյա խնամք իրականացնող հաստատություն

կանխարգելվել է՝ ընտանիքին հասցեական աջակցություն, մասնագիտական խորհրդատվություն տրամադրելու կամ ցերեկային խնամքի կենտրոն ուղղորդելու արդյունքում:

- ✓ «Երևանի «Մանկան տուն» ՊՈԱԿ - 5 երեխա:
- ✓ «Սաբինե» փոքր խմբով տուն - 1 երեխա
- ✓ «Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ - 1 երեխա
- ✓ 2 երեխայի խնամքի կազմակերպումը իրականացվել է 1 խնամատար ընտանիքում

❖ Շուրջօրյա խնամք իրականացնող հաստատությունից կենսաբանական ընտանիք են վերադարձել 3 երեխա, որից

2-ը - «Սաբինե» փոքր խմբով տնից,

1-ը - Շիրակի մարզի «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ից:

❖ Մարզի դպրոցներում ներառական կրթություն է ստանում 678 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխա, որից 284-ին վկայագիր է տրամադրվել 2022թ-ի ընթացքում, իսկ տնային ուսուցում կազմակերպվում է 21 երեխայի հետ: Պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաները 64-ն են, որոնց զգալի մասը կազմում են մշակութային առանձնահատկություններ ունեցող երեխաները/մոլոկաններ/, երեխաներ, որոնց առողջական վիճակը հնարավորություն չի տալիս ներգրավել ուսումնական պրոցեսում: 2022թ-ի ընթացքում «Նորք» ավտոմատացված տեղեկատվական համակարգ են մուտքագրվել կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների և անձանց տվյալները՝ հետևյալ դասակարգմամբ.

Կարգավիճակ	**2022**
Առանց ծնողական խնամքի մնացած երեխա	8
Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձ	2
Որդեգրել ցանկացող անձ	13
Որդեգրման ենթակա երեխա	2
Որդեգրվել է	0
Որդեգրման ընթացքի մեջ է	1
Շուրջօրյա խնամքի հատատություն տեղավորված երեխա	7

❖ 2022թ-ի ընթացքում 4 անձ հաշվառվել է որպես խնամատար ծնողի թեկնածու: 2022թ-ի ընթացքում 2 երեխայի խնամքը կազմակերպվել է 1 խնամատար ընտանիքում: Մարզի 22

խնամատար ընտանիքներում ներկայումս խնամվում են 33 հոգեզավակ: Տարվա ընթացքում խնամատար ընտանիքներում խնամք և դաստիարակություն ստացել են 35 հոգեզավակ /24 ընտանիքներում/, ոնցից 2-ի նկատմամբ դադարել է խնամատարությունը՝ չափահաս դառնալու պատճառով : Օրենքով սահմանված կարգով ամիսը մեկ անգամ կատարվում է վերահսկողություն բաժնի կողմից, տնայցերի ընթացքում վերահսկվում են մի շարք հարցեր՝ կապված խնամքի տրամադրման որակի հետ: Աշխատանքի արդյունքում վերանայվել և շտկվել են որոշ ընտանիքներում առկա բացթողումները:

❖ Լոռու մարզում կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության 2022թ-ի միջոցառումների ծրագրի շրջանակներում իրականացվել են «Նախաձեռնողական մասնակցությունը ժողովրդավարության կայացման մեջ» ծրագիրը և «Հոգատարություն հանուն հավասարության» դասընթացը: Դասընթացներին մասնակցել են Լոռու մարզի 18-40 տարեկան երիտասարդ տղամարդիկ և կանայք, ծնողներ: Իրականացնողներն են՝ Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն և Վորլդ Վիժընն Հայաստանը «ԵՄ-ն հանուն կանանց և տղամարդկանց իրավահավասարության» եռամյա տարածաշրջանային ծրագրի շրջանակներում: Թեմաներն են՝ «Գենդերը և իշխանության դինամիկան» և «Ծնողավարություն, խնամատարություն եվ համատեղ որոշումների կայացում»: Օրենքով սահմանված կարգով իրականացվել են գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի նիստեր, որտեղ ներկայացվել և ամփոփվել են վերոնշյալ ծրագրերը:

❖ Մարզում գործող ցերեկային խնամք իրականացնող կազմակերպությունների հետ իրականացվել են համատեղ տնայցեր, մասնագիտական խորհրդատվություն և թեմատիկ քննարկումներ: Այն ընտանիքների հարցերով, որտեղ առկա են եղել բարդ կամ կազմակերպության ռեսուրսներից դուրս խնդիրներ, կազմակերպվել են ընդլայնված քննարկումներ՝ հարցերին առավել ամբողջական լուծում տալու նպատակով: Որոշ ծնողների հետ կազմակերպության առաջարկությամբ տարվել են սոցիալ-հոգեբանական և ծնողավարման հմտությունների զարգացմանն ուղղված աշխատանքներ:

Վանաձորի «Փոքրիկ Իշխան» կենտրոն	130 երեխա
Տաշիրի «Փոքրիկ Իշխան» կենտրոն	35 երեխա
«Շող» երեխաների համայնքահեն ցերեկային կենտրոն	59 երեխա
«Օրրան» ԲՀԿ	110 երեխա
Լոռու մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն	100 երեխա

2022թ-ի ընթացքում մարզպետարանի միջնորդությամբ մարզի կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաներին և նրանց ընտանիքներին տրամադրվել է հումանիտար աջակցություն.

«Դիակոնիա» կազմակերպության «Մեսենքինդերեն» հիմնադրամ	✓ Առանձնահատուկ խնամքի կարիք ունեցող 22 երեխայի տրամադրվել է 1 տարվա համար նախատեսված հիգիենիկ և անկողնային պարագաներ, որոնցից 1-ին նաև համակարգիչ՝ տնային ուսուցում կազմակերպելու նպատակով, ✓ 1 ընտանիքի տանիքի վերանորոգում, ✓ Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 570 ընտանիքի տրամադրվել է սնունդ, անկողնային պարագաներ և սրբիչներ (200 շահառու), 125 դպրոցական և շուրջ 33 երեխայի տրամադրվել է ձմեռային տաք հագուստ, գրենական պիտույքներ, ✓ 10 ընտանիքի տրամադրվել է այլընտրանքային վառելիք, ✓ Կազմակերպվել է շուրջ 88 երեխայի ամառային հանգիստը Թումանյան համայնքի ճամբարում ✓ Աջակցություն է ցուցաբերվել շուրջ 31 միայնակ տարեցների:
«Կարո Հովագիմյան» հիմնադրամ	Հիմնադրամի կողմից մարզի անապահով ընտանիքներին տրամադրվել է հագուստ, դեղորայք
Անհատ բարերարներ	Անհատ բարերարների կողմից տրամադրվել է հագուստ, սնունդ, վառելանյութ/բրեկետ/, վառարան, լվացքի մեքենա, տրամադրվել է գումար՝ կոմունալ վարձավճարների համար, վերանորոգվել են տանիքներ, կազմակերպվել է առանձնահատուկ խնամքի կարիք ունեցող երեխաների բուժզննումը և տրամադրվել է համապատասխան դեղորայքը

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵ

հայ-ֆրանսիական

❖ 2022թ.-ի գարնանը Լոռու մարզում էր ՀՀ-ում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան, նորին գերազանցություն Անն Լույոն: Քննարկվել են մարզի և Ֆրանսիայի ռեգիոնի հետ հետագա համագործակցության առնչությամբ քայլերը և նախատեսվող աշխատանքները: Դիտարկվել է գործակցության ընդլայնման հնարավորությունը՝ ներառելով նաև կրթության և ՏՏ ոլորտները:

❖ «Ազնավուր» հիմնադրամի «Համակցված վերականգնողական բուժման ապահովում հետպատերազմյան Հայաստանում» ծրագրի շրջանակներում՝ Ֆրանսիայի արտաքին գործերի և եվրոպական հարցերի նախարարության ճգնաժամային աջակցության կենտրոնի մասնակցությամբ իրականացվել է Վանաձորի բժշկական կենտրոնում վերականգնողական բաժանմունքի բացումը: Բաժանմունքին տրամադրվել է միջազգային բարձր ստանդարտներին համապատասխանող 12 միավոր վերականգնողական սարքավորում: Վերապատրաստվել են տեղի 14 մասնագետները: Վերապատրաստումներ իրականացնելու նպատակով բժիշկների ևս 2 խումբ Ֆրանիսայից Վանաձոր է ժամանել մայիսին:

❖ Ամռանը Լոռու մարզում էին Ֆրանսիայի Հարավային՝ Պրովանս-Ալպեր Լազուրի ափ ռեգիոնի արտաքին կապերի պատասխանատու Քիմ-Ան Քենիբոլը և հայաստանյան ծրագրերի պատասխանատու Սեսիլ Էլիզալդը: Հյուրերն այցեր էին կատարել Վանաձորի թիվ 3 դպրոց, որտեղ ՊԱԿԱ ռեգիոնի ֆինանսավորմամբ և «Հայաստան» հիմնադրամի օժանդակությամբ տեղադրվել էին արևային վահանակներ: Պատվիրակությունն այցելել էր նաև Վանաձորի տեխնոլոգիական կենտրոն, ծանոթացել ծրագրերին, քննարկվել են համագործակցության հետագա հնարավորությունները:

Այցելություն է եղել նաև «Ցավեր առանց սահմանների» կազմակերպություն, ամփոփվել են վերջին շրջանում կազմակերպության կողմից կատարված աշխատանքները, այցի վերջնական կետը Լոռի-Փամբակ երկրագիտական թանգարանն էր, որտեղ դիտարկվել է թանգարանի զարգացման մեծ և հեռանկարային նոր ծրագրի իրականացման հնարավորությունը:

❖ Լոռու մարզի պատվիրակությունը՝ մարզպետ Արամ Խաչատրյանի գլխավորությամբ մասնակցել է Լիոնում անցկացվող Հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության չորրորդ համաժողովին: Մարզի պատվիրակության կազմում էին Ալավերդի, Սպիտակ, Վանաձոր, Ստեփանավան, Տաշիր համայնքների ղեկավարները և ներկայացուցիչներ: Համաժողովի ընթացքում գործընկերային պայմանագիր է կնքվել «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի և ֆրանսիական «Սոլգես էներգիան» կազմակերպության միջև: Արդյունքում՝ Փամբակ համայնքի Դեբեդ բնակավայրում 2023թ. նախատեսվում է հիմնադրել նորարարական լուծումներով այլընտրանքային էներգիայի արտադրություն:

❖ Լոռու մարզի պատվիրակությունը դեկտեմբերին եռօրյա այցով Ֆրանսիայի ՊԱԿԱ ռեգիոնում էր: Պատվիրակությունը մեկնել էր Մարսել՝ ռեգիոնալ խորհրդի նախագահ Ռենո Մուզելյեի հրավերով՝ մասնակցելու «Միջերկրականի ապագան» 5-րդ միջոցառմանը: Ֆրանսիայում ՀՀ հյուպատոս Սամվել Լալայանի ուղեկցությամբ պատվիրակությունը հանդիպում է ունեցել նաև ՊԱԿԱ ռեգիոնալ խորհրդի նախագահի առաջին տեղակալ Ժան Պիեռ Քոլինի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել էին Լոռի-ՊԱԿԱ համագործակցության կարևոր հարցեր, և երկուստեք հետաքրքրություն ներկայացնող տնտեսության զարգացման առաջնային ուղղությունները, որոնց նպատակաուղղված կլինեն հետագա համագործակցային ծրագրերը:

🇦🇲 *հայ-լիտվական* 🇱🇹

❖ Տարվա ընթացքում երկու անգամ մարզում հյուրընկալվել էին ՀՀ-ում Լիտվայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. տիկին Ինգա Ստանիտե- Տոլոչկիենեն, դեսպանատան առաջին քարտուղար պրն. Էվալդաս Գալվանաուսկասը և էներգաարդյունավետության ոլորտում ծրագրեր իրականացնող կազմակերպությունների ներկայացուցիչներ: Քննարկվել էին մարզի և Լիտվայի հետ նախկինում կատարված

աշխատանքները և ապագա հնարավոր ծրագրերը՝ որոնք միտված են զարգացնելու երկու երկրների միջև առկա հարաբերությունները: Հանդիպումների արդյունքում դեսպանատունը հայտնել էր, որ Լիտվայի կառավարության կողմից տրամադրված դրամաշնորհը պատրաստ է ուղղել Լոռու մարզում էներգաարդյունավետության ծրագրեր իրականացնելուն՝ մասնավորապես արևային պանելների տեղադրմանը: Վերոնշյալի առնչությամբ լիտվական կազմակերպությանն են ներկայացվել մարզում 11 կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների ցանկը: Ծրագիրը դիմումի փուլում է:

🇦🇲 ***հայ-չինական*** 🇨🇳

❖ Հոկտեմբեր ամսին Լոռու մարզ էր ժամանել ՀՀ-ում ՉԺՀ արտակարգ և լիազոր դեսպան պարոն Ֆան Յոնգը: Անդրադարձել է արվել առևտրաարդյունաբերության, զբոսաշրջության և կրթության ոլորտներում համագործակցությունն առավել սերտացնելու անհրաժեշտությանը, մասնավորապես կարևորվել է զբոսաշրջային խմբերի ուղղորդումը, կրթական տարբեր ծրագրերի շրջանակներում ուսանողների և աշակերտների փոխանակումը և այլն: Դեսպանը այցելել է Վանաձորի գեղագիտության ազգային կենտրոն և Վանաձորի թիվ 2 դպրոց, Վանաձորի «ՉինՎան» գործարան և Հ. Թումանյանի անվ. տուն-թանգարան:

🇦🇲 ***հայ-ռուսական*** 🇷🇺

❖ Լոռու մարզի պատվիրակությունը աշնանը Արամ Խաչատրյանի գլխավորությամբ մասնակցել է «Հայ-ռուսական համագործակցություն. նոր մարտահրավերներ և հնարավորություններ» խորագրով հայ-ռուսական միջտարածաշրջանային իններորդ համաժողովին: Կլոր-սեղան ձևաչափով ընթացել են թեմատիկ քննարկումներ՝ «Հայաստանի և Ռուսաստանի միջև համագործակցությունը թվային ձևաչափում», «Տուրիստական պոտենցիալի զարգացում», «Հայաստանի մարզերի և ՌԴ ռեգիոնների միջև հումանիտար համագործակցություն» և «Ժամանակակից պայմաններում լոգիստիկա, ֆինանսներ և ներդրումներ» թեմաներով, որոնցում ներգրավված են եղել նաև Լոռու մարզպետարանի պաշտոնյաները:

❖ Իսկ դեկտեմբերին մարզի պատվիրակությունը մասնակցել է Ռուսաստանի Դաշնության Ուֆա քաղաքում անցկացվող ամենամյա «Միջազգային բիզնես շաբաթ» համաժողովին: Ֆորումը հեղինակավոր հարթակ է ձեռներեցության զարգացման առանցքային հարցերի համար և պետություն-բիզնես հնարավոր համագործակցության քննարկման՝ յուրօրինակ միջավայր: Միջոցառման մասնակիցներն ու հյուրերը քննարկել են բիզնես միջավայրի զարգացման և համագործակցության հեռանկարները, ձեռք են բերվել մի շարք պայմանավորվածություններ:

🇦🇲 ***հայ- ճապոնական*** 🇯🇵

❖ Տարվա ընթացքում ակտիվ հանդիպումներ են տեղի ունեցել ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանության ներգրավվածությամբ, ինչպես նաև իրականացվել են համագործակցային աշխատանքներ և ծրագրեր: Օգոստոսին մարզում պաշտոնական այցով ներկա էր արտակարգ և լիազոր դեսպան Ֆուկուշիմա Մասանորիին:

Քննարկվեցիին Ճապոնիայի մարզերի և Լոռու մարզի միջև համագործակցության եզրեր գտնելու առաջարկը՝ երկկողմ հարաբերությունների առավել սերտ զարգացման համար:

Ներկայացվել են մարզի հնարավորությունները և ընդգծվել է, որ միջմարզային մակարդակով ամուր կապերի ստեղծումը երկու երկրների միջև առավել կնպաստի բարեկամական երկրների հարաբերությունների զարգացմանը:

❖ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) և Ճապոնիայի դեսպանատունը մարտ ամսին ստորագրել էին համաձայնագիր՝ «Լոռու մարզի հասարակական տրանսպորտի համար ավտոբուսի տրամադրման» դրամաշնորհային ծրագրի իրականացման նպատակով: Ստորագրված համաձայնագրով՝ Ճապոնիայի դեսպանատունը տրամադրել էր ավելի քան 90.000 ԱՄՆ դոլար՝ նոր, հաշմանդություն ունեցող անձանց հարմարեցված ավտոբուսի գնման, տրանսպորտային ցանցի ընդլայնման և ենթակառուցվածքների բարեկարգման նպատակով:

❖ Ճապոնիայի կառավարության դրամաշնորհային ծրագրի և «Ազնավուր հիմնադրամի» օժանդակությամբ նախատեսվում է ամբողջությամբ վերազինել Լոռու մարզի «Վանաձորի ԲԿ» ախտաբանահյուսվածքաբանական լաբորատորիան, այն կհագեցվի նորագույն ժամանակակից, արդի միջազգային չափանիշներին համապատասխան լաբորատոր տեխնիկայով: ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան Մասանորի Ֆուկուշիմայի և «Ազնավուր» հիմնադրամի տնօրեն Քրիստինա Ազնավուրի միջև առողջապահության նախարարությունում կնքվել է համագործակցության հուշագիր:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել լաբորատոր և ախտորոշիչ յոթ սարք: Արդյունքում՝ մարզային բժշկական կենտրոնում հնարավոր կլինի իրականացնել հյուսվածքաբանական և բջջաբանական հետազոտություններ: Այն կնպաստի մարզում վիրաբուժության, օնկովիրաբուժության և էնդոսկոպիկ վիրաբուժության զարգացմանը:

Միջազգային կառույցների հետ համագործակցության ծրագրեր

ԵՄ «Տեղական դերակատարների զորեղացում հանուն զարգացման Լոռու և Տավուշի մարզերում» ծրագրի շրջանակներում իրականացված ներդրումների ծավալը Լոռու մարզում կազմել է 11.6 մլն դրամ:

Ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- ✓ Կատարվել է «Կովիդ 19-ի հետևանքների ազդեցությունը Լոռու մարզի գյուղատնտեսության վրա» վերլուծությունը, ձևավորվել են տեղական ակտիվ խմբեր, ովքեր մշակել են տարածաշրջանների զարգացման ռազմավարությունները, ըստ այդ ռազմավարությունների, կտրամադրվեն նաև դրամաշնորհներ:
- ✓ Կազմակերպվել է Լոռու մարզի տնտեսական զարգացման համաժողովը, որտեղ միջազգային կառույցների կողմից ներկայացվել են մարզում իրականացվող տնտեսական զարգացման ծրագրերը:
- ✓ Կատարվել է ուսումնական և ճանաչողական 2 այց Ավստրիա, Սլովենիա, Լեհաստան՝ մարզպետարանի, համայնքապետարանների ղեկավարության և համապատասխան մասնագետների մասնակցությամբ:

- ✓ ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը՝ ԵՄ ֆինանսավորմամբ COVID-19-ի դեմ պայքարի շրջանակներում Գյուլագարակ, Վարդաբլուր և Պուշկինո բնակավայրերի 67 անապահով ընտանիքի տրամադրել է անասնակեր և համակցված կեր:
- ✓ «ԵՄ-ն հանուն միգրանտների ներուժի օգտագործման՝ ի նպաստ Հայաստանի զարգացման» ծրագրի շրջանակներում 2022թ-ի ընթացքում բիզնեսի աջակցման ծրագիր է իրականացվել՝ 3 փուլով, որի արդյունքում աջակցություն է ստացել Լոռու մարզից 4 շահառու, ովքեր արդեն իսկ բիզնես գործընթաց են սկսել: Ծրագիրը շարունակվելու է մինչև 2024թ-ը:
- ✓ ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի կողմից սննդի արտադրության ոլորտում գործող փոքր ձեռնարկությունների արտադրողականության բարձրացման և եկամտաբերության աճին օժանդակելու համար հայտարարված մրցույթի արդյունքում աջակցություն է ստացել մարզի զբոսաշրջության ոլորտը և հանրային սնունդը ներկայացնող 5 ձեռներեց: Արևային կայաններ տեղադրելու համար նրանց կտրամադրվի 30% սուբսիդիա:

❖ «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամն (COAF) իրականացնում է 1,755.640.000 դրամ ընդհանուր արժողությամբ Գյուղական համայնքների զարգացում ծրագիրը, որը ֆինանսավորվում է ԱՄՆ-ի «Չիլդրեն Օֆ Արմենիա ֆանդ Ինք.» կազմակերպության կողմից: Ծրագիրը նախատեսված է Լոռու, Տավուշի, Շիրակի, Արմավիրի և Արագածոտնի մարզերի համայնքների համար: Ծրագրի նպատակն է բարձրացնել գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելը ներառում է զուգահեռաբար իրականացվող կրթական, առողջապահական, սոցիալ-հոգեբանական, տնտեսական և ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնում իրականացվող կրթական ծրագրեր: «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվել են. շուրջ 1,8 մլրդ դրամ ընդհանուր արժողությամբ ծրագրեր: «Փամբակի տրանսպորտային ցանցի զարգացում» ծրագիրը՝ 82,0 մլն դրամ արժողությամբ, բարեկարգվելու են տրանսպորտային ենթակառուցվածքները, ինչպես նաև գործարկվելու է համապատասխան բջջային հավելված, ՀՀ ԿԳՄՍ նախարարության, ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության և «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի միջև կնքված փոխըմբռնման հուշագրի շրջանակներում «Անգլախոս գյուղական համայնքներ» ծրագիրը, վերանորոգվել է Դեբետի համայնքապետարանի շենքը, բացվել է «Հայփոստի» մասնաճյուղ և գեղեցկության սրահ, կառուցվել է այցելուների կենտրոնը, որը զբոսաշրջիկներին ոչ միայն կապահովի անհրաժեշտ տեղեկատվությամբ, այլև կառաջարկի բազմազան ծառայություններ՝ ներառյալ հուշանվերների խանութ ու փոքրիկ սննդի կետ, մինչև 2023թ.-ի աշնանն իր դռները կբացի ՔՈԱՖ ՍՄԱՐԹ համագումարների կենտրոնը, գարնանն իր դռները կբացի Դսեղի ՍՄԱՐԹ առողջության կենտրոնը ներդրումների ծավալը 2022թ. կազմել է 168,0 մլն դրամ, արդյունքում 16 բնակավայրերի ապահովելով բարձրորակ առողջապահական ծառայություններով, նոր ուսումնական տարին 150-ից ավել աշակերտների համար կմեկնարկի Դեբետի բոլորովին նոր դպրոցում, որը նոր ոգեշնչող կրթական միջավայրի հետ մեկտեղ կապահովի նաև 21-րդ դարի պահանջներին համապատասխան կրթակարգ, իրականացվել է «Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայության ներդրում» ծրագիրը. ձեռք է բերվել աղբատար մեքենա:

❖ Լոռու մարզպետարանում կայացավ Հայաստանում Եվրոպական Միության Էրազմուս+ ծրագրի տեղեկատվական հանդիպումը: Էրազմուս+-ը ԵՄ ծրագիր է կրթության, վերապատրաստման, երիտասարդության և սպորտի զարգացման վերաբերյալ: Ներկաները մանրամասն ծանոթացան ծրագրի 2023 թվականի հնարավորություններին, մասնակցության պայմաններին, ինչպես նաև ԵՄ և տարածաշրջանի գործընկերների հետ համագործակցության հնարավորություններին:

- Լոռու մարզպետարանի և ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող և Ավստրիական զարգացման գործակալության կողմից համաֆինանսավորվող «Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնությունը Հայաստանում» ծրագրի հետ համագործակցության շրջանակներում Լոռու մարզի համար ձեռք են բերվել գյուղատնտեսական անօդաչու թռչող սարքեր և լրացուցիչ սարքավորումներ: Անօդաչու թռչող սարքը, հիմնականում դեղանյութի ցողման միջոցով, Լոռու մարզում պայքարելու է բույսերի հիվանդությունների ու վնասատուների դեմ, ժամանակակից գյուղատնտեսական տեխնոլոգիաների կիրառման միջոցով բարելավելու է մշակաբույսերի արտադրողականությունը՝ պայքար տանելով մոլախոտերի դեմ, կատարելով բույսերի պաշտպանություն և հողի պարարտացում:
- Լոռու մարզպետարանի և «Դիակոնիա» հիմնադրամի միջև 2022թ-ին կնքվեց համագործակցության հուշագիր: Ստորագրելով հուշագիրը՝ կողմերը փոխադարձ գործակցության նոր նշաձող սահմանեցին:

  Հիմնադրամի կողմից մարզում իրականացվել են մի շարք սոցիալական և գյուղատնտեսական ծրագրեր, այդ թվում՝
  - ✓ Կորնգանի, կտավատի, աշնանացան ցորենի մշակություն Սպիտակի տարածաշրջանում,
  - ✓ Աջակցություն 2020թ.-ի Արցախ-ադրբեջանական պատերազմից տուժած ընտանիքներին,
  - ✓ Կար ու ձևի ուսուցում «Դիակոնիայի» կողմից հիմնված «Հույսի Շող» կարի արտադրամասում,
  - ✓ Սոցիալական, սոցիալ- հոգեբանական բազմաբնույթ աջակցություն աջակցություն:
- «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության «Արամազդ» սոցիալական տնտեսության և զբաղվածության զարգացման ծրագրի շրջանակներում նախատեսվում է Ալավերդի համայնքում խթանել ՄԿՈՒ ոլորտում սոցիալական ձեռնարկատիրության զարգացումը, որն իր հերթին մեծ հնարավորություններ կստեղծի զբաղվածության ոլորտում որոշակի խնդիրների լուծմանը: Ծրագրի շրջանակում նախատեսվում է ֆինանսավորել միջոլորտային սոցիալական ձեռնարկատիրական նախաձեռնություններ, որի արդյունքում ՄԿՈՒ հաստատությունները ձեռք կբերեն հնարավորություն եկամուտ գեներացնելու կրթական որակի բարելավման և զբաղվածության խնդիրների լուծմանն աջակցելու համար:

  Այնուհետև ծրագրի շրջանակում հնարավորություն կստեղծվի գործնականում փորձարկելու մոդելների արդյունավետությունը, որի վերջնանպատակն է աջակցել Հայաստանում գործող ձեռնարկատիրական համակարգի խթանմանը որակյալ մասնագիտական կրթական համակարգ ունենալու համար:

  «Աջակցություն հակամարտությունից տուժած տնային տնտեսությունների վերականգնմանը» ծրագրի շրջանակներում Հայկական Կարիտասի կողմից իրականացվել է.
  - ✓ Թվով 150 ընտանիք ստացել է սոցիալական աշխատանքի ծառայություններ, որի արդյունքում, ըստ առաջնային կարիքի, ուղղորդվել են համապատասխան ծառայություններ մատուցող պետական և ոչ պետական կառույցներ,
  - ✓ Թվով 75 տնային տնտեսությունների տրամադրվել են արտադրական ակտիվներ կենսապայմանների առաջնային ապահովման համար,
  - ✓ Թվով 32 շահառուների տրամադրվել է բիզնես խորհրդատվություն մենթորի կողմից,
  - ✓ Թվով 14 տնային տնտեսություններին տրամադրվել են բիզնես միկրո գրանտեր:
- Միջազգային կառույցների հետ գործունեության շրջանակներում այս տարի Ֆրանկոֆոն ռեգիոնների միջազգային ասոցիացիայի հետ համագործակցության շնորհիվ կայքի փետրվար ամսվա տարածաշրջանային կիզակետը Լոռու մարզն է: Վերոնշյալի շնորհիվ ապահովվում է մարզի տեսանելիությունը ֆրանսախոս համագործակից տարածաշրջաններում:

- Հարաբերություններն այս տարի առավել ակտիվ են մեկ այլ համագործակից կառույցի հետ՝ Եվրոպական ռեգիոնների ասսոցիացիա, պայմանավորվածություններ են ձեռք բերվել առավել ակտիվորեն մասնակցելու ԵՄ-ի կողմից իրականացվող ծրագրերին և ավելի ճանաչել դարձնել Լոռին անդամ երկրների շրջանում:
- Լոռու մարզի համագործակից ՊԱԿԱ ռեգիոնի հետ համագործակցության շնորհիվ Օ տեղ դը Պրովանս զբոսաշրջային կենտրոնի և Աֆրատ կազմակերպության հետ համատեղ պատրաստվել են զբոսաշրջային գրքույկ և տեսահոլովակ:
- «Աստղիկ» բարեգործական հիմնադրամ կողմից 2022թ իրականացվել են շուրջ 147,3 մլն. դրամ արժողությամբ բազմաոլորտ ծրագրեր մարզի մի շարք համայնքներում:
    - ✓ Սոցիալական աջակցություն անապահով ընտանիքներին հագուստ, վառելիք, սննդի քարտեր, գրենական պիտույքներ- 89,0 մլն դրամ
    - ✓ Կարի մեքենաներ և հումք (կանանց համար)- 7,4 մլն դրամ
    - ✓ Ջերմատներ անապահով ընտանիքների համար -7,9 մլն դրամ
    - ✓ Մեղվաբուծական ծրագրեր հաշմանդամ երիտասարդներին- 1,6 մլն դրամ
    - ✓ Հիդրոպոնիկ ջերմատուն և 1 հա հակակարկտային ցանց Հարթագյուղի ագրոկենտրոնի համար- 17,0 մլն դրամ
    - ✓ Լեռնավան և Ջրաշեն համայնքներում 40 հա ցանքատարածությունների մշակում (առվույտ, ոսպ, հաճար)- 8,4 մլն դրամ
    - ✓ Գյողտեխնիկայի ձեռքբերում -16,0 մլն դրամ
- Շարունակական բնույթ են կրում «ԱՄՔՈՐ» Հայաստան ԲՀ-ի կողմից մարզում իրականացվող ծրագրերը, այդ թվում.
    - ✓ Առողջապահական ծրագրեր,
    - ✓ Պարենային աջակցություն սոցիալապես անապահով երեխաներին և տարեցներին,
    - ✓ Կենսապայմանների բարելավում թիրախ համայնքներում (Ուրասար, Կաթնաղբյուր):

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐ

Լրատվություն

- Հաշվետու ժամանակահատվածում պատրաստվել է 350 տեղեկատվական նյութ, որոնք տեղադրվել են մարզպետարանի lori.mtad.am պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում:
- Պատրաստվել է ընդհանուր թվով 59 տեսանյութ: Սահմանված կարգով կատարվել է լրագրողների հավատարմագրում:
- 2022թ. ընթացքում ստացվել է մարզպետին և կառուցվածքային ստորաբաժանումներին ուղղված 41 գրավոր և շուրջ 50 բանավոր հարցում, որոնց տրվել են հիմնավոր պատասխաններ՝ օրենքով սահմանված ժամկետների մեջ: Կազմակերպվել է մարզպետի թվով 1 մամլո ասուլիս, շուրջ 80 հարցազրույց և ճեպազրույց:
- Հաշվետու ժամանակահատվածում Լոռու մարզպետարանը սերտորեն համագործակցել է հասարակական կազմակերպությունների հետ, այդ թվում՝ ազգային փոքրամասնությունները ներկայացնող: Լոռու մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի

բաժնի նախաձեռնությամբ ձևավորվել է ՀՀ Լոռու մարզպետին կից հասարակական կազմակերպություններից և մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչներից կազմված աշխատանքային խումբ, որի նպատակն է սերտ գործակցության նոր հարթակ ձևավորել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և մարզպետարանի միջև, քննարկել քաղաքացիական հասարակությանը մտահոգող տարաբնույթ խնդիրներ, առավել սերտ կապ ապահովել քաղաքացիական հասարակության և կառավարության միջև: Խումբը տարվա ընթացքում գումարել է 5 նիստ: Խմբի նախաձեռնությամբ և ջանքերով դեկտեմբերի 5-ին՝ Կամավորների միջազգային օրը, կազմակերպվել է հանդիսավոր, մեծամասշտաբ միջոցառում՝ «Կամավորությունը կփրկի աշխարհը» խորագրով:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

❖ Լոռու մարզային փրկարարական վարչությունը ամբողջությամբ և ժամանակին է կատարել 2022 թվականի ընթացքում «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2022 թվականի հիմնական միջոցառումների պլան»-ով նախատեսված միջոցառումները, վերադասի կողմից արձակված հրամանները, հրահանգները և հանձնարարականները, ինչպես նաև լրացուցիչ պահանջվող միջոցառումները:

❖ Մշակվել և սահմանված կարգով մարզպետի հաստատմանն է ներկայացվել Լոռու մարզի տարածքում 2022թ. ընթացքում հնարավոր ջրհեղեղների հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման մասին, որոշման նախագիծը հավելվածների հետ միասին, որը հաստատվել է 2022թ. հունվարի 13-ի թիվ 28-Ա որոշմամբ:

2022 թվականի ընթացքում

❖ Լոռու մարզային փրկարարական վարչության կողմից սպասարկվել են արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների առաջացման վերաբերյալ 1287 ահազանգ, որոնցից՝ 671-ը – տեխնածին, 81-ը – տարերային, 535-ը – սոցիալ - կենցաղային և այլ բնույթի դեպքեր:

Արտակարգ դեպքերի ու պատահարների հետևանքով զոհվել են 62, վիրավորվել 814 մարդ: Նյութական վնասի չափը կազմել է 74.878.200 դրամ:



2021թ.-ի ընթացքում ԼՄՓ վարչություն հաղորդագրություններ են ստացվել մարզում գրանցված 1324 արտակարգ դեպքերի և պատահարների վերաբերյալ, որոնցից՝ 552-ը - տեխնածին, 67-ը - տարերային և 705-ը - սոցիալ-կենցաղային և այլ բնույթի դեպքեր:

Զոհվել են 47, վիրավորվել 869 մարդ: Նյութական վնասը կազմել է 200.047.400 դրամ:

❖ 2021թ-ի համեմատությամբ ընդհանուր դեպքերը նվազել են 37-ով, ընդ որում 119-ով աճել են տեխնածին բնույթի, 14-ով տարերային բնույթի դեպքերը, իսկ 170-ով նվազել են սոցիալ-կենցաղային բնույթի դեպքերը: Զոհվածների թիվը աճել է 15-ով, վիրավորներինը՝ նվազել է 55-ով: 2021թ-ի նույն ժամանակահատվածի համեմատությամբ 125.169.200 դրամով նվազել է արտակարգ դեպքերի հետևանքով առաջացած նյութական վնասի չափը:

❖ Դեպքերի արձագանքման և հետևանքների վերացման նպատակով ՀՀ ԱԻՆ ՓԾ Լոռու մարզային փրկարարական վարչության ստորաբաժանումների կողմից իրականացվել է՝ 2205 ելք (2021թ.՝ 2167), այդ թվում՝ հրդեհների - 600 (2021թ.՝ 473), վթարների և պատահարների - 395 (2021թ.՝ 358), կեղծ կանչի 39 (2021թ.՝ 32), կենցաղային օգնության - 215 (2021թ.՝ 215), այլ մեկնումներ - 956 (2021թ.՝ 1089):

❖ Հաշվետու ժամանակաշրջանում մարզի բնակչության պաշտպանության համակարգի օպերատիվ նախապատրաստման ուղղությամբ պլանավորվել և անց են կացվել՝

❖ 12 շտաբային, 2 ցուցադրական, 32 հատուկ տակտիկական ուսումնավարժություններ և 2 օբյեկտային վարժանքներ,

❖ Լոռու մարզի թվով 16 հանրակրթական դպրոցներում անց են կացվել դասախոսություններ և սեմինար-վարժանքներ՝ «Մարտի 1-ը քաղաքացիական պաշտպանության համաշխարհային օրն է», «Բնակչության գործողությունները երկրաշարժից առաջ, երկրաշարժի ժամանակ և դրանից հետո» և այլ թեմաներով:

❖ ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 22-ի «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու և ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 30-ի №34-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» № 46-Ն որոշման համաձայն մշակված և ՀՀ Լոռու մարզպետի կողմից 29.12.2021թ-ին հաստատված պլանի՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում 2022թ. ուսումնական տարում ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի, մարզի համայնքների և կազմակերպությունների ղեկավար աշխատողների և մասնագետների պատրաստման դասընթացներին, 2022թ-ի ընթացքում ուսուցման ծրագրով նախատեսված 41 ուսուցանվողներից փաստացի ուսուցում են անցել 36 մասնակիցներ

Կապի և ազդարարման համակարգ

Մարզում բնակչության ազդարարման համար անհրաժեշտ են 160 շչակներ, որից առկա են 73-ը, որոնք տեղադրված են 34 բնակավայրերում, 79 բնակավայրում առկա չեն շչակներ: Հատկապես շչակները բացակայում են Փամբակ, Լոռի Բերդ, Գյուլագարակ, Տաշիր խոշորացված համայնքների բնակավայրերում: Քաղաքային հբնակավայրերում ազդարարման խնդիրը գրեթե լուծված է, մնացել են գյուղական բնակավայրերը՝ բոլոր տարածաշրջաններում:

Կանխարգելիչ միջոցառումների իրականացում

❖ Աշխատանքներ են տարվել մարզի համայնքների և ուսումնական հաստատությունների հետ իրենց համայնքների և դպրոցների աղետների ռիսկի կառավարման պլանները մշակելու ուղղությամբ: Լոռու մարզի 16 համայնքների ԱՌԿ պլանները համաձայնեցվել և հաստատվել են: Մեթոդական օգնություն է ցուցաբերվել ուսումնական հաստատություններին՝ ԱՌՆ և ԱԻ պլանները մշակելու ուղղությամբ:

❖ Համայնքների կողմից ուսումնասիրվել և գնահատվել են գետերի հուների, հակահեղեղային կառույցների և սելավատարների վիճակը, աշխատանքներ են տարվել դրանք մաքրելու և վերանորոգելու ուղղությամբ:

❖ Ամենօրյա հսկողություն է սահմանվել գետերի ջրերի մակարդակի բարձրացման, օդի ջերմաստիճանի և ճնշման փոփոխությունների նկատմամբ: Կապված գարնանային վարարումների հետ Լոռու մարզի տարածքում դեպքեր չեն գրանցվել: Դեբեդի ջրավազանի գետերի հուների մակար-դակները և ելքերը մարզի դիտակետերում էականորեն չեն փոփոխվել:

❖ Լոռու մարզային փրկարարական վարչության ենթակա հրշեջ փրկարարական ջոկատների կողմից 2022թ. մայիս և հունիս ամիսներին իրականացրել են Լոռու մարզի վտանգավոր թվով 9 տեղամասերի հարկադիր քարաթափման աշխատանքներ՝ ընդհանուր 55.5 խորանարդ մետր ծավալով:

ԶՈՐԱԿՈՉ ԵՎ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

❖ Աջակցություն է ցուցաբերվել ՀՀ ՊՆ զորակոչային և զորահա¬վաքային համալրման ծառայության Լոռու մարզի տարածքային ստորաբաժանմանը, հատկապես պարտադիր զինվորական ծառայության զորակոչի իրականացման գործում: 2021թ. ձմեռային զորակոչի պետական առաջադրանքը կատարվել է 111 %-ով, 2022թ. ամառային զորակոչի պետական առաջադրանքը կատարվել է 103.0 %-ով, իսկ 2022թ. ձմեռային զորակոչը շարունակվում է: Ճշտումներ է կատարվել կցագրման աշխատանքների գործունեության ընթացքի վերաբերյալ: Աշխատանքներ է տարվել համայնքներում անձնակազմի և տեխնիկայի կցագրման աշխատանքների գործընթացը կարգավորելու ուղղությամբ:

❖ Ձմեռային և ամառային զորակոչերի ժամանակ համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու վերաբերյալ կազմակերպվել և կայացվել է ՀՀ Լոռու մարզային զորակոչային հանձնաժողովի նիստեր, տրվել են եզրակացություններ տարկետում տալու վերաբերյալ:



❖ Կառավարության համապատասխան մասնագետների հետ համատեղ աշխատանքներ է տարվել մարզի պլանների փոփոխման, ճշգրտման վերաբերյալ:

❖ Բարոյական, հոգեբանական, ֆինանսական և նյութական աջակցություն է ցուցաբերվել 44-օրյա պատերազմի ընթացքում և դրանից հետո տեղի ունեցած ընդհարումների, միջադեպերի, ինչպես նաև 2022թ. սեպտեմբերի 13-ին Հայաստանի Հանրապետության տարածք ադրբեջանական ագրեսիայի արդյունքում զոհված, անհայտ կորած, գերի ընկած և վիրավորված զինծառայողների ընտանիքներին:

❖ Իրականացվել է Լոռու մարզպետարանի անձնակազմի և Լոռու մարզի համայնքապետարանների աշխատակազմերի ամրագրման և ապաամրագրման գործընթացը:

❖ Պարբերաբար հսկողական և բացատրական աշխատանքներ են տարվել Լոռու մարզի տարածքում այլընտրանքային (3 ծառայող) աշխատանքային ծառայության և ծառայողների կարգապահության վերաբերյալ:

❖ Աջակցություն է ցուցաբերվել ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Լոռու մարզի տարածքային ստորաբաժանմանը՝ պահեստազորում չհաշվառված քաղաքացիների (աշխարհազորային) հետ պայմանագիր կնքելու գործընթացին:

ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱԴՐԵՐԻ ՀԵՏ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

❖ 2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ մարզպետարանում կա 112 հաստիք, որից 92-ը՝ քաղաքացիական ծառայողների հաստիքներն են, որից թափուր է 4-ը: 2 պաշտոններ ժամանակավոր (ֆիզ.արձակուրդ) թափուր են:

❖ 2022 թվականին ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմում թափուր պաշտոններ զբաղեցնելու համար հայտարարվել և անց է կացվել 6 ներքին և 4 արտաքին մրցույթներ, ընդհանուր դիմորդների քանակը՝ 20, մասնակիցների քանակը 14, իսկ քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու համար հայտարարվել և անց է կացվել 2 մրցույթ:

❖ Վերապատրաստվել են 7 քաղաքացիական ծառայողներ

❖ 2022 թվականի ընթացքում աշխատանքից ազատվել են 6 քաղծառայողներ, ընդունվել 4-ը: Քաղաքացիական ծառայության մասով 1 քաղծառայողի նկատմամբ կիրառվել է խիստ կարգապահական տույժ՝ «ծառայության դադարեցում», իսկ խրախուսանքներ չեն կիրառվել:

2022թ-ին նախապատրաստվել են՝

- Լոռու մարզպետի 910 որոշումների նախագծեր,
- Լոռու մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 1405 հրամանների նախագծեր,
- Մրցույթով անցած 33 դպրոցի տնօրենների պայմանագրերի նախագծերը,
- 47 գրությունների նախագծեր,
- Աշխատակիցների 11 տեղեկանքներ
- 22 քաղաքացիների դիմումների պատասխանների նախագծեր:
- 1250 գործուղման վկայականներ
- Ամփոփվել է 2022թ-ի աշխատակիցների կիսամյակային և տարեկան կատարողականների գնահատումը:

ՄԱՐԶՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ 2022Թ. ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 2022թ. ընթացքում մարզպետի կողմից ընդունվել է 930 որոշում, որոնց պատճենները յուրաքանչյուր ամիս ներկայացվել են ՀՀ փոխվարչապետին՝ ՀՀ օրենսդրությանը դրանց համապատասխանությունը ստուգելու նպատակով: ՀՀ օրենսդրության խախտումների հիմնավորմամբ հետ վերադարձված իրավական ակտեր չունենք:

- Մարզպետարանի գլխավոր քարտուղարի կողմից 2022թ. ընթացքում արձակվել է 1467 հրաման՝ հիմնականում կադրային հարցերի վերաբերյալ /արձակուրդներ, գործուղումներ/:
- 2022թ. ընթացքում կազմվել է 244 գրություն, որոնցից՝ 20 դիմումի պատասխան և 224 գրություն:
- 2022թ. իրավական և մասնագիտական հսկողություն է իրականացվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հրամանով հաստատված աշխատանքային ծրագրով նախատեսված 4 համայնքներում /Լոռի Բերդ, Շնող, Ստեփանավան, Սպիտակ/, որի արդյունքում կազմվել են արձանագրություններ: Հայտնաբերված թերությունների ու խախտումների վերացման նպատակով համայնքների ղեկավարներին տրվել են մեթոդական ցուցումներ: Հայտնաբերված թերությունների վերացման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների մասին պարբերաբար ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել ամփոփ տեղեկատվություն: Ալավերդի համայնքում նախատեսված իրավական և մասնագիտական հսկողությունը չի իրականացվել համայնքի խոշորացման նպատակով իրականացված ՏԻՄ ընտրությունների պատճառով և ՏԿԵ նախարարի համաձայնությամբ կիրականացվի 2023 թվականին:
- 2023թ. ընթացքում նախատեսվում է իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնել մարզի 2 համայնքներում (Գյուլագարակ, Ալավերդի):
- Մշտապես մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնին տրամադրվում է տեղեկատվություն մարզպետարանի կայքում տեղադրելու համար (մարզպետի որոշումներ, գլխավոր քարտուղարի հրամաններ, իրավական և մասնագիտական հսկողության արդյունքում լրացված հարցաշարեր և կազմված արձանագրություններ, վճիռներ, այլ տեղեկատվություն):

❖ Մարզպետարանը որպես երրորդ անձ ներգրավված է մի շարք դատական գործերում, որոնք վերաբերվում են երկրաշարժի հետևանքով բնակարան կորցրած ընտանիքների՝ բնակարանի հերթացուցակներում ընդգրկվելու հարցերին: Մարզպետարանը ներգրավված է նաև մի շարք այլ դատական գործերում, որոնցում հանդիսանում է հայցվոր կամ պատասխանող կողմ (աշխատանքային վեճեր):

2022թ. ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԱԾ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

❖ Լոռու մարզպետարանում մուտք է արվել շուրջ՝ 24984 (պաշտոնական և ոչ պաշտոնական գրություններ, հանձնարարականներ, դիմումներ և այլն) գրություններ, ընթացք տրված կամ առաքված գրությունների քանակը կազմում է ավելի քան թվով 18520 գրություն:

❖ Mulberry համակարգ է մուտքագրվել 21392 պաշտոնական գրություն, որից 3520-ը՝ հսկողական գրություններ են: Դրանցից 3054 հանձնարարականի պատասխանվել է սահմանված կարգով և ժամկետներում, մնացած հանձնարարականների կատարումը ընթացքի մեջ է, վերահսկողությունը կատարվում է սահմանված կարգով: Հաշվետու տարվա ընթացքում չպատասխանված կամ ուշացած գրություններ առկա չեն:

❖ Առցանց համակարգով և առձեռն եղանակով մարզպետարան է մուտք եղել շուրջ 5863 դիմում, բողոք, առաջարկություն, տեղեկատվական հարցում, որոնցից 850–ը ստացվել են Նախագահի աշխատակազմից, Ազգային ժողովից, ՀՀ Վարչապետի աշխատակազմից, ՀՀ նախարարություններից և գերատեսչություններից:

❖ Լոռու մարզպետարան տարբեր եղանակներով, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններից մուտքագրվել է շուրջ 18456 գրություն, որոնց տրվել է համապատասխան ընթացք՝ սահմանված կարգի պահպանմամբ:

❖ Իրականացվել է Լոռու մարզպետի մոտ կայացած թվով 6 խորհրդակցությունների արձանագրում, հանձնարարականների առաքում ըստ հասցեատերերի և այլն:

❖ Կայացել է Լոռու մարզի խորհրդի նիստ. արձանագրությունը կազմվել և առաքվել է ըստ հասցեատերերի, ներկայացված առաջարկությունները և հանձնարարականները առաքվել և կատարման վերաբերյալ իրականացվել է վերահսկողություն ըստ սահմանված կարգի:

❖ «Արխիվային գործի մասին» օրենքի և ՀՀ Լոռու մարզպետարանի ներքին գործավարության կարգին համաձայն՝ իրականացվել է փաստաթղթերի և անձնական գործերի պատճենահանում և առաքումների կազմակերպում, ինչպես նաև մրցույթների և ատեստավորումների փաստաթղթերի արխիվացում, սուրհանդակային և հատուկ կապի ծառայության սպասարկում:

❖ Համաձայն «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ Կառավարության համապատասխան որոշումների և այլ իրավական ակտերի պահանջների, ինչպես նաև տրված հանձնարարականների իրականացվել է Լոռու մարզպետարանի գաղտնի գործավարությունը: Այս ուղղությամբ ուշացումներ կամ չկատարված հանձնարարականներ չկան, վերահսկողությունը իրականացվում է սահմանված կարգով:

❖ Անհրաժեշտ միջոցառումներ են ձեռնարկվել աշխատակազմի ծրագրատեխնիկական և համակարգչային տեխնիկական սպասարկումների աշխատանքների իրականացման ուղղությամբ,

մասնավորապես, պարբերաբար և սահմանված ժամկետներում թարմացվել են հակավիրուսային ծրագրերը, ցանցի ընդլայման աշխատանքները՝ կապված նոր հաստիքների և աշխատատեղերի փոփոխությունների հետ: Անհրաժեշտ աշխատանքային պայմաններ են ստեղծվել մարզպետարանի աշխատակիցների համար, իրականացվել է համակարգչային տեխնիկայի ընթացիկ վերանորոգում և ծրագրային վերափոխումներ:

❖ Քարտուղարության վարչատնտեսական բաժնի միջոցով իրականացվել է աշխատակազմի վարչական համալիրի շահագործման աշխատանքներ, աշխատակազմի գույքի ձեռքբերման, պահպանման /անհրաժեշտության և հնարավորության դեպքում նաև վերանորոգման/ աշխատանքներ, աշխատակազմի հեռախոսակապի, կապի, ջեռուցման և այլ ենթակառուցվածքների բնականոն աշխատանքի ապահովման, մարզպետարանի պաշտոնատար անձանց մասնակցությամբ անցկացվող արարողակարգային և այլ միջոցառումների նախապատրաստման և կազմակերպման ապահովման աշխատանքների իրականացում:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ **Ա. Խաչատրյան**